

327


UuGentiqueyue

2751

2751

ZpueAg-

u6p



1894

162

5266

35
5-27 ՆԻԵՐ

Գրեցի

555

ՀԱՅ ՕՐԻՈՐԴՆԵՐԻՆ



8939

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԶԻ



ԲԱՐՏԱՆԻՉՆԵՐԻՑ

2011

2003

25707-м-3

95347-56



~~44~~ 1917/10

Ինքնագիր
անորոշ անվանում

Բաց Կ. Գ. Դ. Ե.

Կ. Գ. Դ. Ե.

Ինքնագիր
2

Լուսինյան Կ.

Հիւանդ Կեր.

1894. Ապրիլ 15.

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ.

Հասարակական արմատացած բազմա-
թիւ ախտերի դէմ մաքառել և նոցա,
որքան կարելի է, հիմն ի վեր տա-
պալել, դա այժմեան փրկարար գի-
տութեան զբաղեցնող խնդիրներից
մէկն է :

Կուել անդադրում մարդկութեան
կամ ազգի թէ ոգեկան և թէ ֆիզիքե-
քական ուժերը շլատող, քայքայող
ախտերի դէմ, դժբա իւրաքանչիւր ազ-
ազգի մտածող, հոգատար դասակարգի
առօրյա զբաղմունքներից մէկն է
այսօր :

Գիտութեան բոլոր ոյժը այսօր
ուղղւած է իսկապէս մարդկանց
փչացած, նեխւած, միանգամայն
ձկնափոխւած բարքերը բարեւալել,
նոցա, դուրս հանելով այդ ընկած
դրութիւնից, դնել մի այնպիսի
փրկարար ճանապարհի վերայ, որը
տանում է դէպի անհատի, հետեւա-
պէս և հասարակութեան երջանկու-
թիւնը :

Աւելորդ կը լինի մեզ մի առ-
մի թւել թէ ինչպիսի ախտեր են
նեղում ներկայումս մարդկութեանը
ընդհանրապէս, կամ որ ազգի մէջ

դորա որ տեսակներն են տարած-
ւած, և վերջապէս, որոնք են այն
աչքի ընկնող ականաւոր գործիչ
ները, որոնք իրանց ամբողջ զի-
րութիւնը ուղղել են դէպի հաս-
րակութեան բարձրը լաւացնող, փր-
կող միջոցների գործադրութիւնը:

Բաւական է յիշել միայն մեր
հասարակութիւնը իւր արդի դրու-
թեամբ և քննել նորան ամեն կողմից
հետազոտել խիստ վիրաբուժական մի-
ջոցներով. ձեռքում սուր վիրահայ-
տը մօտենալ անխնայ և անդամահատել
նորան, քննել նորան ուշի ուշով,
զննել նորա մարմնի խաւերի իւրա-
քանչիւր մասը, իւրաքանչիւր թէւը
և տեսնել, արդեոք կարելի է գտնել
նորանում մի որևէ առողջ կտոր:

Հաւատացած եղեք հետևանքը խիստ
տխուր, աննախանձելի և գրեթէ յու-
սահատական կը լինի... ճշմարիտ է.
դուք կը գտնեք նրանում և շատ
առողջ մասեր, բայց հիւանդոտները
փտած, փչացած նեխածները կը գե-
րակշռեն առողջներին, իսկ մի մառ-
մին, որը կազմւած է անթիւ ոչ առ-
ողջ, հիւանդոտ անդամներից, վառ-
առաղջ, փտած մասերից, կարող է ար-
դեօք կեանքի ուղին կանոնաւոր շա-
րունակել...

Բժշկականութիւնը այդ հարցին
բացասական պատասխան է տալիս:
Նույն ուղղութիւնն է բռնել այ-
ժմ մեզանում գիտութիւնը, թէև
ոչ այն լայն ծաւալով, ինչպէս
այդ կայուրիոջ, մեզանից զարգաց-
մամբ բարձր, ազգերի մէջ, նոյն
խնդիրն է զբաղեցնում այժմ մեր
հասկացող, հասարակութեան ցաւեր-
ով տանջւող, անձնաւորութիւնների
աչդ իսկ տեսակ քայքայող ախտերի
դէմ է մաքառում այժմ մեր ինտե-
լիգենցիան իւր ամենաթոյլ անդա-
մից սկսած մինչև ամենաուժեղը.
և դոցանից իւրաքանչիւրից կէտ
նպատակին է հասկացնել հասարա-
կութեանը, ամբոխին իւր վտանգա-
վոր ուղղութիւնը, նորա երեսովը
տալ իւր թոյլ կողմերը, նորա աչ-
քի առաջ պատկերացնել այն տխուր
տեսարանները, որոնք առաջ են գա-
լիս հասարակական ընդհանրացած
կործանիչ ախտերից:

Այդ սրտաճմլիկ տեսարաններից
մէկը ահա մենք առաջարկում ենք
հասարակութեանը: Այդ պատկերը
բոլորովին իրական է, և վերցրած
հէնց իրա ժողովրդի միջից. այդ
փշաքաղող պատկերը ծնունդ է ժո-
ղովրդի անմտածած, չկշռած. քայլի,

խելացի դատողութիւնից սպրդնած
գործունեութեան:

Թէ ինչ տխուր հետեանքներ կար-
ող են յառաջ գալ անգագոյշ ամուս-
նութիւնից զոյգերը միավորվելուց,
այդ յայտնի է քիչ թէ շատ հասկա-
ցող, մտածող ամեն մի անհատի. և թէ
որքան ծանրակշիւ երկիւղածութեամբ
պէտք է մօտենալ ամուսնութեան սուրբ
սեամին, այդ պէտք է հասկանալ ամեն
մի մարդ. որ իրան հասարակութեան
սրտացաւ անդամ է համարում:

Իսկ այդ սուրբ վայրից ամուս-
նութեան սրբազան սեղանից, պէտք է
միանգամայն հեռու կենան այն ան-
ինք, որոնք տառապում են հոգեկան
ջղային և վեցեղական հիւանդութիւն-
ներով, որոնց կեանքը անց է կենում
մի ջարդ տանջանքների ու դառնու-
թիւնների մէջ, որոնք հեծում են
այդ տեսակ ժառանգական հիւանդութ-
թիւններով և որոնց սպասում է ան-
ողորմ մահի հատուկ երանգին, չար-
չարանքներով և ի վախճանը, որով գու-
ցէ վրայ է հասնելու շատ շուտ,
դեռ ևս կեանքի յույսերով և ի նոր
րաբողբոջ գարնան ժամանակ:

Այդպիսիները ամուսնանալով ի-
րենց անբուժելի հիվանդութիւնը,
ինչպէս մի սուրբ աւանդ, կաւան-
դեն իրենց զաւակներին, սոքա փոխա-

դարձաբար երկրորդ սերունդին
և այն ամուսնութեան սուրբ կապի
միջոցով: Եւ ահա մենք կուենանք
մի սերունդ, կարճատև կեանքով,
որոնք վարակած վտանգաւոր հի-
ւանդութեամբ, անուշադուհալ միան-
գամայն համայնական գործունեու-
թեան, աշխարհ են գազիս կարծես
միայն նրա համար, որ իւրաքանչիւր
տանջանքի վայրկեանին անէքք կա-
րդան իրանց հիւանդոտ ճնողներին
նորա, այդ փոքրիկ արարածները,
միմեանց յետեից, երկար տանջանք
ներից յատույ, կը թաւամեն. ինչ-
պէս լոյսից ու ջերմութիւնից
զուրկ ճաղիկ, ինչպէս անժամանակ
չբացւած վարդի կոկոն, որի արմա-
տից սննդադար ույժը, կենսական
հիւթը անկուշտ որթերն են լափոմ:

Այդպիսիները ամուսնի պիտի մե-
ռնեն, եթէ չեն ուզում դաւաճանել
դէպի հասարակութիւնն ունեցած
իրենց սուրբ պարտականութիւնները,
պարտականութիւն, որը իմ կարծիք-
ով, բարձր է ամեն որբութիւնից.

Թարգմանելով ֆլորենցիայի հա-
մալսարանի Անտոպոլոգիայի պրոֆ-
եսոր ՊԱՕԼ ՄԱՆՏԵԳՍՏԻՆԻ, , հիւ-
անդ Սէր, , առողջապահական վէպը,
մեր նպատակն է եղել հայ հասարա-
կութեան ուշադրութիւնը գրաւել

այն սրտաճմլիկ աղետների վերայ,
որ յառաջանում է հիւանդոտ /
/ ջղայիւն ու ոգեկան / անհատների
ամուսնանալուց տալ նրան մի թշա-
ւառ ընտանիքի պատկեր, որտեղ
տկար հօր հիւանդութեան թույնի
շնորհիւ, նրա յառաջացրած սեքսու-
րունդը, դեռ ևս ծաղիկ հասակում
ուժ թառամում է անողոք հիւան-
դութիւնից, որ պէսզի կարգաւով այս
դժբաղդ ամուսնութեան հետեանք-
ների ճշգրիտ նկարագիրը, զգու-
շանան ուրիշների թշվառութեան և
և վաղահաս մահուան պատճառ էի-
նելուց:

Ե. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ.

1893թ. 15 Նոյեմբերի
Աղաքսանդրապոլ.



I.

ԺԱՊԻ ՎԵՐԵՑ.

185...թվի յուլիսի 9-ին, առաւօտեան ժամ 11
ժամին, Սառաձիւմոսնաւահանգստում նստած
մի փոքրիկ շողենաւ, որը պէտք է հասցնէր ինձ
պոստային «Թէհլա» շողենաւին: Նա, լեցած
գոլորշիով և վերցրած խաբիսիով, անհամբեր
սպասում էր Բրաչիլեա և Րիօ-դը-լա-Պլազա
գնացող ճանապարհորդներին: Փոքրիկ շողենաւի
վրայ գտնուում էր մարդկանց խումբ՝ բազմա-
թիւն: Նա հազիւ կարողանում էի շարժել ամ-
բոխի մէջ: Ազգականները և բարեկամները
խմբւում էին գնացողների շուրջը, հանրա-
բնական, միմեանց ձեռք սեղմում և լալիս էին: Ինչ
զգացմունքներ անկէ չէին վրդաւորում այս խումբն
բազմութեանը: Որքան անկեղծ միշտ, տանջանք

և յոյս կար այստեղ: Եւ այս ամենը աշտաշտ-
տում էր բոլորովին ազատ: Ոչ ոք ամենափոքր
ուշադրութիւն անգամ չէր դարձնում այս ու
այն կողմ քնած նաւաստիների վերայ, որոնք
յոգեմէլ էին գիշերւայ հսկումից*): Քաղցր խո-
սակցութիւնները, դառն հառաչանքները, սի-
րային քչփչոցը, այս բոլորն անհետանում էին
ընդհանուր գլորդոցի և մեքենայի աղմուկի մէջ,
որին (մեքենային) ըստ երևոյթին, ամենէն չէր
շարժում այս բոլորի բանաստեղծութիւնը: Նրա
համար բոլորովին օտար էին մարդկային զգաց-
մունքների ամենաջերմ արտահայտումը և նա,
արձակելով ծովի սև քուլաներ, մաթեմատիքա-
կան ճշտութեամբ պտտումէր իւր անիւներով:

Այս աղմուկի և հրհռոցի (ТОЛКОТНЯ) մէջ,
ես գժարութեամբ գտայ մի խորրիկ վայր,
խարխսի շղթաներից և արկղներից կազմւած
բւերքի մէջ: Տեղաւորւելով աչգտեղ, սկսեցի
գիտել արը: Ես ցանկանում էի վերջին հրա-
հեշտս տալ եւրոպային, ուր թողնում էի խիստ
շատ մօտ և թանկագին բաներ ինձ համար: Ես
յրաժեշտ էի տալիս Ս. Միքայելի գմբէթին,

Պահպանութիւնից:

Անգլիային, որը շուտով պէտք է անհետանար
աչքիցս և, որը ես թողնելու էի մի քանի տարով:
Այն մարդը, որը սովոր է իւր ամբողջ կեան-
քը անցնել կանոնաւոր, օրէցօր, ժամէ ժամ,
բոլորէ առ բոլորէ, մի ուրիշ տեսակ դրութեան
մէջ է ընկնում, երբ իւր կեանքի սովորական
թելը ընդհատւում է և նա իրան յանձնում է
մի այնպիսի անկայուն, փոփոխող տարրի, որ-
պիսին է ջուրը: Նրա համար գժար է, բայց,
դրա հետ միասին, նրան գերում է մի տեսակ
սխորժելի վրդովմունք: Նա զւարճանում է այն
բոլորներով, երբ ստիպւած է թողնել ամենա-
թանկագին սովորութիւնները, իսկ մարդկանց,
հանգամանքների և առհասարակ, բոլոր չքա-
պատողների արագ փոփոխութիւնը ներկայացը-
նում է անհատին իրեն, իւր աչքերի առաջ:
Նա կարծես զգում է, թէ նոր ծնւել է մի
անհուն անապատում: Այս հազաւգիւտ վայր-
կեանքներում մարդս առանձին ուշադրութիւն
դիտում է և աչքի է անցնում այն ամ'
որ թողնում է. և անհետացող եր
պատկերը տպււորւում է նրա
տեանս յաւիտենից:

Նոյնը զգում էի և ես, այդ, ինձ համար ան-
 մոռանալի, առաւօտեան: Անկեղծ սիրով ես նա-
 ում էի դէպի ամիւր և ուղարկում էի վերջին
 հրաժեշտի ողջոյնս այդ մշուշի և քարածուխի
 երկրին, դեղեցիկ, կանաչադարձ դաշտերին և
 անթիւ ծխացող խրճիթներին, փոքրիկ մոխրա-
 գոյն տնակներին և, եկեղեցու պէս բարձր, գոր-
 ծարանների ծխնելոյցներին: Ես հրաժեշտ էի
 տալիս այն երկրին, ուր չէին լուում երաժշ-
 տութեան մեղեդիները, որովհետեւ երաժշտու-
 թիւնը պատահմամբ այդպէս ընկնելով, ան-
 կարող եղաւ հաշտել մեքենաների անընդ-
 հատ աղաղակի և ամբօխի վայրենի շփոթի հետ,
 և հեռացաւ ընդմիջտ: Ես հրաժեշտ էի տա-
 լիս այն երկրին, ուր մարդիկ թէև կոպիտ են,
 այց անխոնջ ու գործունեայ, ուր նոքա զբաղ-
 ւն այն ամենով, ինչ որ միայն պահան-
 յաբ և գիտութիւնը. այն երկրին,
 ուր անհատ ինքնուրոյն է, իւ-
 ր կատարելապէս ըմբռնումէ:
 անելով մտածմունքի մէջ, ես
 է ինչպէս մեր շողենաւը մօ-
 յին» և կապեց այդ հսկային,

որը կարծես խոնարհում էր մեզ իւր գերկը
 առնելու: Այժմ մեր շողենաւի բոլոր նաւաս-
 տիները պետքէ տեղափոխւէին մեծ նաւը: Սըր-
 տաճմլիկ տեսարան: Բայց ահա հասաւ վերջին
 րոպէն: Բարեկամները և ազգականները թող-
 նում էին «Թէհրան» և վերջին անգամ բաժան-
 ւում էին իրենց մտերիմներից: Ո՛րքան վիշտ
 և տանջանք կայ մարդկային կեանքի մէջ:
 Ի՞նչպէս թուրքում է սիրտը, գառնութեամբ
 ծնւած սպունգի այդ կտորը:

Պապիտանը և շողենաւի աստիճանաւորները
 խնդրում էին բարեկամներին և ազգականնե-
 րին շուտով հեռանալ շողենաւից, իսկ նաւաս-
 տիները ուղղակի հրում էին նոցա աստիճան-
 ներից ցած: Ուղեկցողները մի քանի քաջ հե-
 ուանում էին, բայց կրկին թաքուն յետ էին
 գալիս արկղների և պարանների լարիւթնիմաւը,
 նորից սկսում հրաժարական ուղջոյնը և ամուր
 դրկելով, համբուրւում էին վերջին անգամ:
 Իսկ «Թէհրան» աստիճանների վրայ կազմւեց
 մի ամբողջ շղթայ, ուղեկցողների ձեռքերից
 և մարմիններից, որոնք գործադրում էին գեր-
 մարդկային ոյժ միմեանցից դառնելու համար:

Այս շղթան երբեմն խորտակուում էր նաւաստիների սաստիկ ճնշումից և երբեմն էլ նորից միաւորուում: Վերջապէս անողոք զանգակը շարժւելու նշան տւեց և «Թէ՛հան», կարծես թէ զայրանալով տիրոջ քասօսից և անկարգութիւնից, առաջ շարժւեց և վերջ տւեց բաժանման դառն ըօսկէներին: Երկու՝ մեծութեամբ միմեանցից այգքան տարբեր և դեռ ևս իրար մօտ կանգնած շոգենաւերի վերայ բարձրացաւ թաշկինակների մի ամբողջ ամպ, ի նշան փոխադարձ ողջունի և միասին լսում էին հաղար ու մի արտասւալի հրաժեշտներ, սիրալի խօսքեր և բարի ցանկութիւններ:

Փոքր շոգենաւը մեզ ուղեկցեց մի փոքր տեղ: Արտասուքները, ճոճւող ձեռքերը և քնքոյշ հրաժարականները կարծես կրկնապատկուում էին նրա արագութեւնը և նա սահում էր այն կանաչ փրփրած ակոսի միջով, որ կազմում էր մեր շոգենաւը: Ի հարկէ առաջինը չէ կարող հասնել այս վերջինին, բայց միայն կարելի էր որոշել սիրելի դէմքերը, այդ խուռն բաժնութեան մէջ միայն սրտով կարելի էր գուշակել ծածանւող թաշկինակը: Թողուկը ուղեկ

ցում էր հսկային ապա պտոյտ անելով նա լետ դարձաւ: Մի անգամ ևս վերջին ձայնը խուլ կերպով լսեց, որը կորչում էր, ծովի յորձանքը պատառող, անիւների աղմուկի մէջ:

Թախիծը ինձ պատեց: Ես ընկալ մտածմունքի մէջ: Ճանապարհորդները, տւած հրամանի համաձայն, բաժանւեցին երկու խմբի. ոմանք՝ մեծամասնութիւնը, մնացին շոգենաւի ղեկի մօտ, իսկ միւսները գնացին ցուռկի կողմը: Առաջինները՝ խմբւելով ղեկի հէնց ծայրին, ոչ մի կերպ չէին կարողանում աչքերը հեռացնել դեռ ևս երեւցող երկրից: Նոքա, մինչև վերջին վայրկեանը, ագահաբար որսում էին ձայները և ներշնչում էին հայրենիքի քաղցրասիւք օդը, ուր թողնում էին իրանց անձնական «էփ» մեծ մասը: Դոքա իսկական տանջւողներ էին. նոցա համար դժւար էր հայրենի երկրից բաժանւել, ուր թողնում էին հօր գերեզմանը, կամ մանկան օրօրոցը և կամ այն կաղնին, որի հովանու տակ նոցա սիրով առաջին համբոյրի շրջապոյցն էր լսել. նոքա դառն ողբում և ցնցւելով կոտորում էին իրանց ձեռքերը: Իսկ շոգենաւի ցուռկի մօտ հաւաքւել էին երջաշիւք սէր:

նիկները: Նոցա շրթունքների վրայ խաղում էր ժպիտը՝ լի ուրախութիւնով և լուսով: Նոքա նայում էին հեռու, Ամերիկայի ուղղութեամբ, որին մօտենում էին անիւի իւրաքնչիւր պտույտով: Այնտեղ նոցա ծննդավայրն էր և դիտում էին նրան: Նոքա մտքով արգէն տեսնում էին իրանց տունը, լսում էին Բրազիլիայի և Բիո-դը-լա-Պլատայի նաւաստիների խօսակցութիւնը: Կարծես տեսնում էին նոցա, որոնք անհամբեր սպասում էին իրանց, տեսնում էին թէ ինչպէս նոքա ընդառաջ են վազում:

Սակայն կային և այնպիսիները, որոնք ամենեւին հայրենիք չունեն և կամ անիծում են նրան և համարձակ ընկնում են նոր երկրներ ոսկի, փառք և արեւածններ որոնելու: Նոքա իրանց յետեից թողնում են վիշտ, ձանձրոյթ և հիասթափութիւն: Եւ ծովի արծաթափայլ անհուն հեռաւորութիւնը, որ տարածում էլ նոցա դիմացը, պայծառ գոյնով նկարում էլ նոցա առաջ նոր վարդազոյն յոյսեր:

Ղեկի վրայի արտասուողները բաժանւած էին ցռուկի մօտ ուրախացողներից հազիւ մի քանի մետր հեռաւորութեամբ, բայց միևնոյն ժա-

մանակ դոցա մէջ կար մի անյատակ անդունդ, մարդկային սրտի մի ամբողջ պատմութիւն...

Իսկ ես, որ կարող էի զսպել սրտիս յուզմունքը, կարողանում էի ստիպել նրան լռել և կամ թող տալ նրան բաբախել խիստ և ուժգին, կանգնած էի խորասուզւած մտքերի մէջ. բայց շուտով ուշադրութիւնս գրաւեց մի ճանապարհորդ: Նա որոշ տարբերւում էր իւր գեղեցիկ և վեհ գէմքով սովորական հասարակ ամբօխից, որը կարելի է տեսնել ամեն տեղ, ուր կը ժողովին մի քանի մարդիկ:

Դա անկասկած անգլիացի էր չը նայելով սև մազերին և փայլուն (պսպղուն) աչքերին: Նորա անգլոսաքսոնական ծագումից լինելու պարզ տպացոյն էր նուրբ, վարդազոյն քիթը և յատկապէս ոչ գեղեցիկ, բայց համարձակ շրթունքները, որոնցով օժտւած են միմեայն անգլիացիք. այս շրթունքները, կարծես, ստեղծւած էին նրա համար, որ անվթար առաջնորդէին թէ իրան և թէ ուրիշներին. նոքա հանգչում էին երկաթեայ կղախի վրայ և, կարծես, որոնում էին մի լեռնաբան, այն պատճառով, որ աւելի համարձակ ոտք դնեն կեանքի աս-

պարիզում. անգլիացու շրթունքներին դրոշմը ած է հաստատակամութեան անխզելի և տոկուն գործունէութեան կնիքը:

Այս գեղեցիկ և կայտառ երիտասարդը ունէր նոյնպիսի շրթունքներ: Ես երբէք չէի տեսել ուրախութեան աւելի պարզ արտայայտութիւն այդպիսի մի գեղեցիկ գէմքի վրայ:

Նրա ուրախութիւնը վկայ էր մի ինչ որ անպատմելի բարձր յոյսի, որովհետեւ, նա, ի հարկէ եսական չէր, բայց և այնպէս իւր երջանկութիւնը չէր թաքցնում այն ժամանակ, երբ շուրջը բոլորը արտասուում և կսկծում էին:

Աջով թեթևակի լենւելով առաջաստակալի (peñ) պարանին, շոգենաւի հանդարտ օրորով կարծես հրճուում էր և ներքին աշխարհից անջատւելով, սլանում էր եթերում, յափշտակւած անմեկնելի ուրախութեամբ: Աչքերը լայն բացել էր, գէմքի վրայ փալլում էր ներքին ծանր լուզմունքը, կուրծքը անդադար բարձրանում և իջնում էր. նա աչքերով ուտում էր ծովը, որտեղից իւր երջանկութիւնն էր սպասում, և զգալով ծովային աղի և բուրիչ քամին իւր ուրախութիւնն արտայայտում էր հանդարտ և

խորը շնչառութեամբ: Երևի վաղուց իրան այդպէս չէր զգացել:

Ես դիմեցի սենեակս և զբաղւած էի շորերս կարգի բերելովը, երբ հնչեց նախաճաշի զանգակը. ես ամենից ուշ մօտեցայ սեղանին: Բարկութիւնս եկաւ, երբ չ'կարողացայ ուզածիս համաձայն հարեւան ընտրել և ստիպւած էի բաց տեղով բաւականանալ: Որքան մեծ էր զարմանքս, երբ տեղս սեղանի մէջ տեղը ընկաւ: Առաջին անգամ աչքիս ընկան երկու մարդիկ, որոնք երևի մի տեսակ հակակրօթիւն էին զգացել մէկմէկուց և իրանց մէջ դատարկ աթոռ էին թողել:

Տեղս բռնելով, նախ դիտեցի երկու հարևաններս, հետաքրքրւած այդպիսի բարոյական-էլէքտրական երևոյթով: Նոցանից մէկը, որը ինձ շատ ուրախացրեց նոյն, իմ ուշադրութիւնը գրաւող, անգլիացին էր. իսկ միւսը պառկանում էր այն մարդիկների թւին, որոնց կարելի է գեղեցիկ կերպով ուսումնասիրել մի ժամում: Եւ չիրաւի, նախաճաշից լետու ես իսկույն կարողացայ նրան մոյցնել իմ systema hominis-ի մէջ, այսպիսի համառօտ բնախօսական

որոշումով.

«Համբուզի վաճառական, 55 տարեկան, 32 առողջակազմ ատամներով և առողջ ստամոքսով, կարող է մարսել 320 ատամների աշխատութեան արդիւնքը. շէկ, կարմիր, հաստլիկ, պսպղուն: Նա շարունակ ծաղրում է, միշտ սոված է և նախաճաշի ու ճաշի մէջ եղած միջոցը երկար է համարում»:

Բայց ես չկարողացայ թափանցել Համբուզի ճարպէ զանգւածի հոգու մէջ ոչ միայն հէնց այդ օրը, այլ և մնացած ամբողջ ժամանակը, մինչև Բախես հասնելը: Որքան նրան քննեցի, ինչ կերպով ասես աշխատեցի ուսումնասիրել նրա բնաւորութիւնը, ուրիշ ոչինչ չգտայ նրա մէջ, բացի ճարպից և անսահման ինքնազոհութիւնից.

Այս պատճառով դիմեցի միւս հարեանիս: Բայց նա այդ օրը լուռ էր և ընկղմած էր անբացատրելի բաղդաւորութեան մէջ: Ես վախեցում էի խանգարել նորա հոգեկան այդ դրութիւնը: Նա շատ ցրւած էր, այնպէս որ երբ աղ խնդրեցի, ինձ գինի տւեց, երբ միւս հարեանը սօսւս (сочусь) խնդրեց, նա հաց տւեց:

Մի ինչ օր գերիվերոյ շփոթութիւն, որը յատուկ է միմիայն իսկական բաղդաւորներին, ինչպէս մի անթափանց գրահ գրկել էր նորան և անշատում էր շրջապատող աշխարհից:

Ճաշից յետոյ ծովը՝ սպառիկ արեկոծւեց և նաւորդները ցրւեցան իւրեանց խցերը, ազատւելու սարսափելի գեղից՝ ծովային հիւանդութիւնից: Իսկ ես մինչև գիշեր մնացի տախտակամածի վերայ և ուշադրութեամբ հետևում էի անգլիացուն, որը ամբողջ ժամանակ գրանւում էր ցուկի մօտ: Ես նկատեցի, թէ, ինչպէս նա, մի տեղի վրայ յառած աչքերով շարունակ նայում էր առաջ և ընդերկար պահպանում էր նույն անշարժ դիրքը. նա չէր կարողանում պոկ գալ այդտեղից. բայց երբեք թին աշխատում էր հեռանալ, բայց մի քանի քալ անելով, օրագլու էր դառնում և կրկին անթարթ նայում էր առաջը տարածւող իւր բաղդի հորիզոնին, որին գիշերային խաւարը նույն իսկ անզօր էր թաղցնել նրանից:

Երբեմն մարդուն տիրում է տենդային, մի տեսակ անընկճելի, յանկարծ բորբոքող հետաքրքրութիւն: Այդպէս էր և իմ, այդ երջանիկի

Հետ ծանօթանալու ցանկութիւնը, որը օժտուած էր անգլիացու բերանով և իտալացու գլխով: Նախադիպումը ինձ ասում էր, որ դա կը լինի իմ բարեկամը: Այդ ժամանակ ես 22 տարեկան էի և այդ երիտասարդութեան հասակում ինձ չափազանց գրաւում էր այն բոլորը, ինչ որ խորհրդաւոր և երևակայական էր:

Հետեւեալ օրը մինչև նախաճաշ ես արդէն գիտէի, որ այդ անգլիացու անունն է Վիլեամ Բ. և մանկական պարզամտութեամբ կարծում էի, թէ շատ բանի արդէն հասել եմ: Ինչ և ինչ. ո՛չ նախաճաշին, ո՛չ էլ նրանից յետոյ, այն ցանկալի ժամերին, որոնք յաճախ իրար են մօտեցնում ճանապարհորդներին, դարձնելով նոցա մի ընտանիք, ես չկարողացայ Վիլեամի հետ խօսքի բռնել: Զջմարիտն ասած, նա ճանապարհորդներից չէր խորշում, բայց և ինքը նոցա չէր գիմում. բոլոր հարցերին այնքան կցկտուր էր պատասխանում, որ ամենաշատ տաղտակցնող լիբբն անգամ ստիպւած կլինէր հեռանալ նրանից: Նա շարունակ ժրպտում էր, ինչպէս բոլոր երջանիկ մարդիկը, բայց խօսքերը սառչում էին նորա շրթունքների վրայ:

Երբեմն նրա բերնին կարելի էր նկատել սիգար, բայց չէր ծխում, ձեռքը գիրք էր առնում, բայց չէր կարդում. մի խօսքով նա խորասուզւած էր անվերջ երջանկութեան հեշտասէր ծովում:

Համարեա պատահմամբ ձեռքս ընկաւ գաղտնիքի բանալին, որը պատճառ էր այդպիսի բաղդի, և ես այս բանը չեմ համարում իբրև վարձ իմ ծառայութեան: Լիսաբօն հասանք յունիսի 14-ին և նոյն օրը երեկոյեան ճանապարհ ընկանք: Հետեւեալ օրը ես վերկացայ շատ վաղ և դուրս ելայ տախտակամածի վրայ առաւօտեան թարմ օդը շնչելու: Վիլեամը արդէն ոտքի վրայ էր և շրջում էր յետ ու առաջ, ձեռքը գրպանի մէջ:

Չուզենալով խանգարել նորա քաղցր միայնութիւնը, ես սկսեցի շրջել միւս կողմում առանց աչքերս նրանից հեռացնելու և սկսեցի ուսումնասիրել նրան: Յանկարծ նկատեցի, որ նա եռանդով թօթեց ձեռքը նման մի մարդու, որը աներկիւղ վճռում է մի որևէ գործ, և մօտենալով ղեկավարին, խօսեց նրա հետ:

Մղուսնալով անվստահութիւնս և քաղաքա-

վարութեան ամենատարրական կանոնները, ևս
ինքնաբերաբար մօտեցալ ղեկին և սկսեցի տ-
կանջ դնել այդ երկու անձնաւորութեանց լո-
սակցութեանը, որոնք ծնւել և սնւել էին
բոլորովին տարբեր պայմանների մէջ և մօտեցան
իրար միայն այդ բնուէին:

«Ուրեմն ձեր կարծիքով երկու օրից յետոյ
x Մադերայում կը լինինք»:

—Այո պարոն, միայն՝ եթէ ծովը կը լինի
հանդիստ այնպէս, ինչպէս այժմ:

«Նշանակում է 48 ժամից յետոյ Մադերա-
յում կը լինինք» ասաց Վիլեամը բարձրաձայն:
Լաւ, շատ բարի, բարեկամս, աւելացրեց նա,
ուրախութեամբ ձեռները արորելով և գէմքի
զւարթ այտայտոտութեամբ: Ուրեմն այդ կըդ-
գին կատարեալ դրախտ պէտք է լինի»:

Այժմ կասկածի ալիւս ոչինչ չ'կար, որ այդ
խորհրդաւոր մարդու անձնական «էս» մի
մասը գտնւում էր Մադերա կղզում:

Ահա թէ ինչու նրա սիրտը ուրախ բաբախում
էր մի ինչ որ կախարդիչ ոյժի ազդեցութեան
առիկ և նրա կրակոտ հայացքը, որ լսուած էր
ղեպի առաւօտեան մոխրագոյն մշուշը, երկար,

ժամանակ հոգեզմայլ ուրնում էր Մադերա
կղզին:

Երջանիկ մարդը միշտ ուշադրութիւն է
դարձնում ուրիշներին, մտածեցի ես, և մի
կողմ թողնելով ամօթխածութիւնը, ղեկավարի
փոխարէն Վիլեամի հարցին պատասխանեցի:
—Իրաւացի է. Մադերան կատարեալ դրախտ
է:

Վիլեամը արագ դէպ ինձ դարձաւ և միայն
այժմ նկատելով, ասաց:

«Միթէ այնտեղ եղել էք»:

—Ոչ, բայց մտադիր լինելով կեանքիս մի
մասը այնտեղ անցկացնել, ևս ուսումնասի-
րեցի այդ կղզին շատ մանրամասն, և այժմ
ինձ այնպէս է թւում թէ արդէն մի քանի
անգամ եղել եմ այնտեղ:

«Իրաւ, ուրեմն պատմեցէք մի բան այնտեղի
մասին»: Վիլեամը քաղաքավարութեամբ շնոր-
հակալութիւն մատուց այն նաւաստիին, որը
նրան բաղդաւորեցրեց, մօտեցաւ ինձ և մենք
սկսեցինք միասին զբօսնել: Հէնց զուտ այն
հանգամանքը, որ ես սովորականից մի
ժամ առաջ



նաւի ղեկի մօտ գտնուեցի, մօտեցրեց ինձ այն մարդուն, որի հետ ծանօթանալու այլ ևս յոյս չունէի: Ես պատմեցի նրան, որ բաւական ժամանակից ինձ տանջում էր թութախտը և այդ աչքի առաջ ունենալով մանրամասն ուսումնասիրեցի Մադերալի կլիման և, որ այդ դրախտը իմ առողջանալու վերջին յոյսն է կամ գերեզմանս՝ զարդարւած ծաղիկներով: Նոր բարեկամիս ուրախութեանը չափ չ'կար երբ լսեց, որ ես բժիշկ եմ և Մադերա կըղզու կլիմայի հետ ծանօթ: Եթէ նրա առողջ դէմքը չը լինէր, ապա ես կը կարծէի թէ նա գնում է Մադերա անձնական առողջութիւնը վերականգնելու. բայց պարզ էր, որ նա ամենեւին առողջանալու համար օգափոխութեան կարիք չունէր:

Նախաճաշի ժամանակ էր, բայց մենք դեռ խորասուզւած էինք Մադերալի մասին եղած խօսակցութեամբ. ես թափում էի իմ հաւաքած բոլոր տեղեկութիւնները այդ կղզու մասին և ուրախ էի, որ ուսումնասիրել էի:

Երկու օրւայ մէջ Վիլեամը իմ ամենամօտ բարեկամը դարձաւ. զբոսը չնայելով դրան, ես

չէի համարձակոււմ հարցնել նորա ճանապարհորդութեան նպատակը: Նրա մօտ ես զգում էի այն հոգեզմայլութիւնը, որը ինձ վրայ ազդում էին երկաթի կամք և զարգացած ինքնաճանաչութիւն ունեցող մարդիկ. ես զգում էի այն հզօր ազդեցութիւնը, որպիսին գործում էին բուռն կրքերը: Խնձ համար խորհրդաւոր մնաց Վիլեամի ներքին կեանքը, բայց ես համոզւած էի, որ նրա կերքը այն մրկայոյզ զգացմունքներից մէկն էր, որոնք ամբողջովին կլանում են մարդու սիրտը և, որոնք կարող են մի ժամւայ ընթացքում մարդուն դարձնել Աստուած կամ հրեշտակ, երանութեան դրախտ, կամ չարչարանքի դժոխք:



II.

ՄԻ ՕՐ ՄԵԳԵՐԵՅՈՒՄ

Երբոր Մադերա հասանք, Վիլեամի ուրախութիւնը կարծես սաստկացաւ: Առ հասարակ նա հիացած էր, խօսում էր կարճ նախադասութիւններով, անդադար նայում էր ժամացույցին, հարիւր անգամ առանձնանում էր իր խցիկի և դարձեալ դուրս էր գալիս տախտակամած վրայ: Նա ճաշում էր հասարակաց սեղանատանը, հաւանական է չէր կարող ասել թէ ում հետ կերաւ և խմեց: Նա ամբողջ գիշերը անցկացրեց տախտակամածի վրայ:

Յունիսի 17-ին՝ առաւօտեան բոլոր նաւորդները արդէն ոտքի էին կանգնած, բոլորը սրտատարով սպասում էին տեսնել երկիրը և շուտ աղատուել բոլորին լաղթող անվերջ ձանձրութից:

Վիլեամը նրանց մէջ չէր: Ես գիտէի նրա բացակայութեան արտաճառը, թէ և լաւ չէի ճանաչում նրան: Նա ևս, իհարկէ, ոչ պակաս լայն աչքերով որոնում էր պամաքը և բաւականանում էր նայելով իր սենեակի լուսամուտից, չնայելով, որ այդտեղից նրա առաջ աչն լայն հորիզոնը չէր արածւում, որպիսին տախտակամածից. բայց և այնպէս նա մենակ էր, չէր լսում անտարբեր ամբօխի զայրացնող պղծուկը և նրա գաղտնիքներին անձանթութեան դատարկաբանութիւնը չէր խանգարում նրա սրտի ներդաշնակութիւնը:

Առաջին տպաւորութեան տակ Մադերան, նայր դրախտը, աւելի շուտ նմանում էր Դանտեի դժոխքի մի սլակերին: Բազայլդի հսկայական սև կոյտերը, տձև, իրար վրայ թափթրված ժայռերը, անառնց բուսականութեան, առանց բնակութեան զառիվեր բարձրանում էին ծովից, նրանց ստորոտում աղմուկով ոչնչանում էին փրփրադէզ ալիքները: Ավին՝ այտեզ և այնտեզ երևում էին կղզեակներ նոյնպէս սև ինչպէս ժայռերը, առանց ծառերի և ծաղիկների, ալիքներից փոքրված և կրա-

կով կործանւած անյայտ աշխարհի աւերակների նման թափթփւած: Մենք անցանք Պօրտո-Սան-դօյի մօտից, ձախ կողմը թողնելով երեք կղզիներ, որոնց անախորժ և տխուր պատմութիւնը ցոյց է տալիս հէնց նոցա անունը „Deserta“ (ամալի) և շուտով հասանք բազալիդեայ ամենամեծ հրաւանդանին: Գարաջօյին: Դա դրախտի սահմանն էր:

Նոր էինք անցել Գարաջօ հրաւանդանը և ահա, ինչպէս մի ծաղկող այգուց, անուշ բուրմունքով փչեց թարմ ցամաքային քամին, իսկ մեր աչքերի առաջ բացւեց բոլոր դրախտը ծաղկահիւս, մշտածիծաղ, ծածկւած պարտէզներով և վիլլաներով, (ВИЛЛА) կանաչազարդ մարգագետիններով և Ֆանտաստիքական անտառներով, մի խօսքով դա իսկապէս ուրախ կեանքի թագաւորութիւնն էր: Մի քանի րոպէս՝ մենք արդէն կղզու գլխաւոր քաղաքի՝ Փունգալօյի դիմացն էինք, որը, ինչպէս օրօրոցում, պառկած էր շաքարեղէգների պլանտացիաների և կանաչ դաշտերի մէջ, շրջապատւած եւրոպական ծառերի մութ պուրակներով (роща) և բանանի հրաշալի անտառներով

Նրա չորս կողմը անթիթէատրոնի նման բարձրանում էին վիթխարի լեռները: Իսկ իբրեւ ընդհանուր շրջանակ այդ ամբողջ պատկերի, գուցէ և շատ լայն այդ սիրող դրախտի համար, ծառայում էին երկու անսահման տարածութիւններ՝ ոլկեանոտն ու երկնակամարը: Եւ իսկապէս դժւար էր վճռել, թէ այդ րոպէին որը նոցանից աւելի մօտէնում էր երկնագոյնին կամ արեւին:

Երեք անգամ ես անցել եմ Մադերայով և ամեն անգամ ես լսում էի, ինչպէս մշտական նաւորդներն անգամ հիացմամբ բացականչում էին. «Ո՛հ, երանի ես մի փոքրիկ խրճիթ ունենայի այդ դրախտում»: Կեսնքի մէջ ամենամեծ վայելչութիւններն ունենում են մի և նոյն բնաւորութիւնը, յանկարծակի երևալով նաքա մի ակնթարթում մեզ արդեցնում են, ինչպէս մատաղ կնոջ կրծքից ընկած մի ծաղիկ, իսկ դրանից յետոյ դարձեալ անյայտանում են և անկարող ենք նոցա կանգնեցնել կամ վերադարձնել: Նոքա հեռանում են մեզանից անսահման տիեզերքում ոչնչանալու, ինչպէս այն ամպերը, որոնք կորչում են երկնակամարի անհուն տարածութեան մէջ:

Հեռանդ սէր:

Մեր հիացմունքը երկար չտևեց: Հազարաւոր ձայների աղաղակները, փորթուգալական կոպիտ հայհոյանքների կարկուտը սթափեցրին մեզ: Այի դուրս եկողների համար առաջարկուում էին նաւակներ, որոնք աղմուկով և յանդերգնաբար խփւում էին «Թէմպայն»: Հազիւ, այդ ձայներից և աղմուկից ազատւած, ոտք էի դրել հաստատուն հողի վրայ, երբ ընկալ խիտ ամբոխի մէջ և ստիպւած էի ուժով ինձ համար ճանապարհ բանալ: Այդ տեղ կային կիսամերկ մարդիկ, որոնք ինձ առաջարկում էին ձիեր, պիջակ հագածներ, որոնք անւանում էին իրանց հիւրանոցը, ձեռնափայտ և կրուժեւօյ ծախողներ. տղամարդկանց և կանանց շրջմոլիկներից կազմւած մի ամբողջ խումբ, որոնք երբեմն լաւ փորթուգալերէնով, երբեմն ամենաւատ ֆրանսերէնով, երբեմն էլ կոտորած անգլիերէնով ինձանից ինչ որ բան էին պահանջում, թէև ես նոցանից ոչ մէկի վրայ ուշադրութիւն չէի դարձնում: Անցաւ հիացման առաջին րոպէն, բայց նա անջնջելի և խորը ապաւորւեց իմ սրտում:

Ես առողջ և զւարթ էի զգում ինձ և տառն և ութ օրւայ ծովային ճանապարհորդութեան

փոխարէն լիովին վարձատրւած էի Մադերալի հրաշալի տեսարանով. իսկ այժմ իրականութիւնը ինձ կանչում էր իրա մօտ, ուրեմն հարկաւոր էր գէպքից օգուտ քաղել և գործնականորէն ուսումնասիրել Փունգալօն: Կեանքի պօֆզիան տեղի տւեց պրօզային:

Վիլեամը մեզ հետ դուրս չեկաւ:

Քաղաքում՝ նախաճաշին ես մեծ զւարճութեամբ խմեցի մի բաժակ (бокаль) մադերեան հին գինի, որը այն ժամանակ վերջանում էր և մեծ դժւարութեամբ կարելի էր ձեռք բերել, այն էլ միայն մի քանի բաղդուորներից, որոնք պահում էին իրանց հինաւուրց մաւաններում. և ապա մի բաժակ սուրճ: Պէտք է խոստովանել, որ ես երբէք այդպիսի սուրճ չէի խմել ոչ Եւրոպայում, ոչ Աֆրիկայում և ոչ էլ Ամերիկայում:

Յիշում եմ, խմելիս ես մտածում էի քաղաքակրթութեան մեծ զօրութեան վրայ: Այդ սուրճը ոչ Մոկկայից և ոչ Պօրտօրիկօյից էր բերւած: Նա (սուրճը) բաւականին լաւ բուսնում էր նոյն այն պարոնի պարտիզում, որի մօտ ես սիրալիր հիւրասիրութիւն քստայ: Տէրը ուշի ուշով հետեւում էր ամեն մի հատիկի աճե-

լուն. և ամեն մի հատիկը ժողովում էր առանձին առանձին երբ յարմար էր համարում իւր չինական ոսկեզօծ բաժակին:

Նախաճաշից քիչ յետոյ, թողնելով իմ փիլիսոփայական խորհրդածութիւններս այն ամենագոր շկուլպի մասին, որը ընդունակ է ամեն բան լաւացնել աշխարհիս երեսին, ես ձի նըստած միացայ «Թէմպլի» նաւորդների այն մեծ խմբին, որը ուզում էր զբօսնել Պալիսէլլօ-դա-Ֆերրէլլօյում, և կոմս Կարվալիսալի ազարակում: Դա փորթուղալացի այն նշանաւոր պատրիկն էր, որ առաջին անգամ գորտ բերեց Մադերա: Դժբանդ կղզի: Մինչև այդ ժամանակ նա դեռ չունէր և ոչ մի հատ այդ արարածներից:

Ձիերը և ձիաւորները անհամբերութեամբ շտապում էին հեռանալ քաղաքի փողոցներից, բայց ես, որքան էլ հրապուրուած էի դաշտերի բուրմունքից, այնուամենայնիւ չէի կարող անցնել առանց ուշադրութիւն դարձնելու մի քանի գեղեցիկ խանութների վրայ, ուր ծախւում էին ամեն տեսակ գործածական իրեր, և խմբւում էին մարդիկ, հաց, գինի և ուրիշ

անհրաժեշտ պիտոյքներ գնելու: Այդ խանութները ամենայարմար տեղերն են Փունդալօյի հասարակ ժողովրդի կեանքը ուսումնասիրելու համար. այդտեղ կարելի էր տեսնել Մադերացի պառւաններին, որոնք բոլորն էլ ծխում են և ծխախոտ գնելու համար խանութ գալով, անգաղար խօսում են ծխի ամեն մի ներշնչումից յետոյ (ЗАТЯЖКА). այդտեղ կարելի էր տեսնել իշապաններին և գիւղացիներին, որոնք խանութ էին գալիս խմելու սովորական մի բաժակ օղին:

Խանութի ճակատին երևում էին երեք խորհրդաւոր գլխատառեր՝ „P. A. V.“ որոնք արտայայտում են մարդկային կեանքի ամենաանհրաժեշտ պահանջները Paô, Aquaredente, Vinho (հաց, օղի և գինի): Երբեմն հանդիպում են և այսպիսի մակագրութիւններ. „Diferentes hebidas“ (զանազան խմիչքներ):

Մենք շուտով անցանք Rua de Carreira և Փունդալօյի կորգօն (КОРЗО) և դուրս եկանք քաղաքից, որը իր 16,000 բնակիչներով այնքան էլ մեծ չէր կարող լինել: Քաղաքին կից սկսւում են այգիները, այնպէս, որ ամբողջ կղզին ներկայացնում է մի միապաղաղ պարտէզ: Ես

գիտմամբ մի քանի քաջ լեռ մնացի իմ ուղե-
կիցներից, որպէսզի միայնութեան մէջ վայելեմ
հարուստ բնութեան անուշահոտ բուրմունքը:
Ահա մենք բարձրանում ենք թեք ճանապար-
հով, որի երկու կողմը տեղ տեղ շրջապատ-
ւած է քարէ պատով. անցնում ենք դաշտերի
և արտերի միջով, բայց այստեղ ևս առատ
ցորենի հետ երևում են և ծաղիկներ, այստեղ
այնտեղ արտերի մէջ աչքի էին ընկնում ա-
րևածաղիկ, աղաւնակառուցի, (геранія) յասմիկի
և վարդի մեծ թփեր, որոնք կարծես մի չք-
նաղաքէ կնոջ ձեռքով ցանւած լինէին: Յաճախ
մենք անցնում էինք կապրիֆօլից և պապի-
ֆից հիւսւած կամարների տակից: Ես բարձրա-
նում էի ասպանդակների վրայ և քաղում էի
անուշահոտ պտուղները, ապա թեքւելով աջ
ու ձախ քաղում էի վարդեր և գոյնզգոյն ծա-
ղիկներ: Այդ բոլոր բարիքների առատութեան
մէջ արդարացի էր ակամայ գողութիւնը:
Իմ ուղեկիցները և ուղեկցուհիները աւելի շատ
էին յափշտակում. բայց հարուստ բնութիւնը
գրանից ոչ մի վնաս չէր կրում: Մեր ձեռները
արդէն լիքն էին ծաղիկներով. չէինք կարող պա-
հել այդ աւարը և սկսում էինք իրար խփել ծա-

ղիկներով. վարդերը քցում էինք մեխակների վե-
րայ և մեմփածաղիկներով ու յասմիկներով ծած-
կում էինք մեր տիկիւնների (~~մանկ~~) ծամերը
և ուսերը: Անուշահոտութիւնը արբեցնում էր
մեզ: Ես ժամանակ առ ժամանակ ետ էի դառ-
նում և դէպի ծովը նայելով ծաղիկների ա-
նուշահոտութեան հետ շնչում էի և ծովային
սուր հոտը:

Դէպի Պալեստինո ճանապարհի մեծ մասը ծուռ
ու մուռ էր և մենք ծանր էինք գնում: Բայց
հէնց որ ճանապարհը լաւացաւ, ես ուղեցի խթել
ձիուս, որպէսզի ոտով գլխով ընկնեմ այդ կա-
խարդական բնութեան գիրկը, որպէսզի խորա-
սուզւեմ քաղցրութիւնների այդ ծովի մէջ և
ահա այդ տեղ միայն նկատեցի, որ ձիապանս
երկու ձեռքով կախւած է ձիուս պոչից, որը
այդպիսով ամբողջ ճանապարհը նրան քաշ էր
տալիս:

Ես սկսեցի ծիծաղել և իմ կողքից գնացող
տիկնոջ ուշադրութիւնը դարձրի այն բանի
վրայ, որ նրա ձին էլ տանում է մի այդպիսի
մարդանման բռն: Ծիծաղից հազիւ կարողա-
նում էինք թամբերի վրայ մնալ. երկու ձիա-
պաններն էլ գլուխներին գրած իրենց սովո-

բական carabuza գլխարկը, որը դրսից կապույտ է, իսկ ներսից՝ ծիրանեղույն, երկար ու զիզ փուռնջուղով և այնքան փաթր, որ հազիւ ծածկում է դադաթը (դրսից ծածկելու մի ծիծաղելի ձև, ամենամոնրամաթը արեադարձային երկրներում), մնում էին իրանց պատւաւոր տեղերում և թող էին տալիս իրանց քաշկուտել, առանց ուշադրութիւն դարձնելու հանդարտ եւ գնում թէ ձիւ վազեցնելով:

Բայց և այնպէս հեռագհետէ սկսում էի անհանգստանալ այդ դրութիւնից և լայտնեցի պոչից կախւած մարդուն, փոխելով խալերէն խօսակցութիւնը որքան կարելի է փորժուգալերէնի, որ ես ցանկանում եմ միայնակ մնալ. բայց նա կամ չհասկացաւ իմ ասածը և կամ չուզեց հասկանալ հետեանքը միեւնոյնը մնաց: Համբերութիւնս չը կորցրի և ամեն կերպ աշխատեցի հասկացնել ձիապանին: Սուկայն ի դուր: Նա չփոխեց իւր դրութիւնը և շատ հանդիստ մնում էր կախւած ձիու պոչից: Վերջապէս համբերութիւնս հասաւ փորժուգալերէն խօսակցութիւնը ինքնիրեն կորեց և մաքուր խալերէնով հայհոյելով, ես դիմեցի ընդհանրական լեզւին, այն լեզւին, որ

բոլոր մարդկանց հըրայրացեալ է՝ միմիքային: Մտրակով երկու-երեք անգամ խփեցի ձիու պանի ձեռքին, որը իւր կարգին հայհոյելով, վերջապէս թողեց իւր սրսը և ես մնացի առանձին: Իսկ ծաղաւ գլխարկս մնաց միայնակ:

Օ՛, ինչու այդպէս արի: Այդ ծիծաղելի և ձիու համար առելորդ կենդանի բեռը որքան հարկաւոր էր այդպիսի գէպքերում: Հազիւ ձիապանը լրաց էր թողել պոչը, որ ձին սանձը կտրելով թռաւ սրտերի և քարէ կոտերի մէջ առանց մի բոպէ թողնելու ինձ, որ հանգստացրեմ:

Պրտթիւնս հեռագհետէ դժւարանում էր և մինչև իսկ յուսահատական էր դառնում: Ձին առանց հնազանդւելու սանձին յանկարծ ուղղեց դէպի մի դժւար անցանիւի շաւիղ անդունդի եզրով: Ուսերս կաշոււ էին քարէ պատին, հալեացքս կորչում էր հարիւր կանգուն խորութեամբ մի փոսի մէջ, իսկ ձին, փրփուրով ծածկւած, խռմիալով թռչկոտում էր կտտաղած: Այդ բոլորը կատարեց մի վայրկեանում, այժմ բոլոր ջանքերս ուղղւած էին այն նպատակին, թէ ինչպէս պահեմ ինձ թամբի վրայ: Բայց յանկարծ մի գարհուրելի միտք

փալլեց գլխումս, որը երբէք չեմ մոռանալ: Մտածում էի՝ թէ ինչ պէտք է զգամ, երբ իմ ոսկորները շոգտով այդ անգուռի յատակում լինեն: Զգացի մի սառը քրտինք, որը, ինչպէս ծովային քամու լանկարծակի հարւած, թափանցեց ողջ մարմինս:

Մի վայրկեան ևս՝ և ես արդէն զսպել է ձիս. բայց ես շեղւել էի ճանապարհից ու կորցրել ընկերներին: Ես գտնուում էի մի շատ սիրուն ճանապարհի վրայ, որը համեստ ձգւում էր շաքարեղէգների և ագորակների միջով:

Քրտինքը առուի պէս թափւում էր ձիու վրայից. ես էլ քրտնքակոխ էի եղել: Իմ գիմացս տարածւում էր ծովը, նա շատ մօտ էլ երևում, կարծես ոտներին տակ լենէր, իսկ նրա մակերևութի վրայ, որը փալլում էր պայծառ կապույտ գոյնով, հանգիստ և ուրախ օրորւում էր սպիտակ առագաստը:

Յանկարծ ճանապարհի ծայրին, հարիւր քայլի վրայ տեսայ մի երիտասարդ կին՝ մենակ, ձիու վրայ: Ես երազ կարծեցի այդ: Զին ծանր էր գնում, կինը սանձը բաց թողած թեք էր ընկել լողնածի կամ հիւանդի պէս: Նա հագել էր երկար երկնագոյն ամսոյճնէա, որը շատ

գեղեցիկ կերպով լարմաբւում էր նորա նիհար, բայց վայելուչ կազմւածքին: Նորա գլուխը բարակ վզով շնորհալի կերպով թեքւած էր ուսի վրայ և թուշեայ սև գլխարկի տակից, որը զարդարւած էր փասեանի փետուրներով, ուսերի վրայ թափթփւած էին խիտ ոսկեգոյն մազերը:

Ես բաց թողի ձիուս գլուխը, ուպէսզի հասնեմ այդ երևակայական տեսիլին, բայց ձիս կրկին թռաւ սլաքի պէս, կարծես զգալով, որ իւր կատաղութեանը դիմադրող ոչ մի էակ չուկայ, կայծակի տրագուլթեամբ հասաւ կնոջը և ես մօտից թուշելով հագիւ նկատեցի, որ նորա ձին ևս լանկարծակի, նախանձից դրդւած, թռաւ նույնպէս կատաղած: Անծանօթ գեղեցկուհու տեղ ես վախեցայ, բայց որքան էլ ցանկանում էի, ոչինչ չէի կարող անել, որովհետեւ կարծես դեի թեւերի վրայ նստած թռչում էի:

Հէնց որ ամբողջ ուժովս կարողացայ հանդարտեցնել այդ կատաղի ձիարշաւը, ես չետես լսեցի ձիու տրոփիւն և ետ դառնալով տեսայ, որ թամբի վրայ ոչ ոք չկար: Այլ ևս առանց երկար մտածելու ձիուս գնացքի վրայ, շտապով սանձը քաշեցի և չետ դարձրի նրան. այդ ժամանակ

միայն հեռու մ' դառաի ծայրին նկատեցի գե-
ղեցիկ կնոջը, անգղայ ընկած գետին: Եւ իսկ
հարեալ զգաբար ոչ մի բար չկար տնտեղ,
ուր նա ընկել էր և դրա համար էլ խիստ
ջարդւած չէր լինի. ես արագութեամբ թռայ
ձիուցս, վազեցի դէպի մօտակայ վտակը և
ճանապարհորդական կաշէ սրւակով (սրակ) ջուր
բերելով սրտկեցի ուշաթափ կնոջ գու-
նատ երեսին: Նա բարձրացրեց ձեռքը, որով
բռնել էր արծաթակոթ խարաղանը (խարաղան)
բայց չսխալուեց:

Այդ բոլորէն միտս ընկաւ քանզի նրա շու-
բերը, բայց այդ ժամանակ հազիւ 22 տարե-
կան լինելով, սիրտս վրդավունքից այնպէս ու-
ժեղ էր բաբախում, որ ոչ մի կերպ չհամար-
ձակեցի և նորից սրտկեցի մի քանի կաթիլ
նորա գեղեցիկ երեսին: Նա բարձրացրեց ար-
տեսնունքները և ինձ տեսնելով՝ պայծառ կար-
մըրութիւնը ծածկեց նորա գունատ ալտերը և
շշնջաց՝ «Շնորհակալ եմ»... և նորից աչ-
քերը փակեց:

Այդ կնոջ գէմքի վրայ դրոշմւած էր թարմ
գեղեցկութիւն և խորին մեղամաղձոտութեան
կնիք: Նորա շագանակագոյն ոսկէ մազերը խիտ

գանգուրներով անկարգ թափւած էին պարա-
նոցի և կրծքի վրայ: Նա ուղղեց նրանց և լեռ
քցեց. ինքն իւր վրայ արագ հալեացք քցելուց լե-
ռոյ նկատեց, որ ընկնելին մի ոտը աւելի էր
բացւել, քան հարկաւոր էր և գէմքի փոսը
արտայայտութեամբ, որը աւելի շուտ ամօթխա-
ծութիւնից էր քան թէ իսկական տանջանքից,
նա ծածկեց ոտը: Խոնարհւելով դէպի այդ
աստածային էակը և ինձ բաղդաւոր զգալով, որ
կարող եմ նորան օգնել, ես մի քանի րոպէ վեհ
հրճւանքով անցրի: Բայց լանկարծ այն ճանա-
պարհից, որով ես եկայ, լուեց ձիու ոտնա-
ձայն:

Դա Վիլեամն էր, գունատ և սարսափ ազ-
դող գէմքով:

Նա ճանաչեց ինձ և ձին կանգնեցրեց: Հա-
զիւ գետին նայեց, որ ես լուեցի միաժամանակ
երկու ջերմագին բացականչութիւններ, որպի-
սին կեանքումս երբեք չեմ լսել և հաւատա-
ցած եմ, որ չեմ էլ լսի երբեք՝

— «Վիլեամ», է՛մմա:

Որքան սէր, տանջանք, ուրախութիւն և
հրճւանք կար այդ ձայների մէջ: Նոքա արձա-
գանք գտան հոգուս մէջ և ես խորը զգաց-

ւած թուայ ձիուս վրայ, ասելով Վիլեամին. «Օգնեցէք այդ խեղճ կնոջը, իսկ ես կերթամ ձին որոնելու»:

Շուտով հասայ ձիուն, բռնեցի և բերի երջանիկ արարածների մօտ, որոնք ձեռք ձեռք տւած մէկ մէկու նայում և լալիս էին. բայց արցունքների միջից նրանց երեսին փալլում էր բուռն զգացմունք և անասելի բերկրութիւն:

Բայց միթէ պէտք է լիշեմ այն՝ ինչ որ ասացին սիրահարները: Վիլեամը միայն մի քանի խօսք ասաց յուզմունքից կտրւած ձայնով: Յիշում եմ, նա ձեռքս սեղմեց և ինձ իւր բարեկամ կոչեց. պարզ լիշում եմ, որ էմման էլ սեղմեց ձեռքս: Ապա շտապեցի նոցա մենակ թողնել, նամանաւանդ, որ էմման, ինչպէս երևում էր, ծանր չէր վնասուել և իմ օգնութեանը կարիք չունէր:

Ես դարձայ Ծունգալօ խիստ յուզւած, կարծես ներկայ էի եղել որևէ սոսկալի աղէտի (катастрофа), բարձր զգացմունքների առատ հեղման կամ ընդհանրապէս մի մեծ՝ տխուր կամ ուրախ գործի: Բայց և այնպէս դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մարդու և կնոջ հանգիստման: Սակայն, միթէ ազգերի և անհատ-

երի կեանքի մէջ մեծ երևոյթները չեն յառաջանում հենց այդ հասարակ միացումով — տղամարդի և կնոջ հանդիպումով:

«Տէնչան» ուշ երեկոյեան խարիսխ վերցրեց: Տղամարդիկ տաքացած թունդ գինուց, կանայք արբած ծաղիկների բուրմունքից և մադերեան առոյգ ձիերի վրայ նստելուց յոգնած, երգելով և ծիծաղելով վերադարձան շոգենաւր: Նոքա հետները բերում էին յարդէ սիրուն կողովներով հիանալի քանդակւած փայտեայ լերեր և գեղեցիկ գործւածքներ: Բոլորը գոհ էին և ուրախ խօսակցում էին:

Միայն ես, մտնելով խուցս, ուշադրութեամբ զննում էի ափից եկող բոլոր նաւակները: Կը գայ արդեօք Վիլեամը: Մարդուս սիրտը անքննելի է: Ես սրտանց ցանկանում էի, որ նա վերադառնար շոգենաւր նոյն իսկ առանց իւր թանկագին էակին: Վախենում էի, որ նա կղզում մնար, իսկ ես շատ էի ցանկանում, որ նա հետս եկէր, թէկուզ մէնակ և անբաղդ: Նոցա ամար ես օտար և աւելորդ եմ, մտածում էի, ի՞նչ ես ևս կարող եմ ջերմանալ նոցա սիրոյ առաջալիծներից, ինչպէս մի շուն, որը,

պառկած առիւծի թաթերի մօտ սիրում և
պաշտում է նրան:

Բայց և այնպէս Վիլեամը չվերադարձաւ:
Մութ գիշեր էր և ես տխրութեամբ փակեցի
խուցիս պատուհանը:

III

ԱՐԿԻՄ ԻՈՎԻ ՎՐԱՅ.

Սմբողջ գիշերը ես երազում տեսնում էի Վիլեամին և, խոստովանում եմ, նրանից աւելի էմմային: Որքան իմ նոր բարեկամը ներկայանում էր խելքի, ոյժի և գեղեցկութեան տիպար, այնքան շիկահերը երևում էր իբրև կնոջ մարմնացեալ իգէալ, որին մի ակնթարթում տեսա Մադերայում երկնքի և ծովի մէջ: Այդ բընքոյշ արտրածը, որը միայն մի քանի րոպէս ընկած էր իմ առաջ գիւթիչ կղզու անուհի հոտ խոտերի վրայ, լի էր այնպիսի ցանկա-

թիւններով և շրջապատւած այնպիսի գաղտնիքներով, որ ամենաանտարբեր մարդն անգամ չէր կարող չհետաքրքրւել: Երևակայութիւնս անհամբեր ձգտում էր թափանցել այդ գաղտնիքների մէջ և շարունակ ինձ լուսնում էին անտանելի պատկերներ: Մի խօսքով, ես նախանձում էի Վիլեամի սիրոյ վրայ. չիմանալով գեռեւս, թէ ի՞նչպէս է որոշւած նրա բաղքը, ես ի սրտե նախանձում էի նրան:

Հետեւեալ օրը վերկացայ արշալոյսին և անմիջապէս տեղեկացայ ծառայից, թէ արգեօք բոլոր նաւորդները վերադարձել են շագենաւ: «Բոլորը», պատասխանեց նա և աւելացրեց, որ գեղեցիկ անգլիացին (այդպէս էին կոչում ծառայողները Վիլեամին) վերադարձաւ ուշ գիշերին, երբ արդէն խաբիսը վերցրած էր և «Թէ՛հա՛ն» շարժւում էր առաջ. նաւապետը նրան նկատողութիւն արեց, բայց նա չնկատեալ, նոյն իսկ ոչինչ չպատասխանեց: Նա բոլորովին դժգոյն էր. սպասաւորը, որ լուռ գիտեց, կարծեց թէ նա հիւանդ է կամ խելքը գլխին չէ:

Երեք օր Վիլեամը խցից դուրս չէր գալիս: Շոգենաւի սպասաւորը, բժիշկը և նաւապետը այցելում էին նրան, հարցնելով թէ
Հիւանդ սէր:

Եւ
այն
պիսի

ոչինչ չէր ցանկանում: Նա շնորհակալութիւն էր յայտնում բոլորին և ասում, որ ոչ մի բանի կարիք չունի:

Ամբողջ ժամանակը ես շրջում էի նրա խցի մօտերը և ներսս պատերազմ էր մղում այդ աղնիւ և դժբաղդ մարդուն մխիթարելու ցանկութեան և իմ դէպի նրա անչափ վշտերն ունեցած պատկառանքի մէջ: Յաճախ կանգնում էի դռան առաջ և ձեռք էի քցում փականքին, բայց սիրտ չէի անում ներս մտնել և վերադառնում էի յետ, աւելի ևս շփոթւած: Ո՞վ կարող է ասել, թէ ամենից լաւ ինչպէս կարելի է վարւել աղքատի հանգամանքներում: Սակայն չորրորդ օրը վճռեցի և մտայ նրա սենեակը:

Հետեւեալ մտքերը ինձ ներշնչեցին անվեհերութիւն և վստահութիւն: Եթէ իմ ներկայութիւնը, մտածում էի ես, դուր չգալ նորան, ապա ձեռքի մի շարժումով կամ խօսքով և կամ եղանակով ինձ կհասկացնի, ես դուրս կգամ և նրա զայրոյթը շուտով կիջնի: Ընդհակառակը՝ եթէ ես նրան պիտանի եմ և ցանկանում է խօսել էմմայի մասին, ապա նա կարող է խօսել միայն ինձ հետ և ես նրան մեծ սփոփանք կը

պատճառեմ:

Յո՛ժը, կարծես ներդաշնակ խնդրելով հարցրի,

— «Վիւեամ, ոչինչ չէք ցանկանում: Չափազանց տանջւում էք...»

— Այն, սիրելիս, խիստ տանջւում եմ և օգնութեանդ եմ կարօտ:

Այն ուրախութիւնը, որը ես զգացի այդ վայրկեանին, անկարելի է նկարագրել: Ես նրա տալ նրա հանդէպ. նա պառկել էր առանց բարձի՝ մահճակալի վրայ, նոյն զգեստով, որ հագած էր Մաղերայում: Մաղերը զգգված, աչքերը կարմիր, դէմքը դալկահար և լլարած էր, կարծես ամբողջ մի ամիս հիւանդ լինէր:

Ես սեղմեցի նրա երկու ձեռք. նա նոյն կերպ պատասխանեց և սկսեց լալ: Զօրեղ բնուորութեան վերջին պարտութիւնն էր այդ: Վիշաք զերազանցեց նրան: Պարզ էր, որ ճակատագիրը ստիպեց խոնարհել երկաթէ մարդիկներից մէկին, որի նմանին կեանքումս չէի հանդիպել: Հների գիշարանութիւնը՝ փիլիսոփայական բանաստեղծութեամբ լի, իրաւունք ունեւոր ներկայացնել ճակատագիրը առաւօծով:

Ամբողջ երեք ժամ անցրի Վիլեամի մօտ և այդ ժամանակամիջոցում նա ինձ հաղորդեց իւր տանջանքների պատմութիւնը: Գոքա սոսկալի տանջանքներ էին, սրպիտին միայն մարդս կարող է տանել. բայց զըստ հետ միասին, գոքա այն վեհ տանջանքներն էին, որոնք բարձրացնում են մարդուն և պարծենալու իրաւունք տալիս: Պատմութեան էութիւնը շատ հասարակ է. դա կրքի կռիւն է պարտականութեան դէմ. նրա մէջ պարզ արտայայտւեցին մարդկային տկարութիւնը և ամբողջ մեծութիւնը:

Գործը վերաբերում է այն ամենամեծ դրամային, որը կատարւում է մարդու հոգու մէջ, այդ երկրային արարածի, որը արժանի է կարեւրցութեան, էակի, որին բոլոր դաւանութիւնների դիցաբանութիւնները փառաբանում են իբրև աստուծո, երբեմն ինչպէս կիսաստուծո-կիստիէնդանի, որը բնակւում է երկնքում և... ճահճում, որպէս կատարեալ երկակենցաղ (ամփոփւթ)... Այդ վայրկեանից դէպի Վիլեամն ունեցած բարեկամական զգացմունքս փոխւեցաւ առուածացման: Ես աւելի յարգում քան թէ սիրում էի նրան, և սիրում էի երկուս

սարգական բուռն եռանդով և մարմնացած մտերմութեամբ, որը յատուկ է մարդուն՝ միայնութեան և հայրենիքից հեռու եղած ժամանակ:

Այնուհետև մենք շարունակ միասին էինք: Ես այլ ևս չէի մտածում այն մասին թէ թնչը ստիպեց ինձ Եւրոպայից հեռանալ և այն անկախ ապագայի մասին, որը սպասում էր ինձ Ամերիկայում: Ես Վիլեամի արձագանքը զարձայ և մենք շարունակ խօսում էինք միեւնոյն նիւթի մասին: Նրա անցեալը, ապագան, բազմակողմանի զարգացած մտքի բոլոր ոյժերը և անչափ հարուստ սիրտը առչոյրւում էին մի սիրով, զոհւում էին մի կնոջ և այդ կինը արժանի էր նրան:

Թէև ես ամեն բանում Վիլեամի պարզ արտացոլումն էի, բայց չէի շողոքորթում նրան, այլ օգնում էի հաստատ մնալ իւր սուրբ միտումների մէջ:

Մօտիկ ծանօթութիւնը այդ մարդու հետ, այդ անյուս և անմխիթար վեհ սիրտը հետ, իմ բնաւորութեանը ոյժ տւեց, և ես զգացի իմ մէջ աւելի արիւթիւն, քան երբ և իցէ մինչև այդ ժամանակ:

Երբ բարեկամիս վսեմ տպաւորութիւնները սկսում էին թուլանալ, երբ սիրոյ անհուն ծովը նոցա կլանում էր, ես չիշեցնում էի իւր տւած խոստումը և այն վերջին խօսքերը, որոնք էմման, որ աւելի հաստատամիտ էր քան թէ նա, ասաց նորան Մադերալում, «Վիլեամ, կուիր և սպասիր»:

Նա տոմսակ էր վերցրել մինչև Մադերա, իսկ յետոյ կրկին մինչև Սան-Վիչենցո: Նա ցանկանում էր, իւր խոստման համաձայն շարունակել ճանապարհորդութիւնը, բայց, միևնոյն ժամանակ, նորան ևս մօտիկ լինել: Սան-Վիչենցո հասնելուն պէս նորան սարսափեցրին լերկ ավերքը: Երևի սասորերկրեայ կրակը տարիների ընթացքում այնքան խախտել էր երկրի ստեղծիչ սլոթերը, որ նրա վրայ մի հատիկ խոտ չէր բուսնել: Այդ պատճառով մենք ուղեւորեցինք հեռու մինչև Պերնամբուկո:

Օրէջօր մենք աւելի և աւելի մոտեմանում էինք և այժմ բաժանւելը մեզ համար գժւար էր: Այսպիսով, նա տատանւելով սիրոյ և բարեկամութեան մէջ, հասաւ մինչև Րիօ-դը-ժանէյրօ: Երկրի անտաճային գեղեցկութիւնը յաղթեց նրա բոլոր տարակուսանքներին և Վի-

լեամը վճռեց Բրազիլիայում մնալ: Ես նրա հետ մի շաբաթ անցրի երկրագնաւի այդ ամենագեղեցիկ վայրում, որի առաջ Նէապօլը և Կ. Պօլիսը համեմատութեամբ գինաթափ են լինում, և մենք վերջապէս բաժանուեցինք:

Ինձ համար շատ ցաւալի և տխրալի էր երբեքցե բաժանւել իմ բարեկամ Վիլեամից, բայց զգում էի, որ թող առողջութեամբս կարող եմ կորչիլ հասարակածային տաք կլիմայի տակ: Նոյն իսկ, եթէ նրա հետ մի քանի օր ևս մնայի Րիօ-դը-ժանէյրօյում, այնուամենայնիւ ես ստիպւած կը լինէի վերջի վերջոյ բաժանւել նրանից: Նա մտադիր էր անցնել Բրազիլիայի խորքերը, մի ինչ որ լեռնային ձեռնարկութեան գլուխ անցնելու, երկրագործական դաղթականութիւններ հիմնելու. մի խօսքով նա ձգտում էր իւր խրայնող, մաշող միտքը ենթարկել շատ բազմակողմանի գործունէութեան և տենդային աշխատութեամբ կրկնապատկել այն ջնքը, որը աւելի խիստ և վրտանգաւոր էր:

Մենք բաժանուեցինք կրկին, վերադառնալով տեսնելու լուսավ և այդ միտքը թեթեւացրեց մեր հրաժեշտը: Երկուսս էլ ջահել էինք, այն հա-

սակում, երբ յայսք զօրեղ է լինում. երկուսս էլ պետք է մի քանի տարի անցնէինք հարաւային Ամերիկայում, ինչու, իրաւի չէինք կարող շուտ շուտ տեսնուել: Բայց պայծառ յայտերին իրադրժւել չէ ենթարկւած: Սենք երբէք չհանդիպեցինք միմիանց:

IV.

ԵՐԵՎԱՆԻ ՅԵՏՈՅ

Երեք տարի Վիլեամից նամակ ստանում էի, թէև ոչ լաճախ: Գուցէ նամակներից շատերը կորչում էին և այդ վարմանալի չէ, որովհետև մենք թափառում և շրջում էինք աւելի կամ պակաս վայրերի երկրներում:

Ես նամակ ստացայ Բիօզը-ժանէլլոյից, Մինաս-Հերախայից և Մատո-Գրոզոյից. ապա հետեւեց բաւական երկար և տաղտալի ընդհա-

տում: Յետոյ անսպասելի կերպով նամակ եկաւ Վալպարայզոյից, ապա Կօբխայից, Լիմալից և Գվալաիվիլից. վերջին նամակը Կլիտոյից էր:

Աշխարհագրական քարտէզը ձեռքս առած գծում էի զժբազդ բարեկամիս արտասովոր ճանապարհորդութիւնը և հետևում էի նրա կանգ առած այն տեղերին, ուր նա մնացել և տանջւել էր:

Երկար թափառելը, տեղերի անդադար փոփոխութիւնը և զբաղմունքները չէին կարողացել հանգիստ շնորհել նրա հոգուն, որը յուսահատութեամբ պաշարւած էր. կարծես թէ ժամանակը մեծացնում էր նրա տանջանքները և նորոգում վերքերը: Դա աշխարհի մի վիշտ էր, որով մարդիկ ապրում և մեռնում են մինչև իսկ եթէ կեանքը զարեւ տւէր:

Նրա նամակներից մի քանիսը կրում էին աշխարհի յուսահատ բնաւորութիւն, որ կարելի էր մտածել, չլինի թէ նաքա ինքնասպանութեան նախկին օրն են գրւած: Սակայն խստամբ և խուցէ, ամենից աւելի, քաղցր յուսով ուրաւանդ պահպանում էին Վիլեամի կեանքը:

1856 թւի ամսուր՝ Կլիտոյից ստացած նամակից լեռնոյ, ես ոչ մի տող չստացայ իմ բա-

րեկամից. նորն իսկ ուրիշներեց էլ չէի կարող
տեղեկանալ նրա մասին: Կարծում էի թէ նա
այլ ևս կենդանի չէ, երբ յանկարծ ստույգալ
մի ծրար Բուէնոս-Այրէսի անգլիական գեսպա-
նութեան միջոցով: Բուռն լուզմամբ բաց արի
ծրարը: Ես Անգլիայում ոչ գործ ունէի և ոչ
էլ բարեկամ. լեզիս սլառուէց երբ մտածեցի,
որ այդ անպատճառ իմ Վիլեամից պէտք է լի-
նի:


Ծրարի մէջ կար մի քանի տող առանց թւա-
համարի:

Իմ բարեկամ

«Այս ծրարի մէջ կդանէք մի քանի կնքը-
ւած նամակներ, ամենաթանկագինը, ինչ որ ու-
նիմ այս աշխարհում: Պահէք զքանք 10 տարի
ևս. և եթէ այդ ժամանակամիջոցում ոչ ոք չը
ներկայանայ և իմ անունով չպահանջէ, ապա
լույս բնծայեցէք: Այդպէս է իմ Էմմայի կամ-
ջը, որ առանց ինձ. «Թող քո կեանքի իւրա-
քանչիւր գործը օգտակար լինի, և մեր տա-
ռապանքները թող ծառայեն լոգուտ մի որևէ

աձի»: Սիրելի բարեկամ, կրկին շնորհակալեմ ձե-
զանից, որ դուք օգնեցիք Էմմայիս: Մտքերա-
լում, և այն բոլորի համար, որ դուք մինչև
այժմ ինձ համար արել էք»:

«Ձեր Վիլեամ»:



V.

ՊԵՆԵՄԻ ԵՐ ԻՄՄԵՅՆ ԴԵՄԵՆՆԵՐԸ*:

Կատարել պարտքը տաճնի տրտո՛նջի:
Մարդու մեծութիւնը պարտքը կատա-
րելումն է:

Վիլեամը Էմմային.

Լոնդոն, 12 Յունւարի 18... թ.

Ներեցէք այն բանի համար, որ ես ձեզ
գրո՛ւմ եմ, կրկին ներողութիւն. համարեցէք

*) Իմ ձեռագրերն մէջ գտնուած Էմմայի նամակ-
ները զբաւած են Վիլեամի ձեռքով, այդ իսկ պատ-
ճառով ներկայանում են իբրեւ պատճէն: Անկաս-
կած, բարեկամս չէր կարող զրկուել իւր ամենաթան-
կազին գանձից և ես նրան լաւ ճանաչելով հա-
ւատացած եմ, որ իւր հետ գերեզման տարաւ:

Նամակներն հետադառութիւնից պարզ է, որ
սրբաւ ընտրւած են Վիլեամի և Էմմայի միմեանց
զբաւ Նամակներէց 18...[թւից մինչև 18...[թւը:
Եհարէէ Վիլեամի համար հիշատակելի էր,
բայց նա այդ արեց զբաւած ղէպի Էմմայի ունեցած
սրբուց, որպէսզի օգտուէտ լինի մարդկանց:

Թէ այս նամակը ստանում էք ոչ թէ առաջին,
այլ հարիւրերորդ կամ հազարերորդ անգամ:
Դրեւծ խօսքը աւելի անարատ է տաածից. սա
ճշմարտութիւն է և ես այդ ճշմարտութիւնը
երբէք այնքան պարզ չեմ զգացել, որքան այս
րոպէիս, բայց կարծումեմ, որ իրաւունք ունիմ
յայտնելու իմ մտքերը այդպիսի ճանապարհով:

Արդէն մի տարուց աւելի անցաւ այն ժա-
մանակից, երբ ես ձեզ առաջին անգամ տեսայ.
դուք գիտէք որտեղ եւերը: Այս տանջող անյայտու-
թեան մէջ, որ կրում եմ այժմ, ինձ միայն միսի-
թաքում է այն միտքը, որ դուք ևս յիշում էք այդ
օրը, ժամը և րոպէն: Դուք գիտէք, միսս Էմմա,
որ այնուհետեւ ես միայն ձեր մասին էի մտածում,
միայն ձեզ էի որոնում և միմիայն ձեր անունն
էր գրողմաւ իմ շրթունքներին և ձեր պատկերը
բոլորմա: Ես սիրեցի կապույտը, պաշտում էի կապ-
ուագոյն երկինքը, կապույտ ծաղիկները, ժապա-
ւենները, և այդ բոլորը այն պատճառով, որովհե-
տեւ ձեզ առաջին անգամ սպիտակ հագուստով և
ապտագոյն գոտիով տեսայ: Ներեցէք երեխա-
ութեանս, ես ակնածութեամբ էի վերաբեր-
ում այն տառերին, որոնցից կազմւած էր ձեր
նունը: Անմեկնելի յոյսերի և տանջանքների

այս ամբողջ տարւայ ընթացքում եւ երազում էի Նապալեօն մեծի զօրութիւնը, Բալլիի հանձարը և Ռօտշիլդի հարստութիւնը, որպէսզի արժանի լինեմ ձեզ և իրաւունք ունենամ ձեր ոտների առաջ դնել զօրութիւնը, հանձարը, փողը և ասել.-բոլորը ձերն է, միայն մի ժպիտի փոխարէն, որը ինձ ասէ «ես քեզ սիրում եմ»: Ամեն ամեզ ես հետևում էի ձեզ, Լոնդոնում, Բաղդադում, Իտալիայում և վերջապէս կարողացայ ձեր տունը ընդունել, յարմարեցի ձեր մօրաքրոջ հետ, և ընտելացայ ձեր կեանքին. առանց ձեզ կեանքը ինձ համար անհասկանալի, աներևակայելի էր: Բայց ես լռում էի: Երբեմն ինձ վախեցնում էր այն միտքը, թէ ինչպէս համարձակեցի ձեզ սիրել. ես չափազանց ամօթխած էի և լռիկ մնջիկ նաչումէի ձեզ:

Պուք կարող էիք ձեր մի հայեացքով ամենաանբաղդ մարդը դարձնել ինձ և յաւիտեան հեռացնել ձեզանից. բայց դուք այդ չարեցիք և թող տւիք ինձ նայել ձեզ: Երբ իմ աչքերում ակամայ արտափայլում էր բոլուն սիրոյ, ցանկութիւնների և մտքերի ընթացքը, որոնք զբաղւած էին միմիայն ձեզանով, երբ աչքերս, ուղղւած դէպի ձեզ հոգեղմայլութեամբ, չափա-

զանց աստածացման սաստկութեամբ կարծես խօսում էին ձեր աչքերի հետ. յաճախ պատահում էր, որ ձեր գէմքից անհետանում էր խողաղ, մելամաղձոտ հանգստութիւնը և ձեր աչքերում բորբոքւում էր կրակը, բայց դուք նոյն րոպէին սքողում էիք ձեր արտասուքների տակ: Ո՛հ, մի ասէք, որ չէք սիրում ինձ. ես չեմ կարող հաւատալ: Ասացէք, որ ես չիմարեմ կամ լանդուզն, ծիծաղէք վրաս, արհամարհեցէք ինձ, բայց սուտ մի խօսէք: Եւ ինչո՞ւ սուտ խօսել: Ինչքան էլ մեծ լինէր կրթութեամբ ձեռք բերած գաղտնապահութիւնը, ինչքան էլ մեծ լինէր կեղծութիւնը, որքան էլ նշանաւոր լինէր մարդկանց բաժանող լեզուների տարբերութիւնը, սակայն այն պայծառ ճառագայթը, որ Աստուած պարգևել է մեզ իւր գրախաղի և, որը թափանցում է մեր աչքերի մէջ, ներկայանում է աւելի ուժեղ, քան այդ բոլոր խօջընդոտները: Մեր հայեացքը կայծակի արագութեամբ կարող է արտայայտել բարկութիւն, բոցակէզ ցանկութիւն և անսահման սէր. նա կարող է առել, արհամարհել և յարգել. կարող է տարակուսել, հրամայել և հպատակել. կարող է և հարցնել ու պատասխանել, անի-

ծել և օրհնել: Հայեացքը կարող է ամեն բան արտայայտել, բայց ոչ ստել: Իսկ ձեր աչերը ինձ ասացին, որ դուք ինձ սիրում էք: Եթե իրօք սիրում էք, ապա ինչո՞ւ էք խուսափում ինձանից: Ահա ամից աւելի է որ դուք իզուր հեռացել էք ինձանից, այսինքն այն արժանալիշատակ երեկոյից երբ մենք միասին «Տայն» շոգենաւի տախտակածի վրայ նստած կարում էինք Լա—
Մանշ ջրանցքը: Դուք ձեր մօրաբքով հետ վերադառնում էիք Իտալիայում արած ճանապարհորդութիւնից, այն ճանապարհորդութիւնից, որ էս ևս կատարեցի, որովհետեւ էս ձեզ հետեւում էի հեռւից, երբեմն անհետանալով, երբեմն էլ ձեզ երեւոյով: «Տայն» շոգենաւ մեզ առաւ ընդհանուր լարիկ տակ: Մի գեղեցիկ երեկոյ էր: Ծովը բոլորովին խաղաղ, խալուսինը երբեմն անհետանում, երբեմն էլ կրկին երևում էր շոգենաւի թանձր ծխի միջից... Դուք նստած էիք աթոռի վերայ ձել մօրաբքով հետ, որը ննջեց իմ պատմութեան ազդեցութեան ներքոյ: Դուք թող տւիք ինձ խօսելու և հետեւելով լուսինին, նազելի կերպով շարժում էիք ձեր գլուխը, աշխատելով ծածկել ձեր գէմքը շոգենաւի խողովակի շաքում:

Ձեմ լիշում թէ ինչ էի խօսում, բայց խօսում էի անընդհատ, որովհետեւ դուք սիրով լսում էիք ինձ: Ես չէի նկատում ոչ լուսինը և ոչ էլ այն լայն ափօսը, որը թողնում էր իւր յետեւից «Տայն» ամպի նման գորշ կանաչագոյն ծովի վրայ: Ես միմիայն ձեր ասուածային դէմքն էի տեսնում և դիտում էի, ինչպէս դուք աշխատում էիք լուսնի արծաթագոյն խաղաղ լոյսից ծածկել ձեր գէմքը շոգենաւի խողովակի շաքում: Դուք յետ ձգեցիք ձեր մազերը, որոնք հնազանդւելով գիշերային խոնաւ քամու շնչելուն, համբուրում էին ձեր ուսերը, մինչև որ նոյն զւարճասէրը մօտեցնում էր նոյս ձեր կզակին:

Միմիայն Անգլիայի ավեր, որին բոլոր առ ընդէն աւելի մօտեցնում էինք, իմ մէջ դառն մտքեր էր ծնեցնում: Ամբողջ ժամանակամիջոցում դուք մի անգամ միայն դէպի ինձ դարձաք հետեւալ քանի մի խօսքերով. «Ի՞նչ կասէք սրա մասին, Վիլեամ. ահա այս երկաթէ խողովակը ծածկում է ամբողջ աշխարհը, ծուխի միակ ամպը պատում է լուսոյ ամբողջ ծովը, որ իւր շուրջն է սփռում լուսինը: Միթէ նոյնը չէ լինում և մարդուս կեանքում: Տեսնում էք երկուսնդ սէր».

կինքը, բայց չէք կարող հասնել նրան, զգուժ
էք, որ Աստուած կայ, բայց նրա էութիւնը ըմ-
բռնել չէք կարող, դուք ցանկանում էք սիրել և
ընդգրկել ամբողջ աշխարհը, բայց ընկճում էք
տկարութիւնից»:

Ձը գիտեմ թէ ինչ պատասխանեցի, բայց
շատ պարզ լիշում եմ, որ մի ընդհանր յետոյ ձգե-
ցիք ձեր թաշկինակը. ես շտապեցի վերցնել,
մեր ձեռները հանդիպեցին և ձեր ձեռքը սեղ-
մեց իմս:

Ո՛րպիսի անդունդ բացւեցաւ առաջս աս
վայրկեանին: Էմմա, ոչ ոք դեռ ևս չէ չափել
մտքի արագութիւնը և ոչոք հոգու շարժողու-
թիւնը չափելու համար ժամացոյց դեռ չէ հնա-
րել: Գիտեմ, դուք զղջացիք ձեռս սեղմելու հա-
մար և կամ վախեցաք, դուք խոյս տուցիք վերկացաք
և ասացիք, որ գիշերւայ օդը ձեզ վնաս է և զար-
թեցնելով ձեր մօրաբրոջը, դիմեցիք դէպի ձեր
խուցը: Դա մի ընդհանր գործ էր, ինչ թուում
էր, թէ դա երազ է:

Այժմ էլ չեմ լիշում, թէ արդեօք պատասխա-
նեցի ձեր սառը «բարի գիշեր»-ին. Վիլհելմ» խօս-
քերին: Ես մենակ մնացի, վախենում էի ին-
ձանից և գողում ինչպէս մի երեխայ. ինքս

ինչ երեւակայում էի և որդ և Աստուած: Իմ
գոյութեան մի մասը հրճւում և բարձր բացա-
կանչում էր, «Վիլհելմ, դու ամենաերջանիկն
ես աշխարհիս երեսին». իսկ միւս մասը ցաւե-
լով, երկիւղեց քարացած աւելի բարձր հաստա-
տում էր. «դու ամենաթշուառն և ամենաողոր-
մելին ես ամբողջ աշխարհում»:

Այդ երեկոյից սկսած, սիրելի Էմմա, մի տե-
սակ խոր անդունդ բացւեց մեր մէջ. դուք
սկսեցիք խոյս աւել ինձանից. դուք փոխեցիք
ձեր սովորական զբօսավայրը և այլ ևս չէիք ցան-
կանում հանդիպել իմ հայեացքին, որը բուռն
ցանկութեամբ որոնում էր ձեզ և խնդրում
ձեր հայեացքը:

Ինչո՞ւ ուրեմն դուք սեղմեցիք իմ ձեռը, եթէ
վայրկեանական երջանկութիւնը ինձ համար
այդպիսի սոսկալի վիշտ էր պատրաստելու: Ի՞նչն
է ծանրանում ձեր սրտի վրայ, ի՞նչ կայ
ձեր սրտից աւելի զօրեղ: Կարելի է, որ ձեր
հոգու մէջ լինի երկու ոգի, որոնցից մէկը օրհ-
նում է, իսկ միւսը անիծում է: Ինչո՞ւ համար
այդպէս տանջում էք ինձ: Կամ դուք չգի-
տէք, ի՞նչ բան է տանջանքը: Մի թէ լայտնի
չէ ձեզ, չէ որ ես ապրում եմ միայն մի սար-

սափելի և ալլանդակ մտքով, որ դուք ևս տանջուամ էք, որ դուք ևս անիծում էք այն՝ որ անջրպետ դրեց իմ և քո մէջ: Այ՛ո դառը հըրճանքով տեսնում եմ, ինչպէս օրէցօր գուռատուում էք, և երբեմն էլ ձեր դէմքի վրայ արցունքներ եմ նկատում, որոնք դուք թափում էք գիշերային լուսութեան մէջ: Դուք չէք քնում, արտասւում էք: Ես ևս հեկեկում եմ և քունը փախչում է աչերիցս: Այդ դառն հրճանքն է, որ պահպանում է իմ կեանքը, նա հանդարտեցնում է իմ միտքը. ալլապէս չէի կարող տանել և գլուխս վաղուց տրաքած կը լինէր տենդային կատաղութեան և յուսահատութեան ճնշման տակ:

Ձեզ սիրում էի, սիրում լուիկ մնջիկ և այնպէս ուժգին, որ այն միտքը թէ դուք երբ և իցէ իմը կլինէք, սարսեցնում և երկիւղ էր ազդում ինձ: Ես ինձ անարժան էի համարում և երեւակայում էի շրջապատել ձեզ խորին յարգանքի և անսահման սիրոյ մթնոլորտով: Ձգիտէք, թէ ինչ փոփոխութիւն արիք իմ մէջ. թէ ձեզ արժանի լինելու համար որպիսի՝ խիստ փորձի դիմացաւ իմ բնաւորութիւնը: Իւրաքանչիւր անգամ, երբ թուլութիւն էի զգում, եռանդով

և տոկունութեամբ ձեռք էի զարնում արմատախիլ անել այդ, ձեր անան, աստուծային դէմքի և դէպի ձեզ ունեցած սիրոյս օգնութեամբ: Ես ամեն կերպ ճիշդ էի թափում լինել կատարեալ և ձեզ արժանի. թէև երկչոտութեամբ, սակայն պարզ երեսով կարողանայի ձեզ ասել՝ էմմա, ես ցանկանում եմ ձերը լինել, աւէք ինձ ձեր ձեռքը, մենք միմեանց արժանի ենք»:

Դեռ չէ հասել այդ օրը... բայց, ինչպէս հեռու մշուշի մէջ, տեսնում էի, որ երջանկութեան ժամը արդէն մօտենում է. բուռն ձգտումը և մի աներևոյթ երկիւղ ինձ գրգռում էին. և ես գիւժում էի միշտ դէպ առաջ, դէպ առաջ այն ճանապարհով, որի ծայրին երևում էր իմ էմման: Ո՛հ, էմմա, թանկագին է՛մմա, դուք լիովին ինձ հասկանում էք:

Դուք այս բոլորէին զգում էք այն, ինչ որ ես: Բայց դուք խղեցիք կախարդիչ կապը, դուք կործանեցիք այն տաճարը, ուր մտածում էի իմ աստուծոյ արձանը դնել, վարդի թփից քանդեցիք այն բուռը, ուր երևակայում էի գետեղել մեր սէրը, քցեցիք ոտների տակ և կոխկռտեցիք: Իսկ ես թողնելու էի պանդխտութեան ցուպը, որով ուխտ էի զնացել իմ Մեկկէն և

այստեղ գոչեցի այն ճանապարհորդի նման, որը
երկար աշխատանքի և զրկանքի շնորհիւ դիզեց
որոշ դրամագլուխ և, որի վրայ, հալընիք վերա-
դառնալիս, յանկարծակի աւազակները լարձակ-
ւեցին վրան: Ճշմարիտ է, անգին Էմմա, ես անբա-
ղաբաւարի եղայ, երբ դիմելով ձեր մօրաք-
րոջը, խնդրեցի ձեր ձեռքը: Կարճեւ գործը
մի ամենահասարակ կնոջ էր վերաբերում: Կար-
ճեւ ես ցանկանում էի ամուսնանալ միայն նրա
համար, որ չափահաս էի արդէն: Ես ստացայ ձեր
ձեռքը յաւիտեան և չաշխատեցի որոշել, արդեօք
շփոթութիւնից, թէ սիրուց զրգւած այդ ձեռ-
քը սեղմեց իմը «Տոյն»: շոգենուռի վրայ: Փողը
ձեռիս գրախափ դուռն էի բռնում, յուսալով,
որ դռնապանը կբանայ և ինձ ներս կթող-
նէ: Երբէք ես ինձ չեմ կարող ներել այդ կոպ-
տութեան, այդ վարմունքի համար, որ միմի-
այն յուսահատութեան միջոցին կարելի էր ա-
նել: Իսկ դիտէք ինչ պատասխանեց ինձ ձեր մօ-
րաքորը: Նորա դէմքը յանկարծակի լըջացաւ.
պարզ էր, որ պատրաստւած չէր և, մեծ դժու-
րութեամբ շնչելով, պատասխանեց գողգոյիւն
ձայնով՝ «Հարցրէք իրան Էմմային, նա այնքան
խելօք է, որ ինքը և միմիայն ինքը կարող է վեր-

ջնականապէս վճռել: Նորա ցանկութիւնը կլինի
և իմը...» Այս ասելիս կարճեւ ցաւակցութեամբ
և քնքով զգացմունքով դիտում էր նա ինձ:

Այժմ փոշու մէջ թաթախւած ես ձեր ոտն եմ
ընկնում, ինչպէս մի դատապարտեալ, որի ոյժերը
բեկբեկում են երկար բանտարկութիւնից և,
որը յուսահատ սպասում է մի խօսքի, որը կա-
րող է փրկել նորան:

Ես զղջում եմ մօրաքրոջից ձեր ձեռքը խնդրե-
լուս համար, որ խնդրեցայ գրել այն, ինչ
չէինք համարձակում աչքերով արտայայտել՝
զղջում եմ, աղերսանքով ձեզ դիմելուս հա-
մար, որը ձեզ անհամեստ կթւար, իսկ ինձ ան-
արժան: Ես տեսայ իմ տան կործանումը և տա-
ճարիս խորտակումը: Ես տանջւած, քայքայւած,
մոռացւած եմ անապատում: Ես երբեմն ար-
քալից արքայ էի երեւակայում ինձ և դրա համար
հիմայ ստիպւածեմ ողորմութիւն խնդրել հէնց
աւաջին հանդիպողից... և այդ ողորմութիւնը
ձեզանից եմ խնդրում, իմ թագուհի, ձեզանից
եմ սպասում, իմ երկնքի աստուածութիւն:

Էմման Վիլհամսին

Լոնդոն, յունեարի 12-ին 18... Թ.

Յարգելի պարոն.

Ես ստիպւած պատասխանում եմ ձեր նամակին, չնայելով, որ ինձ համար այդ խիստ դժուար է: Յուսով եմ, դուք կը հաւատաք մի դժբաղդ, թող և կարեկցութեան արժանի էակի, որը դեռ ևս սուտ չի խօսել: Նախ քան զրիչը ձեռն առնելը ես շատ արտասուեցի. բայց ես չեմ կարող ձեր կինը լինել, Վիլեամ, ես չեմ կարող ամուսնանալ ոչ ձեզ և ոչ էլ ուրիշ մէկը հետ: Մի հարցնէք, ինչո՞ւ. ձեր հետաքրքրութեամբ մի մեծացնէք իմ վիշտը: Մոռացէք ինձ: Դուք ջահիլ էք, ուժեղ մարմնով և հոգով: Ձեր գեղեցիկ ընդունակութիւններով բազմաւորեցրէք մի ալ կնոջ, որը կարող է ձեր սէրն ընդունել: Ձէ որ Աստուած բարի է և ողորմած. իսկ աշխարհում շատ կան գեղեցիկներ և բուռն սիրով սիրելու ընդունակներ, որոնք արժանի կը լինեն ձեզ: Թող նոցանից մէկը երջանկանալ, թող նա ձեզանով պարծենալ: Բայց նախ և ա-

րնչու չէ՞ որ ես մեռնելու քրում ինձ: Ձէ որ ես մեռնելու քրում ինձ: Բայց դուք սիրում էք լինել անգամ ակնարկում էք այդ նամակում: Ձեր սէրը կարգում եմ ինչիւր բառի և կէտի մէջ, որ գրել է ձեր քը: Դուք գրում էք, որ ոչ ոքի հետ մուսնանալ և չէք ինձ կին:

Միթէ չէք աւելի խիստ է ստեղծել սպանի

տանում և չի յուզենում. նա շարունակ մո-
խիրից աճում է, ինչպէս հին աւանդութիւն-
ների ֆէնիքս*: Երբ նետարդերս դադարում են
տանջանք զգալուց, այն ժամանակ ցաւը փո-
խում է իւր բնաւորութիւնը, տանջանքները
նորոգւում են և դառնում են աւելի ևս սարսա-
փելի: Զայրույթից յետոյ չարչարանքն է ինձ
գերում, ապա յուսահատութիւնը. յուսահատու-
թիւնը տեղի է տալիս խղճի խալթին, որը փոխ-
ւում է հոգեկան անկման: Եւ նորից վիշտ ու
տանջանք: Վամպիրը, որը արիւնս է ծծում,
սարսափելի երազի անուրջն է: Եւ անվերջ, ան-
փոփոխ, սև, յաւիտենական, սառեցնող, անողորմ
ցաւ:

Միսս Էմմա, նա, ով ծաղրէլ է կրօնը, եր-
բէքէ տանջւել: Դուք էք տանջանքներէս պառ-
ճառը և միայն դուք այս աշխարհում հասկա-
նում էք ինձ և գիտէք, որքան ծանր են կրա-
ծըս չարչարանքները:

*Ֆենիքս-թռչուն. յունական phoenix. Աւանդու-
թիւնը հետեւեալն է ասում առասպելական ֆե-
նիքս թռչունն մատին, չնա, զգալով իր մօտալուտ
մահը, այրուց կրակի բոցերի մէջ. բայց նրա
հանգած աճիւնից դուրս թռաւ մի նոր թռչուն:

Իմ մէջ տանջւողը մի մարդ չէ. իմ անձնա-
ւորութիւնս ներկայացնում է երկու մարդկա-
յին ցեղերի միաւորութիւն: Այդ ձեզ յայտնի
է: Իմ մէջ սէրը միացրեց երկու ազգեր, երկու
ճակատագիր, երկու աշխարհ: Մայրս իտալացի
իսկ հայրս անգլիացի էր: Սոքա այնքան տար-
բեր անձնաւորութիւններ էին, որպիսին կարող
է ստեղծել միմիայն բնութիւնը. իսկ սէ-
րը աւելի զօրեղ լինելով, քան թէ բոլոր աշ-
խարհները, (ԱՄԻԿԵՆ) միացրեց նոցա: Ես
զգում եմ երկու բնութիւն, երկու աշխարհ
մտածմունքների, զգացմանց, ուրախութիւննե-
րի և վշտի: Շատ յաճախ զգում եմ Վեգուվի
այր և Լոնգոնի մառախուղը. և դուք ինք-
ներդ էլ երբեմն կատակով ինձ հրաբուխ կամ
մառախուղ էիք անւանում, նայելով խօսողը
իտալացի թէ անգլիացի էր:

Ահա այդպիսի օրերում պաղգ հասկանում
եմ, քան երբ և իցէ, թէ ինչ է նշանակում
կրկնակի մարդ լինելը: Բուռն գգացմունքը,
վաւերեակայութիւնը կայծակի արագութեամբ
ինձ բորբոքում են: Իմ մէջ միաժամանակ
մրրկւում են և Մօնչիլլեյօն և Վեգուվը, և ես
ինձ երկիւղով դիտում եմ, որ այդպիսի բոցը

մոխիր կգարձնէ իմ թույլ և քնքուշ մարմինը.
այն ժամանակ ես տանջուում և հրճուում եմ այն
երկրի ուրգու նման, որը ծնել է Ռանտէսին,
Լիօպարդէին, Մակիավելլուն, և Բօրջիալին:
Բայց զգացմունքները ինձ չեն այրում, երևակա-
յութիւնը ինձ չի սպանում. հրաբուխի բաժա-
կում երբէք մոխիր չեմ տեսել, բացի շիկացած
լաւաից: Անգլիացին չի մեռնի այդ բոբբոբուդ
կրակից. ես գիտում եմ, թէ ում եմ սրտիս
հարւածները և կամքիս ամբողջ ոյժը լաբում,
հանգցնելու այդ բոցը: Այսպիսով, մարդու
գործերը և զգացմունքները շնչում են և կրո-
ւում, իսկ բոլորը միասին անվերջ տանջուում:
Սակայն, երբ իտալացին այդպիսի Կոզմունք-
ներից, բուռն կրքերից թուլացած քնում է և
հանգստանում, միևնույն ժամանակ անգլիացին
արթնանում է աւելի առողջ, ուժեղ և գոր-
ծունեալ, նորոգում է կիրքն և վիշտը: Ես ըզ-
գում եմ իտալացու, իսկ գործում անգլիացու
նման և եթէ գոյութիւն ունի մի մշտական
շարժում, եթէ անվերջ վիշտը երազ է, ապա
ուրեմն ես զգում եմ նոյնպիսի անվերջ շար-
ժում և չափաւանդական վիշտ:

Իտալիան բնութիւնից օժտւած է հրաբուխ-

ներով և դրա հետ միասին անուաշբորը նարըն-
ջի անտառներով. սակայն իմ մէջ կայ միայն
հրաբուխ և մշուշ, անտանելի և անբովան-
դակ տանջանք:

Ինչո՞ւ համար սէրը այդպիսի կոպիտ կա-
տակ արեց. ինչո՞ւ սպիտակ արջը՝ վագրի, ե-
ղենին (COCHA) վարդենու և սառուցը՝ կրակի
հետ միացրեց:

Բացի դրանից, մինչ համբերութեամբ ես
կրում եմ այդ անտանելի ցաւը, որը անպատճառ
արտասուքով պէտք է վերջանայ, այդ միջոցին
անգլիացին, լարելով կամքի բոլոր ոյժը, ձրգ-
տում է տիրանալ տանջանքներին, նրան բար-
ութիւն տալ և գտնել գեղարուես-
տի տանջւած սրտերի մէջ:

Երբ այս բոլորը և
գտնել այն գաղտ-
նորդի բերել հո-
ւն ժամանակ ան-
այժմ, այլ կարող
էմ մտա, ինչո՞ւ ու-
նասպան դառնալ:
Գէք: Մեր հոգիներ-
մաճայն են բարա-

խում, ձեր միտքը արձագանք է որոնում իմ
հոգու մէջ, ապա ուրեմն սպանելով Վիլեա-
մին, ձեզ ևս սպանած կլինէք: Ինչո՞ւ ցանկանում
էք մեռնել դուք, որ այդպէս մատաղ, գեղեցիկ
և սիրող էք: Ինչո՞ւ ցանկանում էք ոչնչացնել
երկու արարածներ, որոնք միանալով ամենա-
երջարիկը կը լինէին, կօրհնէին իրանց ծըն-
ւած ընտանիքը և Արարչին, որ նոցա ստեղծել է
միմեանց համար: Ինչ խօսք, ինչ գաղտնիք
կարող է արդարացնել այդպիսի մի սարսափե-
լի չարագործութիւն: Ես սնապաշտ եմ դառ-
նում. կարծում եմ թէ գտնւում եմ ցուրտ և
խոնավ այրում, ուր բազմած է Սիբի:

Հեմ կարող տեսնել և

թեամբ սպասում եմ

րա խօսքերին: Ո-

սը, նմանապէս

թիւնը: Գոյութ

ըր, որը սար

լիտի) ի գուր

և ստիպում նր

ծոյ նախախնամ

Ինչո՞ւ հեմ խելս

նում մեռնել: Եթ

այետինը, ամենազգեալդը, չնչինը և արհա-
մարհելին լինէի, բայց և այնպէս ես այր մարդ
եմ, իսկ դուք կին. դուք պարտական էիք ձեռք
կարկառել վշտի և տանջանքի մէջ դեգերողին և
յուսահատուածին: Գէթ մի անգամ ևս երջան-
կացրէք ձեր զոհին: Նախ քան օրհասական
կախաղանին լանձնելը շնորեցէք ձեր միակ, մի
հոտիկ խօսքը:

Ձեզանից սէր և ողորմութիւն հեմ խնդրում
միայն մխիթարել եմ ես աղերսում: Պատասխա-
նեցէք վերջին նամակիս, երեք օրն արդէն անցաւ:
Հասկացէք, Էմմա, ինչ է նշանակում երեք օր:
Երեք օր ու գիշեր է, 72 ժամ է, ինչ որ կար-
դացել եմ ձեր ձեռքով գրած թերթը, որը
ստում էր, թէ դուք իմը չէք կարող լինել:
Դարուս օրէնքները մահաւան պատիժը ընդու-
նում են, բայց նոքա պահանջում են կարգալ
մեղադրւածի առաջ դատաւճիռը, որպէսզի նա
իմանալ թէ ինչո՞ւ են սպանում իրան: Դուք
մէթէ իրաւունք ունիք ինձ հետ աւելի վատ
վարւելու, քան մեղադրեալի հետ:

Նամակս ստանալուց երեք ամբողջ օր է տն-
ցել, և դուք կարողացաք երեք օր լռել: Միթէ
կին կամ մարդ չէք: Թէ լիրաւի դուք սառե-
նաւոր սէր:

ցիք կամ մեռաք: Ի՞նչպէս կարող էք հանգիստ մնալ, երբ հաստատ գիտէք, որ մի քանի քայլ ձեզանից հեռու, ձեր տան առաջ, ձեր պարտէզի պատի մօտ շրջում է մի մարդ, որ ձեզ է պատկանում, կազմում է ձեր մասը, որ նա դուրս է սառնամանիքից, որ ցրտից նրա ատամները զնգզնգում են, և որ ոչ ոք նրա առաջ դուռ չի բաց անում, ոչ ոք նրան չի տաքացնում:

Ճշմարիտ, միսս Էմմա, դուք սառեցաք և անզգայացաք: Ես կասկածում և յոյսս կորցրնում եմ: Աղաչում եմ ձեզ ձեր հօր անունով, որին դուք միշտ լիշում էք, իսկ ես ատում եմ, ինչպէս և բոլոր մարդիկներին և ձեզ և ամբողջ տիեզերքը: Նզովում եմ ձեզ ձեր հօր անունով, պատառխանեցէք գէթ մի խօսքով:

Էմման Վիլեամին

Լոնդոն. յունւարի 16-ին 18... թ.,

Յանուն իմ հօր, որին դուք ատում էք, 'ի սէր ձեր դէպի ինձ ունեցած սիրոյ մոռացէք ինձ, Վիլեամ:

Միթէ՞ դուք չգիտէք, որ ես էլ տանջւում եմ և նզովում ճակատագիրը, այն ճակատագիրը որը ձեզ ևս այդպէս սարտափեցնում է, որը իսկապէս գոյութիւն ունի, ցնորական երազ չէ. այն ճակատագիրը, որը առաջնորդում է ձեզ և անչափ զօրեղ է մեզանից: Մենք—անսահման ովկիանոսի շնչին կաթիլներս—պարտաւոր ենք դոհանալ ովկիանոսից մեր ուրախութեան և վշտի համար: Տունը գոյութիւն ունէր և ընտանիքը կազմւած էր արդէն, երբ մենք աշխարհ եկանք և մենք նրանց համար պարտական ենք զոհել մեր արտասուները և արիւնը: Իւրաքանչիւր անհատ, որի կեանքը աչապէս աննշան է, իրաւունք չունի հանգցնել արեւը այն դիտաւորութեամբ, որ նրա կենդանացնող ճառագայթներով տաքացնէ իրան և միայն իւր ցեղը:

Ինձ մոռանալով, Վիլեամ, դուք կկատարէք ձեր պարտքը, կկատարէք մի բարձր և վսեմ գործ և ես ձեզ հետ միասին կձգտեմ միևնույն նպատակին: Մինչ մենք կենդանի ենք մեզ կը միացնէ սուրբ պարտականութեան կապը: Յիշեցէք ձեր Էմմային բայց սիրեցէք ուրիշին: Նախ և առաջ դադարեցէք ինձ սիրելուց: Սե-
*

ըր մարդուս համար չէ ամեն ինչ. նրանից բար-
ձրը կանգնած են պարտականութիւնը, առաքի-
նութիւնը, ացնութիւնը, անձնագոհութիւնը,
և ընտանիքի անվերջ բաղդաւորութիւնը:

Բոլոր արարածները ընդունակ են սիրելու,
բայց ոչ հակառակելու սիրոյ կրակին. միայն
մարդուն է լատուկ հանգցնել սէրը և դառ-
նալ մեծ և ազնիւ: Հանգցրէք ձեր Վեգուվը,
Վիլեամ, և եղէք կրկին անգլիացի: Ես տանջ-
ւում եմ ոչ պակաս ձեզանից, բայց ես կարո-
ղանում եմ հանգիստ մնալ, կարողանում եմ
ցամաքեցնել արտասուքներս՝ չթողնելով նո-
ցա ընկնել այս թղթի թերթի վերայ, որպէս-
զի նա ձեզ կրակ ու բոցի մէջ չքցէ, որը
կարող է ձեզ այրել, իմ սիրելի բարեկամ: Ես ին-
քրս կառարեալ անգլիացի եմ: Բացի դրանից,
իմացէք, իմ Վիլեամ, ես տանջւել եմ միշտ, ես
փորձւած եմ վշտերի մէջ, իսկ դուք լուզւում
էք մի անյաջողութիւնից, որովհետեւ այս ա-
ռաջին անգամն է, որ վիշտը ձեզ այցելում է:
Անշուք մեծ է ներկայ վիշտը, թանկագին Վի-
լեամ: Ես գիտեմ որքան մեծ է դա. բայց չէ
որ ես վաղուչ, սրանից շատ առաջ, հոգար
անգամ տանջւել եմ. տանջւել եմ ամբողջ տա-

րիներով, այդ պատճառով էլ կեանքս թւում է
ինձ շատ երկարտև: Եւ այս սկզբնական վիշ-
տը բոլոր միւսներէից ամենազօրեղն է. նա ինձ
զրկում է հոգու քաջութիւնից, խլում է սթեքս,
սպանում է ինձ: Դուք չէք բաւականանում,
անգին Վիլեամ, այսքանով, որ ես աժմ ասում
եմ ձեզ, կամենում էք աւելին գիտենալ:

Ես իմ մէջ այնքան համարձակութիւն չեի
գտնում կռիւ վճռելու. այս երեքօրեալ լուռ-
թեան միջոցին, երբ դուք երեւակայում էիք
թէ ես կամենում եմ ձեզ տանջել, այդ երեք
օրւալ ընթացքում ես ինձ դաշնակիցներ էի
արձնում: Բարի մօրաքոյրս արատուում էր ինձ
հետ, բայց նա ինքն ևս կարօտում էր այն
պաշտպանութեան, որը ես էի նրանից պահան-
ջում: Երկու օր արտասուքով անցկացնելուց
յետոյ, իմ անգին Վիլեամ, ես ուժերս հաւա-
քեցի և զիմեցի հօրս նախկին բժշկին, որին
նա մատնացոյց էր արել որպէս ամենալաւ
խորհրդական կեանքի նեղ հանգամանքներում:
Բարի ծելունին համարեա ամբողջ օրը ինձ
հետ նստելով՝ խորհուրդ տւեց ինձ հեռանալ
Անգլիայից:

Ձեր՝ այս նամակը կարգալու միջոցին ես ար-

դէն մալը ցամաքում կլինեմ: Գուք, ի հարկէ՝
հարց կտաք, թէ որտեղ եմ ես, ուր եմ տանում
իմ խաչը:

Մի տոմսակ թողէք մեր տանը և նրա մէջ
խոստացէք լսել ինձ, ապրել, ամեն միջոց փոր-
ձել՝ այն նպատակով, որպէսզի ինձ մոռանաք
և այժմեանից եղէք միմիայն իմ եղբայրը:

Դարձեալ, Վիլեամ, երգեցէք, սր չէք որո-
նիլ ինձ և այլ ևս նամակագրութիւն չէք ու-
նենալ ինձ հետ:

Մնաք բարեաւ, Վիլեամ: Մի վատնէք երի-
տասարգութիւնը, ձեր ոլթերը և տաղանդը
անօգուտ ճանապարհով, որը կարող է ձե-
լուահատութեան մէջ ձգել: Մենք չափազան-
աւնգօր ենք ապրելու ամեն բանի հակառակ.
Թող մեր կեանքը միայն անընդհատ անէծք
չը լինի: Դիտեցէք ձեր շուրջը և դուք կը
տեսնէք, թէ որքան հազաւագիւտ քաջագործու-
թիւններ կարող էք կատարել և քանի՜ վեհ
ճշմարտութիւններ կարող էք գտնել ու տարա-
ծել. աշխատեցէք, միտիմարեցէք զժբաղդնե-
րին, քաջալերեցէք վհատածներին, սերմանե-
ցէք ձեր շուրջը ուրախութիւն և ճշմարտու-
թիւն: Նստարեցէք այդ բոլորը լսելուն ձեր՝

դէպի ինձ ունեցած սիրոյ, ի սէր դէպի

«Ձեր քոյր Էմման»

Վիլեամը Էմմային:

Այո, Էմմա, ես պէտք է ապրեմ, որովհետեւ
դուք ինձ սիրում էք, ես պէտք է ապրեմ,
որովհետեւ դուք պէտք է շարունակ ինձ սի-
րէք: Բայց երգում եմ, ես ձեզ երբէք չեմ մո-
ռանալ: Ես ձեզ սիրում եմ. դուք էք իմ բաղ-
դաւորութիւնը, իմ աստածը, դուք ինձ հա-
մար ամեն ինչ էք:

Վիլեամը Էմմային:

Սան-Տեղենցո, Ապրիլի 20-ին 18...թ.

Անգին քոյրիկ, անիծեցէք, սակայն ուրեմն
դրէք ինձ: Ես չեմ կարող չլայտնել ձեզ այն, որ
ես այստեղ եմ, ձեզ մօտիկ: Իմ ուրախութիւնը
այնքան մեծ է, որ ես անկարող եմ թաղանթի
նրան, ես չեմ կարող լռել: Այստեղից տեսնում

եմ այն տունը, ուր դուք բնակեցիք. տեսնում եմ փակած պատուհանները, որոնց լեռնում գուցէ այս բոպէիս դուք երազում էք կամ տխրում: Ինձ ձեզանից բաժանում է միայն փոքրիկ պարտեզը և նորա ծառերը ծովային քամուց տատանելով՝ սիրով շփւում են ձեր տան պատերին:

Սմբողջ գիշերը աչքերս չիփեցի:

2էք գգում արդեօք, որ Սան-Տերենցօյի օդը անցեալ գիշերւանից բոլորովին փոխել է, որ նա այլ ևս այն չէ, ինչ որ առաջ էր: Ես ըզգում եմ ինձ երջանկութեան զագաթնակէտին հասած և կարծես բոլոր մարդիկ նայում են ինձ իբրև աշխարհիս ամենաերջանիկ մարդու վերայ: Խոստովանում եմ ձեզ, բայց միայն չը ծիծաղէք, որ ես տառն անգամ նայեցի հայելու մէջ, որպէսզի համոզեմ, թէ չիբաւի ես եմ այն մարդը, որը փայելում է այդ երջանկութիւնը, որի սրտի մէջ թափանցեց նոր լուսի և բախալի ճառագայթը...

Սի անգամ մձուելով խախտել տւած խօսքս՝ չորոնել ձեզ (սորանից աւելի զարհուրելի մեղք, ինձ թւում է, չի կարող լինել աշխարհում), ես համարձակւում եմ օտնակոխ անել և միւս ուխ-

տըս, ալսինքն ձեզ գրել: Ես ձեզ այնքան շատ բան ունիմ ասելու, որ չգիտեմ, որից սկսեմ: Ես ամբողջապէս լուզւած եմ, խելքս գլուխս չէ գալիս. ամեն մի վայրկեան ընդհատում եմ նամակը և նայում ձեր պատուհանին: Իմ հոգին շրջապատում է ձեր տունը սիրոյս մթնոլորտով և փաղաքշում է նորան, ինչպէս ամենաթանկագին և սուրբ առարկայի:

Ես անկարող եմ մտքերս գտաւորել այս չքնչին թերթի կտորի վրայ. ես ուզում եմ ամենից առաջ հաղորդել ձեզ, որ ես այստեղ եմ, ձեզ հետ միասին Սան-Տերենցօյում: Հալածեցէք ինձ հարիւր մղոն հեռու այստեղից և կամ դնելով ձեր ձեռները եմ գլխին, ժպտալով ասացէք. «Վիլեամ, իմ եղբայր, ես քեզ ներում եմ»:— Յտեսութիւն, Էմմա, ես գնում եմ սուրհանդակ որոնելու, որը պէտք է լանձնէ ձեզ այս նամակը:

Վիլեամը Էմմային.

Սան-Տերենցօ, ապրիլի 20-ին 18...թ.

Ես դուրս եկայ փողոց, նամակը ձեռիս. սիր-

տըս սաստիկ բաբախում էր և ես այնպէս
սաստիկ վրդոված էի, որ եթէ ոստիկանը պա-
տահմամբ հանդիպէր, անպատճառ կբանտար-
կէր ինձ, որովհետեւ դէմքիս վրայ լանցանք էր
դրօշմւած: Եւ միթէ լանցանք չգործեցի ու-
նակոխ անելով տւած խօսքս:

Ես անցայ ձեր տան մօտով. դուռը կողպած
էր, պատուհանները փակ. բոլորը քնած էին:
Ես տան շուրջը պտույտ գործեցի և կանգնելով
այնտեղ, ուր պատի մօտ խոտի մէջ շաւիղ էր
բացւած՝ դիտեցի շուրջս և, ոչ ոքի չնկատ-
լով, մօտեցայ ու պատը համբուրեցի: Միթէ
դուք չզգացիք իմ համբուրը... Յետոյ փախալ,
կարծես սարսափելի սպանութիւն էի գործել.
Ես վազում էի երկիւղից և սարսափից դարձած,
վազում էի ամբողջապէս քրտնաթոր եղած կէս
ժամ շարունակ ամայի ճանապարհով դէպի ձի-
թենինների անտառը, երբեմն երբեմն նայելով
կամ ձեր տանը կամ ծովին և կամ կապույտ եր-
կնքին: Ես անընդհատ վազում էի, մինչև որ լող-
նածուծիւնից ստիպւեցի կանգնել: Որքան կիրք,
որչափ կեանք է ծածկւած մարդկային օրգանիւ
մի մէջ: Ես զգում էի, որ ներսս հրճւանքի ամ-
բողջ աշխարհը ահռելի պատերազմ էր մղում

վշտի աշխարհի հետ: Ես գիւղ վերադարձայ ծովի
ափով և դնում էի արագ քայլերով բոլորովին
ջրի եզրով. ես հրճւանքով դիտում էի թէ
ինչպէս ծովի ալիքի քնքոյշ և սպիտակ փրփուրը
ողողում էր բարակ աւազի վրայ թողած իմ ոտի
հետքերը: Ինչ բաւականութիւն են զգում սո-
վորաբար մարդիկ դիտելով այն, հագիւ նկատելի,
գիծը, որ բաժանում է ծովը ցամաքից, անաս-
մանը — սահմանափակից, անցաւոր կեանքը յոյ-
սերի և ձգտումների լաւիանական երազներից:
Ես հարցրի, կա՞յ արդեօք Սան-Տերենցոյում
փոստ և պատասխան ստացայ թէ չկայ և նա-
մակը հարկաւոր է հասցնել Լերիչի: Այդ պատ-
ճառով մնում էր միմիայն որոնել որ և է նա-
մակատար և նրա ձեռքով ուղարկել նամակը,
որը շատ հեշտ ու պարզ էր: Ինքս բարձրանա-
լով մի քարակոյտի վրայ՝ ժամացույցը ձեռքիս՝
սպասում էի ոտաբոքի փոքրիկ ձկնորսի վերա-
դարձին, որին ես լանձնաբարութիւնս էի արել:
Երկու անգամ ինձ այնպէս թւեցաւ, իբր թէ ժա-
մացույցիս սլաքները կանգնել են և մօտեցնում
էի ականջիս: Վերջապէս դադարեցի նայելուց
և անհամբերութիւնից լուզւած սկսեցի պոկոտել
անուշաբույր ծաղիկները, որոնք առատութեամբ

ծաղկել էին իմ շուրջը:

Օ, իմ էմմա, որքան ծիծաղելի է սիրահար-
ւածը անսիրտ մարդու մօտ:

Մի քանի բառերից լեռնոյ վերադարձաւ փոք-
րիկ ձկնորսը, մի քարից միտը թռչկոտելով՝
ձեռքին բռնած իմ նամակը: Ես նորից փակեցի
աչքերս փոքր երեխայի նման մտածելով, որ
ալիքսիսով նա էլ ինձ չի տեսնի: Սակայն վար-
ձած նամակատարը մօտեցաւ ինձ և առաջ, որ
դռները դեռ ևս փակ են, որ ոչ մի գանգակ
չկարողացաւ գտնել և ընդհանրապէս չգիտէր
ինչ կերպով արթնացնել քնածներին:

Բայց ճարպիկ տղան փակած դռների առաջ
էլ իր լուսը չէր կտրել. նա բարձրացել էր ա-
ռաջին յարկի երկաթեայ վանդակի վրայ. սա-
կայն ամենն էլ փակ էր գտել. նայն իսկ խո-
հանոցում, աւելացրեց նա, կառւի հոտ աչ-
քամ չկար: Այժմ նա եկաւ ինձ հարցնելու թե
արդեօք կարող է քարով դռուք ծեծել և արթնա-
ցնել ալիք քնկոտներին՝ ինչպէս ինքն ան անու-
էր ալիք տան բնակիչներին: Պատմելու միջոցի
նրա թուխ և անմաքուր, բայց միևնույն ժա-
մանակ խելօք դէմքից, չէին անհետանում ա-
մեն տեսակ ծամածռութիւններ:

Ես նրան արգելեցի աղմուկ բարձրացնել, լեռ
առաջ նամակս և ահա այժմ նստած նուրից
գրում եմ ձեզ: Սէրը մարդուս երեխայ է դարձը-
նում, իսկ երեխաները աւելի սիրելի և անմեղ
են, չնայելով, որ, միևնույն ժամանակ, ամենա-
անհանգիստ էակներն են այս աշխարհում: Ես
այժմ այստեղ եմ: Գլուխս քիչ է մնում արաք-
ւի, բայց ես կրկին բաւական հանգիստ եմ և
կարող եմ ձեզանից ներողութիւն խնդրել, կա-
րող եմ արդարանալ և պաշտպանւիլ, կարող
եմ հասնել այն կէտին, որ դուք ներէք իմ
լոնձանքը:

Դուք Լոնդոնից դուրս եկաք, իսկ ես մնացի
այնտեղ: Ահա և այն տանջանքների պատմու-
թիւնը, որոնք ես չկարողացայ տանել երեք
ամսուայ ընթացքում և, որոնք իմ ամբողջ կեան-
քում առաջին և, յոյս ունիմ, վերջին անգամ
ինձ ստիպեցին կտրել տւած խոսքս:

Առաջին օրերի կատարեալ լուսահատութի-
ւոյց լեռնոյ ես փոքր ինչ խելքի եկայ և սկսեց
մտածել, ինչպէս պատրաստուեմ իմ ապագա
խառնքի հոմար: Ես վճռեցի գրել ձեզ և անցկա-
նել երկու կամ երեք ժամ ձեզ մօտ: Կնքելո
նամակը՝ կարծես փոստայով ուղարկելու դիտա-

ւթեամբ՝ հրամայեցի թամբել ձիս և ճա-
 սրհ ընկալ: Հասնելով մինչև առաջին բզ-
 սվայրը, որին ճանապարհին հանգիպեցի,
 իմ Կայծառն եօրղալ գցեցի, երեւակայելով,
 արող եմ ձեզ հասնել և տնձամբ յանձնել
 ու նամակը: Զբօսավայրը այն ժամանակ
 արկ էր. ես միայնակ թռչում էի ձիուս
 նստած և վառ երեւակայութիւնը պատ-
 ցնում էր իմ աչքերի առաջ իբր թէ՝ մի-
 քական ծովի ափին եմ, գտել եմ ձեր տու-
 կարձես տեսնում եմ ձեզ պատուհանում,
 թէ դուք ժպտում էք և քաղցրութեամբ
 ելում ինձ. իսկ ես բարձրանալով ստպան-
 ների վերայ, յանձնում եմ ձեզ իմ նամա-
 կս բոլորովին խորատուգւեցի աչք տնուր-
 ջ և ամբողջ ժամանակը երազում էի իբր
 օտ եմ, մինչև որ ձիուս յոգնածութիւ-
 թպեց ինձ վերջապէս տուն վերադառ-
 ւուն գալով զգացի սաստիկ յոգնութիւն,
 ւեցի և մօտ մէկ-երկու ժամ կիսաքուն
 յայրի: Այն լուսաբոկոյ յետոյ, որը ես
 մեկնում էի, որ անվերջ տւէր, գիմեցի գէպի
 գրատեսակը, կարդացի ձեր նամակը և ձեր
 ութեան մէջ մտնելով փորձում էի պատաս-

խանել: Ես պատրաստ եմ ասել ձեզ բոլորը, որ-
 պէսզի դուք իմանաք թէ որքան բուռն կեր-
 պով սիրում եմ ձեզ:

Ի հարկէ, իմ կեանքը նման չէ այն կեան-
 քին, որալիսին դուք ինձ խորհուրդ տւիք, բայց
 այլ կերպ ապրել ես անկարող եմ. հրաժարւել
 այդպիսի կեանքից կարող եմ, միայն ինքնաս-
 պանութեան պայմանով: Դուք գրում էք, որ
 ես պետք է սովորեմ դժբաղդներին միխթարել
 փոքրօգիներին քաջալերել և շուրջս ուրախու-
 թիւն ու ճշմարտութիւն սերմանել. բայց ձեր
 խեղճ Վիլեամը կարող է միայն մի բան անել-
 սիրել ձեզ, սիրել այն բուռն եռանդով, որը
 յառաջանում է յուսահատութիւնից: Շարու-
 նակ ցնորական լարւած դրութիւնը, մի ինչ
 որ թափանցիկ օգային աշխարհում սաւառնելը,
 լալեկոծող և մաշող թափառումը ինձ աստիճա-
 նաբար հասցրին ծայրալեզ դիւրագրգռու-
 թեան, կատարեալ խելացնորութեան, որից ես
 տւելի՝ քան մահից՝ վախենում եմ: Մանկութիւ-
 նից սկսած ինձ սարսափեցնում է գիտակցու-
 թեան մահը՝ խելացնորութիւնը, վախեցնում է
 տւելի քան ինքը մահը, որ միայն չնչին արա-
 րածի կեանքի ընդհատումն է:

Եւ ես կենդանացայ այնպէս, ինչպէս ամբողջ
տարիներով ճնշւած զսպանակը, որը լոնկարծ
ազատուում է իրան ճնշող ծանրութիւնից և ան-
ակնկալ ձգւելով, ոչնչացնում է իւր ճանապա-
րհի վրայ եղած խոչընդոտները:

Մի քանի բոպէում ես պարզ որոշեցի՝ իմ
դիրքը այս աշխարհում. ես գգում էի, որ ե-
ռամոսեայ անջատումը իմ՝ դէպի ձեզ ունեցած
սէրը կրկնապատկեց, զգացի, որ առանց ձեզ
իմ կեանքը մի անտանելի լուծ և անասելի
չարչարանք է: Ես ձեզ խոստացայ ապրել. բայց
եթէ դարձեալ կշարունակւի նոյնը, ինչ որ
վերջին երեք ամսւայ ընթացքում էր, իմ գի-
տակցութիւնը կխանգարւի. իսկ դուք, 'ի հար-
կէ, այնքան բարի էք, որ ձեր Վիլեամի համար
իւելացնորութիւն չէք ցանկանալ: Ես մտածեցի
գտնել ձեզ, փնտռել նոյն իսկ աշխարհի ծայ-
րում և, եթէ հնարաւոր է, խնդրել ձեզանից
սէր կամ աւած խօսքս լետ ստանալ: Դիւլ-
ֆան, դժւարին էր, բայց նա շատ աւելի խոտա-
պտհանջ է դէպի իւր վերջնական վճիռը: Ես
անկարող եմ ուրիշ ելք գտնել և կամ աւելի
սառը մտածել: Ուղեղի լարերին թոսից, սրտի
հրաբուխից ծնւում են հազար ու մի մտքեր,

հազար ու մի կրքեր, որոնք հիւսւում, ընդ-
հատւում և կռւում են միմեանց դէմ. բայց
հասնում է վերջնական կռւի՝ որը և մշուշը
փարատւում է, կորչում է երկչոտութեան կաս-
կածն ու սարսափը և սրարգւած Ֆօնի վրայ
մնում է միայն մի Դիւլֆան, ճիշտ ձևակերպ-
ւած... մնում է կռիւ երկու սկզբունքների,
երկու կրքերի, երկու անձնաւորութիւնների,
երկու թշնամի խմբերի, կարճ ասած, միշտ
փոփոխւում են երկու տարրեր, որոնցից մէկը
պէտք է լաղթող հանդիսանալ, իսկ միւսը
լաղթւած:

Իմ Դիւլֆան այսպէս էր. կամ ապրել ձեր
սիրով և կամ մեռնել:

Անուրջների թագաւորութիւնից կրկին աշ-
խարհային իրականութիւնը վերադառնալով և
հեռացնելով ինձանից ամբողջապէս իտալական
սոփեզիան, որը ինձ ներշնչեց այդպիսի վառ
սէր, ես ինձ նորից կատարեալ անգլիացի գգացի
և մի վայրկեան անգամ չերկբայեցի այն բանի
համար, որ կգտնեմ ձեզ: Դուք չէք սիրում ձմեռը,
եղևնին և հիւսիսի սպիտակ սփռոցը և այդ
սպտառուով էլ դուք Խաղիալումն էք. իսկ դու
ևս այդ երկրում կատարած անցեալ ճանա-
շխանդ սէր:

պարհորդութիւնից դուք երկու գեղեցիկ լի-
շատակներ պահպանեցիք, որոնց մասին մենք
յաճախ և երկար խօսակցում էինք արևի մայր
մտնելու ժամանակ: Ես համողւած էի, որ դուք
կամ Սօրբենդօլումն էք, կամ Սպեցիալի ծովա-
ծոցում: Ոչ խարէութիւն և ոչ էլ մտացա-
ծին բան է այն, որ սիրտը կարող է նախարդ-
գալ:

Չի կարելի սիրել առանց սիրող սրտերի 'ի
մի ձուլւելուն: Այդ պատճառով էլ սիրտը նա-
խագուշակելու ընդունակ է: Նա կարողւմ է
նոյն իսկ իր մէջ այն, ինչ որ արտագրւած է
մի այլ գրքից, գգում է ուրիշ անձի կեանքը, որ
նրանից անբաժան է, կեանք, որը, այսպէս ա-
սած՝ ուժով բաժանած է սեպհական հոգուց:

Ես եկայ Սպեցիա և սկսեցի որոնել բոլոր հիւ-
րանոցներում և տներում. այսպիսով ես միայն
երեկ կարողացայ մի նաւավարից տեղեկանալ,
որ երեք ամիս առաջ նա տարել է երկու կա-
նանց Սան-Տերենցո. մէկը, ասում էր նա, շատ
գեղեցիկ էր և մատաղ, ունէր փոքր ինչ հի-
ւանդոտ դէմք, իսկ միւսը հասակաւոր, լիքը
և, ըստ երևոյթին, շատ բարի: Այդ անպատ-
ճառ դուք պէտք է լինէիք ձեր մօրաբորջ

հետ: Ես խնդրեցի մակոյկավարին, որ անմի-
ջապէս Սան-Տերենցո հասցնէ ինձ. նա յամա-
ռեց մտնանցոյց անելով այն բանին, որ խիստ
քամի բարձրացաւ և աւելի լաւ կլինէր եթէ
մի թիավար ևս վեցնենք: Ես չհամաձայնեցի:
Նա միայնակ տարաւ ձեզ, միայնակ էլ պէտք
է հասցնէր ձեզ մօտ և ձեր Վիլեամին: Ես
նստեցի ղեկի մօտ, առաջատները սաստիկ
փքւեցին քամու սաստկութիւնից և հէնց կար-
ծես պատրաստ էին պատառւելու: Մենք ա-
րագ սլանում էինք ալիքների վրայով: Բայց ես
աններելի կերպով շփոթւած էի և ամեն բո-
ւրեւ սպասում էինք, որ ահա նաւակը կիշըր-
ւի ժալուերին կուչելով և կամ կշրջւի: Վեր-
ջապէս նաւակավարը չկարողացաւ այլ ևս
համբերել և խնդրեց ինձ հեռանալ ղեկից: Ես
հնազանդւեցի և նոյն իսկ ուրախ էի, որով-
հետեւ կարող էի դնալ ցռուկի մօտ: Երջապատ-
ւած երկու առաջատներով, ալիքից քառորդ
արշին հեռաւորութեամբ, կանգնած էի, մին-
չև ոսկրոներս սառը քամուց փետացած, աչքե-
րով ուսում էի այն հրաշալի գրախտը, որ
կոչւում է Սպեցիալի ծովածոց, նրա բլուրները
սարերն ու հովիտները: Ես սիրով նայում էի

ձիթենու իւրաքանչիւր տերւի վրայ, իւրաքանչիւր դալարու վրայ, ուշադրութեամբ հետեւում էի մարգարտանման փրփուրին, որը անհետանում էր յալիքի գազաթում և անցնում էր մեր նաւակի տակից և ամբողջ կուրծքով ծծում էի ծովային թարմ օդը՝ ամբողջապէս հրճելով այդ դրախտով, ուր միայնութեան մէջ ապրում է իմ Էմման:

Գեռ մինչև դիշերւայ վրա հասնելը ես կարողացայ հասնել Սան-Տերենցո և իսկոյն դիմեցի գէպի «Unione» սրճարանը. այստեղ ես հարց ու փորձ արեցի ձեր մասին, որը իմ կողմից անուշադրութիւն և նոյն իսկ աւելի յանդգնութիւն էր. բայց ոչինչ նոր բան չիմացայ: Յետոյ սենեակ վարձեցի ձեր տան գէմ ու գէմը և շուտով ես ինձ ամենաերջանիկ մարդը զգացի. բայց երջանկութիւնը ինձ չհաբեցրեց, որովհետև ես գիտէի թէ ինչ բանի պէտք է սպասեմ: Երեկոյեան տեսայ պատուհանում ձեր աստուածային գունատ գէմքը: Ես ընդամենը մի քանի քայլ հեռու էի ձեզանից. բայց կամքի սաստիկ ոյժով խեղդեցի իմ հոգուց թռչող աղաղակը—«Էմմա, Էմմա» և հետևաբար պատուհանից պառկեցի անկողնի

վրայ, որպէսզի թոյլ չտամ, որ այդ ուրախալի աղաղակը դուրս թռչի, որ մաքով սլանամ, խափանեմ գէթ առ ժամանակ այն զգացմունքը, որը իւր ոյժով սպառնում էր ինձ մահացնել:

Իմ սէրը այրում էր կուրծքս և բարձր բացականչում—«քո Էմման այստեղ է, այստեղ քո դիմացը, նա կարող է քո ձայնը լսել, նա այստեղ է և քոնն է, որովհետև ոչ ոք նորան չի կարող սիրել այնպէս սաստիկ, ինչպէս Վիլեամը, ոչ ոք չի կարող նորան աւելի երջանկութիւն շնորհել»: Ոչ պակաս բարձր խօսում էր և իմ հպարտութիւնը. «Գուր կարծում էիր թէ քո Էմման Եւրոպայումն է, իսկ սիրտդ քեզ բերեց ուղիղ նրա մօտ, այն աղաւնու նման, որը կապած աչքերով տարւելով հեռու երկիրներ, վերադառնում է նորից իւր բունը՝ ինչպէս հմուտ որսորդի նետը, որը ուղիղ դիպչում է նպատակին, ինչպէս բեղւինը՝ բնագոմամբ և սուր հաստութեամբ գուշակում է հեռու օաղիսում ջուր լինելը, այդպէս էլ դու, Վիլեամ, գտար քո Էմմային և գուցէ Էմման էլ այդպէս կգտնէր իւր Վիլեամին»:

Միթէ, Էմմա, սրանից լետոյ էլ չես հաւա-

տում, որ Աստուած քեզ ինձ համար է ստեղծել: Միթէ չես հաւատում, որ երկուսս մի ծառի ճիւղեր ենք, որոնց պէտք է միացնէր քո սէրը՝ ողորմածութիւնից զրգւած, նրա համար, որ մենք կերակրւէինք միեւնոյն հիւթով, ծծէինք նոյն օդը և լաւիտեան միասին ասլէինք միմեանց զրկում նոյն կեանքով:

Սաիայն դու կարող ես առարկել թէ սիրում ես ուրիշին. բայց եթէ օլդ ճշմարիտ է, ապա տաս ինձ անխաղաղ, տաս անմիջապէս, որպէս զի ես կարողանամ մեռնել վշտից քո տան տուջ, այն սլափ տակ, որը ես փոքր ինչ առաջ համբուրեցի:

Էմման Վիլեամին.

Սան-Տերենցո, ապրիլի 20-ին 18...թ.

Վիլեամ, իմ թանկագին Վիլեամ, ինչու եկար ալտեղ: Խնչու ալդպէս սառտիկ սիրում ես ինձ: Այո, ես քեզ բոլորը կասեմ, միայն ինձ միջոց տուր, տուր մի քանի ժամ, որպէսզի ես կարողանամ կազդուրւել և քեզ ամեն բան

ճշմարիտն ասել. բայց երգւիր, որ դու չես դալ մօտս, մինչև չստանաս ինձանից միւս նամակս: Եթէ տեսնեմ քեզ, եղբայր ջան, ապա անկողող կլինեմ օրատմել քեզ բոլորը:

Վիլեամ, համբերիր. չէ որ դու ալժամ ինձ մօտ ես, քո քույրը ասում է քեզ, որ ոչ ոքի չէ սիրել և ալժամ էլ չի սիրում... Սպասիր մի փոքր ես... Այո, խոստանում եմ քեզ, իմ Վիլեամ, ալտօր և եթ զրել բոլորը: Մի քանի րոպէ հանգիստ տուր քո Էմմային. եթէ, լիւրտի, դու նորան սիրում ես, խնայիր նորան, նա թոյլ է և զժբաղդ. նա հազիւ ոտքի ելաւ երկարատե հիւանդութիւնից: Մի խանդարիր ուրեմն նորա հանգստութիւնը, թնղ, որ նա կաղզուրւի և սպա պատմէ քեզ իւր Լոնդոնից հեռանալու պատճառը:

Ցգրութիւն, ընկեր, իմ թանկագին բարեկամ:

Էմման Վիլեամին.

Սան-Տեղենցո, ապրիլի 20-ին 18...թ.

Վիլեամ, իմ սիրելի Վիլեամ, միթէ այս-
քան ամիսների ընդհանուր տանջանքներից և
վշտից լետու էս պէտք է պատասխանեմ այն
հարցին, որի համար սիրտս բաբախում է:
Արդեօք իմ պատասխանը քեզ հարկաւոր է
միայն նորա համար, որ իմանա՞ թէ ո՞ւմ է
սիրում քո խեղճ Էմման: Միթէ դու այդ ին-
չանից լաւ չգիտես: Բայց Էմման երբէք չէ կա-
րող պատկանել ո՞չ քեզ և ո՞չ էլ մի ուրիշին
ամբողջ աշխարհում. նա սուրբ երգումով կաշ-
կանդաւած է՝ ապրել և մեռնել միայնակ. իմ
արիւնը նդովաւ է և բաղբը սահմանել է իմ
կեանքին հանգչել միայնութեան մէջ: Թէ քո,
թէ իմ սէրը և թէ նոյն խսկ բոլոր մարդկանց
ջանքերը անկարող են փոխել այդ զարհուրելի
դատաւճիւրը, որի առաջ քո Էմման խո-
նարհեց իւր գլուխը դեռ ևս մի քանի տա-
րի առաջ, նախ քան քեզ հետ ծանոթանալը:

Ես երգւեցի հօրս՝ երբէք մարդու չգնալ.

ես երգւեցի այն ժամանակ, երբ դեռ ևս չգի-
տէի ինչ է սէրը և սիրում էի միմիայն հօրս:
Ես երգւեցի, որ երբէք ծնկներիս վերայ չեմ
առնի երեխայ, որը քնքոյշ հայեացք ձգելով
վերաս՝ ինձ մայր անւանէր, չնայելով, որ այն
ժամանակ ես ինքս էլ երեխայ էի: Այժմ ես
գիտեմ ինչ է սէրը. գիտեմ, որ սէրը կեանքից
աւելի զօրեղ է. այժմ ես ըմբռնում եմ, թէ ինչ
է նշանակում մայր լինել. բայց ես երբէք չեմ
լինի ո՞չ մայր-ամուսին, ո՞չ մայր և երբէք ու-
նակոխ չեմ անի իմ երգումը: Ո՞վ իմ Վիլեամ,
որ չար բաղբը քեզ քցեց իմ միայնակ կեանքի
շաւիղը, ինչո՞ւ դու սիրեցիր ինձ, ինչո՞ւ սի-
րում ես ինձ այդպէս բուռն: Ես միայնակ կը
կրէի իմ տանջանքների ամբողջ լուծը, ես միայ-
նակ կկորչէի իմ միայնութեան անսահման
դատարկութեան մէջ, լիշխով միայն իմ հօրս՝
այն համոզմունքով, որ ես իմ պարտքը կատա-
րեցի, հաւատարիմ մնացի նրա աճիւնին և
տւած խօսքիս սրբութեանը:

Ինչո՞ւ գրաւեցի քեզ զէպի իմ բաղբի անու-
ղք և անփոփոխ յորձանքը:

Լսիր, Վիլեամ, դու պէտք է իմանաս, որ չկայ
աշխարհում մի մարդ, որի դարաւը կարողա-

նոր հաւասարել իմ դարտին: Չգիտեմ, որ-
դեօք ես լացով աշխարհ եկայ, ինչպէս այլ երե-
խաներ, բայց լիշուծ եմ, որ ամբողջ մանկու-
թիւնս անցրել եմ վշտի մէջ, անընդհատ տան-
ջանքների մէջ մեծացալ և արտասուքը աչքե-
րիս դիմաւորեցի իմ կուսական արշալոյսին: Ես
ասլրում էի յաւիտենական վշտի մէջ, որը շա-
րունակ փոխում էր, բայց երբէք չէր անհե-
տանում և ինձ չէր թողնում:

Մանկութեանս օրերին ես խաղում էի մեծ
քոյրերիս հետ և չափազանց սիրում էի Ջոն
եղբօրս, որը այն ժամանակ տասն և երկու
տարեկան էր. բայց երբ մենք միմեանց հետ
այնքան մտերմացանք, որ այլ ևս անկարող
էինք բաժանուել, նա հիւանդացաւ և մի քանի
ամսից յետոյ մեռաւ: Յիշում եմ նոյնպէս քրոջս
Ջէնին. նա կատարեալ հրեշտակ էր, ամբողջա-
պէս սպիտակ, աչքերը լի արտասուքով, որոնք
երբէք չէին ցամաքում: Նա ևս մեռաւ, նա
երկար ժամանակ հիւանդ էր և հետզհետէ հալ-
ւում էր, ինչպէս սուրբ պատկերի առաջ վառւող
մոմը: Դեռ այժմ էլ, կարծես մշուշի միջից,
մնացել է իմ մէջ լիշուծութիւն այն բանի
մասին, որ ես միանգամ նորան հարցրի ինչից

է, որ նա օր առօր գուճաւում է և նիհտա-
րանում, որին Ջէնը պատասխանեց. «նրանից
է, որ ես մեռնում եմ»: Արցունքները ցալտե-
ցին նորա աչքերից և նա փախաւ իւր սենե-
կը:

Մեր տանը երբէք ծիծաղ չէր նշմարւում:
Եթէ փոքր եղբայրներս սկսում էին վազվզել
և աղմուկ բարձրացնել, անմիջապէս յայտնում
էր հայրս մի այնպիսի մռայլ գէմքով, որ նոյն
խոհ հերոսն էլ կվախենար նրանից և մենք
մի ակնթարթում լռում էինք. մեր տանից
հիւանդն անպակաս էր և մենք չէինք համար-
ձակւում վրդովել նրան: Բժիշկը մեր տան մըշ-
տական հիւրն էր, իսկ գեղերը սեղանից ան-
սլակաս էին: ձաշը անցնում էր շատ հանդարտ.
մեզ սովորեցրել էին հաց ուտել այնպիսի ըզ-
գուշութեամբ, որ դանակի կամ պատառաքա-
ղի ամենափոքր ձայն անգամ չէր լսւում:
Պարզ լիշում եմ, որ մենք սգոյ շարերով էինք
ամբողջ տարիներ: Մենք բոլորս տասնևերկու
հոգի էինք և, ինչպէս տեսնում ես, միայն ես
եմ մնացել: Ես վերջինն եմ: Մայրս մեռաւ
ինձ ծնելու և այդ պատճառով չեմ լիշում
նորան: Մօրաքոյրս՝ Աննան մեծացրեց ինձ և

ես նորան շատ սիրում եմ: Ասում են, որ նա շատ նման է թշուառ մայրիկին:

Հայրս նույնպես միշտ հիւանդ էր. նա շարունակ հազում էր և, լիշում եմ, մի քանի տարի ձմեռը նրա հետ անց էինք կացնում կամ Նիցցայում և կամ Պիզայում: Մի անգամ նույն իսկ մենք բոլորս գնացինք Ալժիր և մի քանի ամիս շոգենաւի վրայ անցկացրինք այնտեղ: Ես կարող եմ մատնեւրով թւել այն բոլոր խօսքերը, որ հայրս ասում էր ինձ այդ ամբողջ ժամանակամիջոցում. բայց դուրս փոխարէն նա լաճախ վերցնում էր ինձ իւր ծնկների վրայ, անվերջ համբուրում էր և շուրջ գլուխս: Նա էր մազերս սանրում և հազցնում ինձ: Ես նրան սիրում էի և, միևնույն ժամանակ, վախենում նրանից, ես նրա մօտ մի տեսակ երկիրդ և յարգանք էի զգում. նույնն ես զգում, երբ առանձին աղօթում ես Աստծուն մի որ և է հոյակապ և դատարկ տաճարում: Հայրս այնքան դժբաղդ էր, նրա գէմքի վրայ կային անվերջ տանջանքների այնպիսի հետքեր, որ իւրաքանչիւր նրան հանդիպողի մէջ զարթնում էր կարեկցութեան զգացմունք և իւրաքանչիւր մարդ գէպի նա վերաբերւում էր սիրով և յար-

գանքով: Երբ ես տասնևհինգ տարեկան դարձայ, բոլոր որդիներից կենդանի միայն ես մնացի: Բոլորը մեռան թօքախտից, և հօրս էլ իւրաքանչիւր տարի նույն հիւանդութիւնից մեռնելու վտանգ էր սպառնում:

Յիշում եմ, որքան զգուշութեամբ ստիպւած էի գրկել նրան, որպէսզի չփնտսեմ ձախ ձեռը, որովհետեւ նրա վրայ բժիշկների արած վիրահատութիւնից (operation) վերք էր լաւաջացել: Մեր տան ծառաները կարեկցաբար էին վերաբերւում դէպ ինձ և սովորաբար խօրին ցաւակցութեամբ ասում էին. «Խեղճուկ էմման երկար կհամբերէ, նա չի կամենում մեռնել, բայց ո՞վ դիտէ ինչ կալատահի նորան»: Մօրաբրոջս նաժիշտը, որը մի բարի աղջիկ է, մի անգամ ինձ ամբողջ օրը լացացրեց: Հայրս արգելել էր ինձ երեկոյեան պարտիզում զբօսնել, որովհետեւ, նրա կարծիքով, երեկոյեան օդը ինձ վնասակար էր: Բայց այնպէս պատահեց, որ լուսինը՝ գեղեցիկ կերպով նայելով եղևինների միջից և իւր մեղմ լուսով լուսաւորելով գետակը, ինձ գրաւեց. ես խնդրեցի Մարիային տանել ինձ այդի: Ես դիտէի, որ դորանով խախտում եմ հօրս հրամանը, այդ պատճառով էլ

ցանկանում էի Մարիային ևս իմ լանցանքին մասնակից անել: Նա առաջ հրաժարւում էր, բայց վերջը փաթաթեց ինձ առք շալի մէջ և տոաց. «Գնանք Էմմա, ճաշակիր կեանքի քաղցրութիւնը, որ դեռ ևս քեզ սպասում է, քո եղբայրները և քույրերը այդ կանոններով ընթացան, բայց և այնպէս բոլորն էլ մեռան, գնանք ուրեմն պարտէզ»: Պատասխանի փոխարէն ես սկսեցի արտասուել և ոչ մի բանի համար չէի ուզում դուրս գալ լուսնին նայելու, որը ծածուկ նայում էր եղբիւնների միջից: Հեկեկալով տոացի Մարիային, որ չեմ ուզում հօրս հրամանը կոտրել, չեմ ուզում մեռնել: Եւ ամբողջ գիշերն ու հետեւեալ օրը ես անմխիթար արտասուում էի:

Այսպէս, սիրելի Վիլեամ, սահէց քո Էմմայի մանկութիւնը: Երբ ես չափահաս աղջիկ եղայ, երբ ոտք դրի այն հասակը, ուր ուրիշներին դրախտ է բացւում պոէզիալով և յուսով լի, ես արդէն վարժեցի արտասուքով ապրելուն: Ես տեսայ մի ամբողջ ընտանիքի սարսափելի զժբաղդութիւնը, անարժան զժբաղդութիւնը, և յաճախ ես ինձ հարցնում էի ինչո՞ւ Աստուած այսպէս անարգար է դէպի մեզ, ինչո՞ւ միայն

մենք ենք գառապարտւած գերեզմանատանը ապրելու, ուր լուստեան սեւին է տալիս գերեզմանը՝ պատրաստ մեզնից մէկն ու մէկին կլանելու: Մօրաքոյրս՝ Աննան բարի կին է, դու նորան ճանաչում ես, սիրելի Վիլեամ: Նա իւր կեանքի կէսն անյկացրեց հիւանդ մօրս և տանւեմէկ եղբայրներին ու քույրերին մահճակալի մօտ. բայց նա երբէք չէր մխիթարում ինձ երկար օրօրներով: Նա երբէք չէր լալիս, նորա աչքերը միշտ թաց և կարմիր էին, կարծես երկար լացից հանգել և թուլացել էին: Իսկ երբ հարցնում էի թէ որդե՞օք քնչ մի ուրաւփելի գողտնիք է ծանրացած մեր տան վրայ նա կտրուկ պատասխանում էր և իսկոյն ըսկըսում էր հոգս տանել կամ հագուստին և կամ իմ խոնաւ գուլպաների համար: Երբ ես սովորականից սաստիկ սկսում էի հազալ, բոլորը վախենում էին, իսկոյն ինձ պառկեցնում էին անկողնում և անմիջապէս կանչում բժշկին: Յետոյ երբ ես մեծացայ, հայրս փոխեց բժշկին և հրաւիրեց դոկտօր Թովմասին, որը շուտով նրա ամենամտերիմ բարեկամը դարձաւ: Դա միակ մարդն էր, որին տեսնում էի ծիծաղելիս, միակը, որը երբեմն լոյս և ուրախութիւն էր

բերում մեր տան յաւիտեան մօտ յլ կեանքի մէջ: Միայն նորան եմ պարտական ջահելութեանս ժամանակ վալելաճ հաղապարտ ուրախ լողկներէ համար: Երբ հայրս կորցրեց իւր բոլոր որդիներին և մնացի միայն ես, նա խընդրեց դոկտօր Թովմասին ամեն օր քննել ինձ, նոյն իսկ եթէ ինձ լաւ էլ զգայի: Բայց այս անգնահատելի բժիշկը երբէք չէր ձանձրացնում ինձ և սովորաբար իւր խօսակցութիւնը վերջացնում էր միեւնոյն խօսքերով. «Էմման շատ քնքոյշ է, բայց առողջ է, ոչ մի բանից հարկաւոր չէ վախենալ»:

Մի անգամ, աշնանը, հայրս վատացաւ և դ-ր Թովմասը խորհուրդ տւեց անյապաղ տանել նրան Մենտոն: Մենք գնացինք: Բայց խեղճ հայրս անքան թույլ էր, որ ստիպւած էինք տեղ տեղ կանգ առնել և մենք Լոնդոնից Միջերկրական ծովը ճանապարհորդեցինք ամբողջ առանձնորս օրւայ ընթացքում: Մենտոնում նա ամբողջ ձմեռը մահճում անցկացրեց. իսկ ես կատարում էի իմ սովորական գրօսանքը դաշտերում և բլուրներում՝ նաժիշտի ուղեկցութեամբ: Հայրս բժիշկներին չէր հաւատում, որ իւր հիւանդութիւնը տարախօսիկ չէ և եր-

բէք չէր թողնում ինձ իւր սենեակում երկար մնալու. ողջունելով և հրաժեշտ տալով՝ նա միշտ համբուրում էր ճակատս, բայց ոչ շրթ-թուկներս:

Փետրւարի վերջերը կարծես նա փոքր ինչ լաւացաւ: Բարի Թովմասը Լոնդոնից եկաւ և սկսեց բժշկել նորան մի ինչ որ նոր եղանակով, որի շնորհիւ հայրս ուղղւեցաւ մի քանի օրւայ մէջ: Նա վեր էր կենում մահճակալից և, լենելով փայտի վրայ, մի քանի ժամ պարտիզումն էր անցկացնում: Մօրաքոյրս՝ Աննան և ես չափազանց ուրախ էինք նորա արտաքին առողջութեամբ, բայց երբ փորձում էինք փոքր ինչ զարճացնել մեր հիւանդին, նա գլուխը շարժում էր և նայում մեզ լուսահատութիւնով լի արտայայտութեամբ:

Մի անգամ նա վեր կացաւ շատ վաղ և հրամայեց մեզ պատրաստել Լոնդոն լետ դառնալու համար: Մօրաքոյրս՝ Աննան և ես, վախեցած ալգպիսի անակնկալ վճռից, գնացինք համոզելու նրան լետ կանգնել: Դ-ր Թովմասը կարգադրել էր մնալ Մենտոնում այնքան, մինչև որ ինքը կվճռէր գնալ: Հայրս առաջին անգամ հրաժարւեց իւր բժշկին հպատակել: Մօրաքոյրս

աղաղակում և սպառնում էր. ես, ծնկաչոք նրա առաջ, համբուրում էի նրան և երգեցնում էի զէպի ինձ ունեցած սիրովը, յետաձգել այս լանդուգն ճանապարհորդութիւնը, մինչև եղանակը տաքանայ. բայց մեր բոլոր աղաչանքները ՚ի դուր անցան. նա այնքան յուզւած էր, որ ցատկեց և գոչեց. «Ուզում եմ Անգլիա գնալ, իմ տանն եմ ուզում մեռնել»:

Ես դրանից առաջ երբէք չէի լսել նրանից նոյնանման խօսքեր և այդ պատճառով էլ գնացի մեր շորերը կարգի դնելու: Երկար և անմխիթար լալիս էի, որովհետև այդ խօսքերի մէջ, ինձ թւում էր, ծածկւած էր մահւան դատաւճիռ, որը կարգում էր դժբաղդ հայրս իւր գլխին: Ութ օրեայ մէջ հաստիք Լոնդոն: Հայրս տեղ հասաւ խղճալի գրութեան մէջ. դ-ր Թովմասը նորան տեսնելով շարժեց գլուխը և ասաց. «Նա մահ էր որոնում». Տասնօրեայ ծանր հիւանդութիւնից չէտոյ հայրս՝ մահւած տենդից ինձ իւր մօտ կանչեց: Արդէն ուշ էր և ես պատրաստուում էի քնելու: Լամպոն աղօթ լուսաւորում էր նորա սենեակը. նա միայնակ էր և նստած էր մահճակալի վերայ: Երբ մօտեցայ նորան, նա առաւ ձեռք և ես զգացի, որ նրա ձեռքը չա-

փազանց տաք էր և քրտինքով ծածկւած: Առանց ձեռքս բաց թողնելու, նա հրամայեց ինձ նստել իւր կողքին՝ մահճակալի վերայ և ապա ասաց. «Էմմա, գիտե՞ս արդեօք դու թէ ինչից մեռան եղբայրներդ և քույրերդ. գիտե՞ս արդեօք թէ ինչու այսքան տարի մեր տունը ներկայացնում էր գերեզմանատուն. լսիր ուրեմն, ես եմ նոցա դահիճը, ես ինքս սպանեցի իմ բոլոր գաւակներին»: Եւ հայրս սրբեց քրտինքը դալկահար դէմքից և ձեռքով շփեց մտքերը: «Այդ ճշմարիտ է, իմ Էմմա, ես ինքս սպանեցի նոցա և քեզ ևս դատապարտեցի այդպիսի կանքի»:

— Հայրիկ, տնգին հայրիկ, դուք զառանցանքի մէջ էք, ասացի ես նորան:

«Ո՛չ, ես չեմ զառանցում: Ես հիւանդ էի, ես իմ արեան մէջ կրում էի զարհուրելի հիւանդութեան սաղմը, որից և այժմ կորչում եմ. և ես այդ աւանդեցի որդոցս և սպանեցի նրանց: Ես հայր լինելու իրաւունք չունէի, սակայն ցանկանում էի ընտանիք ունենալ. ես պարտաւոր էի բնութեան դատակնիքը միայն ինքս կրել, սակայն ցանկանում էի որդիներ ունենալ և այդ պատճառով էլ ես ինքս թունաւորեցի

նրանց իմ արիւննով, սպանեցի նոցա... Հասակում
ես ինձ...»

Այս խօսքերից լետոյ նա սկսեց երկար և
խիստ հազալ և ստիպւած էր փոքր ինչ հանգը-
տանալ և ջուր խմել, որպէսզի ոյժերը հաւաքէր
և շարունակէր:

«Բո արեան մէջ ևս, սիրելի էմմա, թողն
կայ: Միայն բժշկականութեան ամենամեծ ջան-
քերը և նախախնամութեան գթութիւնը պահ-
պանեցին քեզ, որպէսզի դու փակես քո հօր
աչերը, որը առանց քեզ միայնակ պիտի մեռ-
նէր, խղճի խալժով, սպաշխարութեան ծանր
լծով և սարսափելի տանջանքով, որը պիտի վեր-
ջանայ միայն այնպէ՛զ՝ դադարում: Բայց դու,
սղջիկս, երբէք կին և մայր չպէտք է լինիս: Դու
պէտք է երգւիս ինձ այդ բանի համար այն ձե-
ռագրի վրայ, որը ես նշանակում եմ քեզ ինչ-
պէս իմ կտակը և, որը կարող ես կարդալ մի-
այն մահիցս լետոյ: Դու կապրես մօրաբոնջ՝
Աննայի հետ. արա՛ ինչ կցանկանաս, նւիրի-
րքո կեանքը գեղարեստների, ճանապարհորդու-
թիւնների, բարի գործերի, կրօնի, ամեն բան
թող եմ տալիս, բայց միայն երբէք չամուսնա-
նաս, երբէք: Կարող ես այդ բանի համար երգ-

ւել, էմմա: Բո երգումը լսելով միայն կարող
եմ հանգիստ մեռնել»:

Ես լալիս էի զոպելով հեկեկանքս և արտա-
սուքս կուլ տալով, որպէսզի հօրս չվշտացնեմ.
նորա բոլոր ասածից ես ոչինչ չհասկացալ: Մի-
այն մի բան ինձ համար պարզ էր, որ իմ մի
խօսքը կարող էր սփռել մեռնող հօրս բայց
արտասուքը և հեկեկոցը արգելում էին ինձ
խօսել:

«Իէհ, երգւիր, էմմա, երգւիր. ես մեռնում
եմ. չեմ կարող համբերել»:

Հալրս սաստիկ հազաց:

— Երգւում եմ քեզ, հալրիկ, երգւում եմ:

«Երգւիր քո հօր ու մօր անունով»,

— Հալրիկ, երգւում եմ հօրս ու մօրս անունով,
ես կապրեմ միայնութեան մէջ և կմեռնեմ
միայնակ:

Անգին Վիլեամ, այս խօսքերիս միջոցին հօրս
աչերում փայլեց մի տեսակ ոչ երկրային ուրա-
խութիւն: Նա փաթթեց վզովս և համբուրեց
ինձ, իսկ ես լալիս էի և զգում էի, ինչպէս
նրա ձեռները հեղհեղեղ աստիճան էին: Ձեմ
լիշում ինչ եղաւ լետոյ. գիտեմ միայն, որ մի
բանի լուպէ անցած հալրս մեռաւ:

Այժմ հասկանում ես, Վիլեամ, ինչու էմման
չի կարող քոնը լինել: Այժմ հասկանում ես իմ
բոլոր տանջանքը: Արդեօք կվստահանաս ինձ
նշովի: Կարգան, Վիլեամ, ինչ է գրած լայս
թերթերի վրայ— իմ հոր կտակը. կարգան և կը
տեսնես թե՛ կա՞յ արդեօք ինձանից աւելի դժբաղ-
դը ա՞յս աշխարհում:

Մոտս բարեաւ, Վիլեամ. այցելիր ինձ, բայց
ոչ վաղ, մինչև որ դու կհամոզուես, որ կա-
րող ես լինել միմիայն իմ բարեկամը և եղ-
բայրը:

ԻՄ ԿՏԱԿԸ ԷՄՄԱ ԴՅՏԵՐԱ.

Ոչ ոք իրաւունք չունի թողնել յետադա՛յ սե-
րունդ, եթե՛ խելքը, գիտութիւնը և փորձը
համոզում են, որ այդ սերունդի կեանքը կարճ,
վշտադին և դժբաղդ պիտի լինի:

Յուսը և հաւատը հանդերձեալ կեանքի հա-
մար ողջամիտ են և սուրբ, երբ նոքա ծառա-
յում են այն բանի համար, որպէսզի մարդուն
բարձրացնեն վսեմ գգացմունքների միջնորդը,

որոնք ազնւացնում են նրա գոյութիւնը. իսկ
նա՛ որ չի ընդունում մարդու մէջ կամքի,
մտքի և գործի ազատութիւն, նա վիրաւորում է
Աստծուն, արհամարհում է բանականութիւնը:

Ոչ մի ցանկութիւն, ոչ մի սիրոյ կա՞ծ չի
կարող շեղել ճշմարիտ ճանապարհից այն մար-
դուն, որը պարտաւոր է և ուզում է կատարել
իւր պարտքը:

Պարտքը բարձր է մարդուց, պարտքից բար-
ձրը չկա՞յ ոչինչ բացի միակ Աստծուց:

Կենդանի արարածին չարիք չպատճառել-
ալս իւրաքանչիւր մարդու սրտատկանութիւնն
է ինչ հասակի, ինչ գրութեան մէջ էլ լինի
նա: Այդ ընդունում են բոլոր ժամանակների
ազգերի օրէնքները և կրօնները:

Ծնել տկար որդիներ, նշանակում է գործել
մեծ չարիք, ամենամեծը, որպիսին միայն կարող
է դոյութիւն ունենալ և նմանապէս այդ չարի-
քը սլառճառել այն էակներին, որոնց մեռե-
ածներից շատ ենք սիրում, «որոց մարմինք ի
մարմնոյ մերմէ և ոսկերք լոսկերաց մերմէ
են»:

Ծնել հիւանդատ որդիներ իւր անձնական
մեղքի պատճառով աւելի վատ է, քան թե ըս-

պանել մարդուն սաստիկ բարկութեան ժամանակ. այդ նշանակում է նենգութեամբ թու-
նաւորել մեզ համար ամենաթանկագին ստեղծ-
ւածների կեանքը:

Հիւանդոտ լինել և արտադրել որդիներ, դա
սպառնաց է բուռն ետականութեան, դա նշանա-
կում է ինքն իրան ենթարկել խղճի խալթին
ամբողջ կեանքի ընթացքում:

Այն մարդու պատճառած չարիքը, որը ծնում
է հիւանդոտ որդիներ, չի վերջանում առաջին զո-
հով. յաճախ հիւանդութիւնը և թոյնը անցնում
են երկրորդ, երրորդ և չետորդ սերունդին, նը-
ւագեցնում են ծնունդները և յառաջացնում են
սարսափելի տանջանքներ ու անէծքներ. գոհերը
նդովում են, ինչպէս իւրեանց սեպհական կեան-
քը, նոյնպէս և նրանք, ով իրանց աշխարհ բերեց:

Ով հիւանդոտ է և, չնայած դորան, ցանկա-
նում է որդիներ ունենալ, նա վատ հայր է,
որովհետեւ իւր որդիներին թոյն է տալիս խմե-
լու, վատ բաղաքացի է, որովհետեւ նա ազգին
վատ բաղաքացի է տալիս. վատ մարդ է, որովհե-
տեւ ոչնչացնում է մարդկային բնտանիքի ամե-
նալաւ կարողութիւնը-առողջութիւնը և ոյժը:
Դիմել ամարգի և խիստ օրէնքների տպահո-

վութեան՝ միևնույնն է, թէ ընդմիշտ չցանկա-
նալ աւելի բարձր և մաքուր լինել սովորական
մարդուց, որը ուտում խմում ու քնում է:

Ձի կարելի, սքօղելով մահմետական ֆատա-
լիզմով, իւր բաղդը խաղաթղթի վրայ դնել, այդ
նշանակում է տարւել այն բոլորը, ինչ որ ունի
մարդս:

Բաղդը — դա զօրեղի բաժինն է, իսկ յաղթու-
թիւնը պատկանում է նրան, ով գիտակցու-
թեամբ է գործում: Ձի կարելի մի օր և է փաստ
առաջ բերել, որի հիման վրայ կարելի լինէր
թուլատրել լուսնոտներին, գժերին և թոքախտ-
ներին ամուսնութեան միջոցով ընկնաւորու-
թիւնը, թոքախտը և գժութիւնը փոխադրել
յետագայ սերունդներին:

Սէրը երկրային կեանքի ամենասուբբ ուրա-
խութիւնն է... արդեօք կարելի է թույլ տալ
նրանից պատրաստել բաժակ, որի մէջ խառնը-
ւում է թոյն:

Սէրը մարդու ամենալաւ օրհնութիւնն է,
բայց արդեօք ցանկանում էք, որ նա անէծք
սերմանէ:

Սէրը — կերտն է, որ բորբոքում է կեանքի
լոյսը. ուրեմն ինչու էք ցանկանում դուք դա-

գաղի մօտ վառւող սգոյ լապտեր դարձնել նորան:

Ինչն է ստիպում ձեզ, կենդանի ներսածներ և թոյնով ծնւածներ, ծնել որդիներ, որպէսզի տեսնէք նոցա գերեզմանում անմեղ մանկական շրթունքների վերայ ժպիտը փայլելիս: Չէք կարգում արդեօք ձեր որդիների ծերացած և կրնճուտ գէմքերի վրայ անէծք այն ծնողներին, որոնք նոցա կեանք տւին:

Ո՛չ հարստութիւնը, ո՛չ կրթութիւնը, ո՛չ զիտութիւնը, ո՛չ կրօնը, ոչինչ չէ կարող փոխարինել անժամանակ կորցրած առողջութիւնը:

Հագցրէք հիւանդին մետաքս, զարդարէք նրան թանկագին քարերով, նստեցրէք ոսկեգօծ կառքի մէջ, տարէք նրան ազմկալի խնջոյք և պահանջեցէք նրանից ծիծաղել:

Հիւանդի, թոյլի և փտած օրգանիզմի կեանքը պահանջում է շարունակ ուշադրութիւն և բժշկութիւն, դա մի եղեսպակ (IIIAPФEИ) է, որը չի կարելի բաղցրացնել ոչ մի մեղրով, դա անմխիթար վիշտ է, լուխտենական աքսոր է, որից միայն մահը կարող է փրկել:

Եմմա, իմ անդին Եմմա, դու միշտ սիրում եիր ինձ, դու միշտ յարգում էիր քո հօրը: Լսիր

ինձ: Այնքան որդիներս կորցնելով և շատ անդամ քեզ գերեզմանի դռանը տեսնելով, ես սկսում եմ նղովել ինքս ինձ, իմ մեղքը և տգիտութիւնը: Ես սկսեցի նղովել բժիշկների տգիտութիւնը, որոնք չէին կարող փշացնել այն թոյնը, որից ես պէտք է մեռնեի, չտարածւելու իմ անբաղդ ընտանիքի մէջ: X

Եթէ ես ծնւեցի հիւանդ, ապա պարտաւոր եմ միայնակ կրել այդ հիւանդութիւնը և այն մի քանի տարիները, որոնք բաշխել էր ինձ ընտրութիւնը, նւիրել իմ բարեկամների և հայրենիքի համար:

Բայց ես այնպեղ հասալ, որ սկսեցի նղովել ծնածս վայրկեանը. իմ վիշաք հարիւր անգամ մեծանում էր գաւակներս տանջանքներից, իսկ տունս դառնում էր գերեզմանատուն:

Ես լալիս եմ և գիշերները աչքերս չէի փակում. ոչ մեռնել էի կարողանում և ոչ էլ ներել ինձ իմ յանցանքի համար:

Սակայն իմ ագիտութիւնը չէ կարող ծառայել իբրեւ աբգարացումն ուրիշների համար: Ներկալ գիտութիւնը բօլորովին ահամանեց և որս Հաստատում է թէ այն մարդը, որ կամենում է ընտանիք հիմնել, պէտք է առողջ

լինի. նա որոշեց, որ թոքախտները և լուսնոտները փոխադրում են այդ հիւանդութիւնը լեւտագոյ սերունդին և ասպնոցեց, որ հիւանդութեան լաջորդական անցումը բնութեան անողոք անցումներից մէկն է:

Եթէ մի հազադիւտ և բարեբաղդ հանգամանքով, կամ թէ անչափ աշխատանքների շնորհիւ, հիւանդ ծնողներին լաջողում է առողջ որդիք ունենալ, բայց և այնպէս նոցա մէջ կը գտնւի գոնէ մի մանուկ, որին անխուսափելի է դաժան բաղդը և զարհուրելի հիւանդութեան կնիքով այդ երեսի վրայ հիւանդ հայրը և թոքախտոտ մայրը կկարգան իւրեանց մեղքի պարզ անէծքը: Էմմա, իմ բարի Էմմա, դու ամբողջ կեանքումդ հիւանդ էիր, դու ես իմ վերջին դուստրը, ես ոչինչ չխնայեցի քո առողջութեան և փրկութեան համար և կարծում եմ, որ դու կապրես, Աստուած ողորմած է և Նա գուցէ չէ կամենում ինձ իմ բոլոր որդիների սպանելը դարձնել:

Բայց քո օրդանիզմը փուխր է և թույլ: այն եղեգնի նման, որը միայնակ ցլեւել է անապատում և անկասկած կկոտրւի, եթէ մէկը լինւի վրան: Երբէք մարդու չգնաս, աղջիկս, առա-

ջին զաւակդ քեզ գերեզման կիջեցնէ և կամ թէ կուեննաս օրդիներ, որոնք մահաւան դատապարտւած կլինին իւրեանց կեանքի ամենաքնքոյշ տարիքում, իւրեանց մանկութեան զարունքին: Թոքախտի թայնը չափազանց ուժեղ է. նա թափանցեց մեր արեան մէջ և չի անհետանալ նոր սերունդով:

Ես մեռնում եմ. դու վերջին կենդանի շառաւիղն ես մեր ցեղի, քո մահով այս թոյնը պէտք է կորչի և մեղքը պիտի վերանալ: Երգւիր Էմմա, որ դու միայնակ կապրես և միայնակ էլ կմեռնես: Աստուած տայ, որ դու հանդիսանաս ազատիչ հրեշտակ քո հօրը և նորա մեղքերին թողութիւն բերես:

Այս դառնութեամբ լի երգումը քո հօր կտակը և ժառանգութիւնն է. վերջին խօսքը, որ ինչպէս հայր պարտաւոր եմ ասել քեզ, իմ սիրելի զաւակիս, դա խղճալի դատակնիք է, համբերիր, տանջւիր և ապրիր մինչև վերջը:

Արդէն վերջացաւ ամենազարհուրելի պատիժը մեղքիս համար: Նրանից լեռու, երբ թաղեցի իմ բոլոր որդիներին ես պարտաւոր էի և վերջինին, որը կենդանի էր մնացել, ասել համբերիր, կրիր քո հօր լանցանքը:

Մի նգովի՝ հօրդ։ Երբ նա երիտասարդ էր և ձեռքը առաջարկեց մօրդ, այն ժամանակ բժիշկները հասարակ արհեստավորներ էին և միայն նշտար ու թուխաւօր դեղեր էին ճանաչում։ Նոքա չէին հասկանում, որ պարտաւոր են քաջութեան քուրմ լինել և առողջութեան հովանաւօրդ։ Նոքա չգիտէին, որ իրանց վրայ պարտականութիւն կայ՝ հիւանդին, թոքախտին և ընկնաւօրին (ЭПИДЕМИК) ասել։ «Մի համարձակէր սերունդ թողնել քեզանից յետոյ, աւելի լրւ է խրիւր սուրդ՝ քո ամենամօեւրիմ բարեկամի տիրաւ»։

Հայրդ իբրեւ ժառանգութիւն քեզ թողնում է մի սոսկալի պարաք, որը դու պէտք է կատարես. ապրիւր, բայց երբէք մի սիրել, եղիւր կին բայց ոչ մայր։ Ես մեռնում եմ խաղաղ, որովհետեւ հաւատացած եմ, որ գուտարս չի գրժիլ իւր երդումը և կկատարէ այն բարի գործը, որը հայրը չկարողացաւ կատարել։

Չարիք չգործել՝ եթէ նոյն իսկ մեր անգուսպ կրքերը մեզ գրգեն, եթէ օրէնքները թող տան, նոյն իսկ եթէ հասարակութիւնը չդատապարտէ մեզ այդ չարիքի համար, ահա այդ է մեծ զսրժը և հերոսութիւնը, որի նմանը

էին, որ ես անկարող եմ քեզ ասել՝ թէ որ վայրկեանին իմ սէրը աւելի զօրեղ էր դէպի քեզ, այն ժամանակ, երբ դու արտասուելով սացիր ինձ— «ձշմարիտ չէ, որ հայրս կներէ մեզ», թէ այն ժամանակ, երբ դու գունատուած և լուրջ դէմքով յանկարծ վեր թռար և աղաղակեցիր. «Վիլեամ, մեր սէրը շատ թշուառ կլինէր, եթէ պարտքը չլաղթէր նրան»։ Դու եկար Լոնդոն խորհուրդ հարցնելու հօրդ ոգուց, որը բժիշկ Թովմասի բերանով քեզ պատասխանեց թէ՝ եթէ երբեւեցէ թող և թոքախտով վարակւած էմման կուժեղանայ և կկազդուրւի, ապա նա առանց ոչ ոքի վիշտ պատճառելու և հանգիստ խղճով կարող է իւր ձեռքը վիլեամին առաջարկել։ Քո հայրը—այսպէս սաց բժիշկ Թովմասը—կրկնակի քեզ կօրհնէր, եթէ զիտենար, որ դու երջանիկ ես և նրա կտակի մտքին հաւատարիմ ես մնում։

Վայ այն մարդուն, որ պարտականութեան մասին գաղափար չունի, որ չի կարող իւր համոզմունքը և կեանքը հաստատել անդրդւելի սկզբունքների վերայ։ Անտանելի կլինէր նրա համար ապրել, եթէ նա ստիպւած լինէր ժամը մի անգամ դիմել իւր խելքին, կշռադա-

տել յաւիտենական երդումները և ցանկութիւն-
ները, որպէսզի մի բան վճռէ: Եւ զիստ
Նա կկորցնէր իւր արժանաւորութիւնը և
ստիպւած կլինէր իւր ամբողջ կեանքը անցնել
ծակ նաւակում, տանջանքների անհաստատ
մակերևոյթի վրայ: Հարիւր անգամ ինձ ասել
ես այդ և բոլորովին համոզել: Մարդս պարտա-
ւոր է խոնարհել իւր գլուխը պարտքի առաջ.
բայց եթէ մեր թույլ օրգանիզմը, փոթորկի ա-
լիքներից ամեն կողմ ձգւած, պատրաստ է
ջախջախելու այդ անկործան ժայռից, ապա
կարելի է օգնութիւն խնդրել: Դեռ ևս ոչ ոք
չի դատաւարտել և վախկոտ չի անւանել նրան,
ով խեղդւելիս օգնութիւն է խնդրում: Եւ
մենք դուրսը թողնաւից ազատող նաւակ խնդ-
րեցինք ու ստացանք: Նա մեզ կերջանեցանք,
որովհետեւ դ-ր Թովմասը մի քանի ամպեր ցըր-
ւեց մեր հարիւրներից, որի վրայ շարունակ երե-
ւում էին թուխ, մրրկաբեր ամպեր և ցոյց
տւեց մեզ կապուտակ երկնակամարի մի փոք-
րիկ պարզ մասը: Մեզ երկուսիս, դժբաղդներիս
և կեանքի ծովի վրայ նաւաբեկեալներիս, բարի
դ-րը ձգեց ազատարար պարանը և մենք բռն-
նեցինք նրանից խեղդւողի վայրենի ոյժով, որը

տեսնում է հեռում զւարթ ավեր, բայց դեռ
ևս նրան չի հասել: Եւ զիստ
Էմմա, անգին Էմմա, իմ դէպի քեզ ունե-
ցած սէրս մեծ է, ինչպէս աշխարհը. ես նրա
մէջ տեսնում եմ անսահմանութեան ցոլացու-
մը, բայց չեմ ուզում իմը լինիս քանի որ դու
համար ստիպւած պիտի լինիս զոհել պարտա-
կանութիւնդ և դրժել երդումդ: Եթէ դա լի-
նէր մի այլ կին և ոչ թէ դու, ապա եսակա՞նու-
թիւնս կյաղթէր ամեն ինչ, բայց քո առաջ,
Էմմա, ես խոնարհում եմ գլուխս և սպասում:
Դու ինձ այն աստիճանի բարձր ոլորդի հասցը-
րիր, որ ես անկարող եմ սէրը պարտքից բա-
ժանել. և եթէ դու ուզեցայիք ինձ սիրել և,
միևնոյն ժամանակ, զրկէիք յարգանքից, ապա
ես կասէի, «Էմմա, առանց քո սիրոյ ես կմեռ-
նեմ, այդ ճշմարիտ է, բայց դու մի դադարի
ինձ յարգելուց»: Երբ ես քեզ որոնում եմ հո-
գուս աչերով և դու ներկայանում ես ինձ մա-
ղուր և հրաշալի, ինչպէս աստղալից երկինքը,
ապա, ինձ թւում է, թէ ես պառկած եմ քո ոտ-
ների տակ և տեսնում եմ քեզ ինձանից բարձր
և կարծես ես համբուրում եմ միայն քո ոտ-
ները, որովհետեւ դու շատ հեռու, հեռու

երկնային անհուն բարձրութեան մէջ եւ...
Եթէ զոյութիւն ունին հրեշտակները և եթէ
նոքա կարող են սիրել, ապա նոքա սլարտաւոր
են սիրել այնպէս, ինչպէս ես եմ քեզ սիրում,
իմ Էմմա:

Դու կարող ես բոլորովին հանդիստ լենել,
Էմմա, որ քո հօր կամքի մտքին համաձայն
ես ընթանում, եթէ խորհուրդ հարցնես անդ-
րիական ամենալաւ բժիշկներին և հէնց այժմեա-
նից վճռես նոցա դատաստանին ենթարկելու:
Ի հարկէ, նա չէր կամենում քեզ անբազմապէս
ոչ, այլ նա կամենում էր, որ դու ուրիշի գլխ-
բաղդութեան պատճառ չլինիս: Դ-ր Թովմանի
խօսքերը կհանգստացնէին ամենազգայուն
խիղճը: Նա հօրդ ամենալաւ բարեկամը և ամենամտերիմ մարդն էր, նա գիտէր նորա բո-
լոր մտքերը, նա այդ վեհանձն և խիստ տան-
ջլած հոգու բոլոր գաղտնիքները կարդում էր:
Նա լանձն առաւ լուսաւորել քեզ իւր գիտու-
թեան լուսով, օգնել քեզ իւր երկարամեայ փոր-
ձառութեամբ: Երբ նա հետք խօսում է, դու
քո հօր ձայնն ես լսում: Երբ նա քեզ արգե-
լում է, դու ինքդ ասում էիր, որ այդ հօրդ
հրամայական ձայնն է, որը քեզ համոզում է

հնազանդւել: Եթէ նա քեզ ասաց, «Էմմա, ա-
ռողջացիր և լուսան», ապա դա հօրդ ուղար-
կած լուսոյ ճառագայթն է և մենք սլարտա-
ւոր ենք լսել նրան սուրբ եկեղեցւոյ թեմբե-
լարգելով և խաղաղ ուրախութեամբ:

Էմմա, մի խիտարիւր ինձ աքսորումս, մի եր-
կար նամակ գրիր, շնորհիւ դատաւարութեան
գոնէ կէս ժամով լոյս և օդ: Գթա՛ և մի խիտա-
րիւր նրան, որպէսզի նա կարողանայ չմեռնել և
լսել իւր դատաւիճիւր:

Էմման Վիլհամին

Լոնդոն, յուլիսի 5-ին 18...թ.

Երեկ առաւօտ վեր կացայ առ ոյգ: Քիչ քնե-
ցի և երազումս միայն դեղեր ու բժիշկներ տե-
սայ, բոլորը լուրջ, երկար կեղծամերով (парикъ)
և մառալլ դէմքերով: Տեսնում էի իբր թէ՛ ես
նստած եմ կամ, աւելի ճիշտ, պառկած եմ մահ-
ճակալի վրայ, իսկ նոքա բոլորը իմ շուրջը
կանգնած էին: Ես վախեցայ և վերմտիկ տակ

մտալ, բայց նոքա անհամբեր քաշեցին վերմակը
և բարկացած սկսեցին թխթխկացնել խղճուկ
կուրծքս: Ես ուզում էի պաշտպանւել այդ հը-
րէշներին: Բայց նոքա ձեռքերիցս բռնեցին և
ամուր պահում էին մահճակալի վրայ: Ուզում
էի աղաղակել, հօրս և մօրս օգնութեան կանչել,
բայց ձայնս դաւաճանեց ինձ և ես շարժւելու
անկարող էի, իսկ այդ միջոցին իմ կուրծքս ան-
գըթաբար բաղխում էին մի քանի մուրճիկների,
որոնցով այդ մօռլ ուրւականները իմ ամբողջ
ներքինս ցնցում էին:

Մտածում էի թէ արդէն մահս մօտենում է և,
բոլոր ոյժերս հաւաքելով, այնպէս բարձր գո-
ռացի, որ մօտի սենեակում քնած նաժիշտը
զարթնեց: Այդ աղաղակը զարթեցրեց նոյնպէս
քո էմմային. սիրտս ուժգին բաբախում էր,
կարծես ուզում էր դուրս թռչել կրծքիցս. իսկ
ես քլտինքի մէջ կոթել էի:

Երկար ժամանակ դրանից լետոյ ոչ մի կերպ
չկարողացայ քնել, հէնց արտեանունքներս
խփում էին, մէկ էլ իսկոյն երեւում էին բժիշկ-
ները և մուրճիկները, առաջինից աւելի զար-
հուրելի և ես հանդստացայ միայն այն ժամա-
նակ, երբ վճռեցի հէնց վաղը քո ցանկութիւ-

նը կատարել և Լոնդոնի ամենայայտնի բժիշկ-
ներին դիմել:

Այսպիսի հաստատ վճռով ես վեր կացայ,
հրամայեցի կառքը բերել և նաժիշտի հետ
ուղևորւեցի դ-ր Բ-ի մօտ: Նա ապրում է
քաղաքի միւս ծայրում. ճանապարհը ինձ ան-
վերջ էր թւում, անհամբերութիւնը լաւաջացը-
րեց զայրույթ. ես բարկանում էի թէ ձիերի և
թէ իմ վրայ, ամստում էի, որ քեզ խօսք տւի
և ուզում էի ինձ համոզել, որ զարշնի և
զարհուրելի երազի աղդեցութեան տակ տւած
խոստումը ինձ այնքան էլ չի կաշկանդում և, որ
այդպիսի խոստումի կատարելը չի կարող ոչ մի
բարոյական նշանակութիւն ունենալ:

Հօրս բժիշկը, մտածեցի ես, կարող է վիրա-
ւորւել դրանից, որ ես բացի իրանից խորհրդ-
դակցում եմ և այլ բժիշկների հետ և ես
կարծես տեսայ հօրս մօռլ պատկերը, որը
բարկացած կրկնում էր այն խօսքերը, որոնք
ես շարունակ լսում էի նրա բերանից. «Փոխեցէք
սպասաւորին, փոխեցէք ձեր շորերը, ձիերը և
մինչև իսկ տունը, բայց երբէք բժշկին չփո-
խէք»: Բայց դու, Վիլեամ, կարող ես սլարձե-
նալ, քո մասին մի միտքը հեռացրեց ծերունի

բժշկի պատկերը և նոյն իսկ հօրս զայրացած սուերը և ես մտածում էի միմիայն իմ խոստումի մասին: «Ի՞նչ մարդ է նա, որի համար տւած խօսքը սուրբ չէ: Նա վախկոտ է, նա զուրկ է նոյն իսկ այն չնչին անվեհերութիւնից, որպիսին ցոյց են տալիս այն լանցաւորները, որոնք համարձակ պատասխանում են օրէնքի և զատաւորների առաջ»:

Սոքա նմանապէս հօրս խօսքերն են: Արդ՝ դու ել նրա հետ համաձայն կլինիս և ես համբուրում էի երեակայութեամբ երկու սիրելի ըստւերները, որոնք գուցէ ինձ համար հաւասարապէս թանկագին են:

Դու միշտ գուշակում ես իմ մտքերը նախքան իմ մտածելը. դու հանապազ զգում ես այն, ինչ որ ես, դու պէտք է հասկանաս այն սուրբ հրճանքը, որը ընդգրկում է մարդուն այն ժամանակ, երբ նրա հոգու մէջ հանդիպում են, կարծես հեռից, երկու զօրեղ, բայց տարբեր զգացմունքներ և յարում են 'ի մի, յառաջացնելով մի տեսակ երջանիկ դուրսիւն, որից փչում է ջերմութիւն, ինչպէս արեւից և, որը ամենաբովանդակ է, ինչպէս երկինքը: Ներքի Էմմաիդ, որ նա մառախլապատ

Անդրիայում արեւելքի լեզւով է խօսում, բայց ես զգացի այդպէս այն վայրկեանին, երբ տեսայ, որ իմ Վիլեամը և հայրս միախառնւեցան մի ներդաշնակութեամբ:

Մենք մօտեցանք բժշկի բնակարանին: Նա տանը չէր և ծառան, որի արտաքինը կատարեալ համապատասխանում էր իւր տիրոջ մեծութեանը և հարստութեանը, ասաց ինձ, որ դ-ր Բ-ն հիւանդներ ընդունում է միմիայն երեքշաբթի և շաբաթ օրերը, կէս օրից լետոյ՝ ժամը մէկից մինչև չորսը: Թէև ամօթ է, բայց ես պէտք է խոստովանեմ, որ այդ պատասխանը ինձ շատ ուրախացրեց. արագ իջնելով սանդուղքից, ես ինձ աւելի ուրախ էի ըզգում, քան բարձրանալիս: Դեռ ևս քսան ու չորս ժամ իմ ձեռքի տակ էր և մեղքը իմս չէր:

Այսօր ես կրկին ուղեւորւեցի դ-ր Բ-ի մօտ և այդ այցելութեան պատճառած հոգեկան խորը ցնցումից կազդուրւելով, գրում եմ քեզ որպէսզի դու անդաւաճան բարի գտնես գէպի քո

Էմման, որը քո սիրոյ համար այցելեց առող-
ջապահութեան աստուածուհու այդ դաժան և
ինքնավստահ պաշտօնեային:

Ռ-ը Բ-ն կատարեալ վիթխարի է. չեմ հաս-
կանում թէ ինչպէս նրա նուրբ հագուստը և
սպիտակ փողպատը չեն պատուում նրա մկա-
նունքների ուժգին ճնշումից և ահագին փորի
ծանրութիւնից: Ես սարսափով դիտում էի նրան,
թէ ինչպէս նա շարունակ շարժում էր ձեռ-
քերը և ծոմուում աթոռի վրայ և ամեն րոպէ
ինձ թւում էր թէ հէնց այս րոպէին այս նուրբ
կարասին, որի վրայ շարժւում էր աննստակեա-
ցը, կջարդւի և ես արդէն իմ վառ երեւակա-
յութեան մէջ տեսնում էի այդ մսի և ճարպի
խոշոր զանգւածը բժշկական կաբինետի թան-
կազին դորգի վրայ բնկնելիս: Ռ-ը Բ-ն խօսում
էր շատ բարձր, դա աւելի շուտ դաժան և
կրքոտ ձայն էր և, միևնոյն ժամանակ, նա ամեն
բանի մասին խօսում էր այնպիսի խորը համոզ-
մունքով և այնպիսի բռնակալական եղանակով,
որ կարծես չէր կարելի ընդհատել նրան, մա-
նաւանդ հակաճառել: Երբեմն նա իմ վրայ ճըն-
շող տպաւորութիւն էր թողնում, ինձ թւում
էր թէ այն ամենը՝ ինչ որ նա ասում է գուտ

ճշմարտութիւն է և, իբր թէ, նրան անծանօթ
է կասկած առած բանը:

Ցանկանալով խոյս տալ անօգուտ և տանջող
կուրծքը թխթխկացնելուց, ես համառոտ բա-
ցատրեցի նրան, որ ես թոքախտով մեռածի աղ-
ջիկ եմ, որ իմ բոլոր եղբայրներն ու բոյրերը
մեռել են նոյն հիւանդութիւնից և, որ ես ինքս
էլ տանջւում եմ շնչափողի թունդ բորբոքու-
մից (воспаление бронхов) և արիւն թրեւում:
Իմ պատմութեան մէջ ես բաւականանում էի
միայն այն անհրաժեշտ բաներով, որ նա կա-
րողանար ինձ հասկանալ. բայց նա կարծես ա-
մեն բան արդէն գիտէր և իւրաքանչիւր բո-
պէ ընդհատում էր ինձ իւր «հըմմ... հըմմ...»
հնչիւններով: Ես նրան ասացի, որ չեմ կամե-
նում ինձ քննել տալ, որովհետեւ դա շատ ան-
գամ է կատարւել և ցոյց տւեցի նրան մի վը-
կալական մի քանի բժիշկների ստորագրու-
թեամբ, որոնց կանչել էր հայրս և որը ես ան-
գիր գիտէի, թէ և ոչինչ չէի հասկանում:

«Ժառանգական թոքախտ (бронхитизм)», աջ
անրակի տակ խուլ ձայն. ամբողջ կուրծքի մէջ
շնչառական ձայները շատ թույլ են, բայց վերև,
դէպի աջ կողմը, երկար խիստ և ընդհատող

շնչառութիւն: Կրճքի երկու կէսերում թաղանդի բարբոթման հետքեր (плевропневмоническаго характера): Մարսողական գործարանները ամենալաւ դրութեան մէջ են»:

Յույց տալով դ-ր Բին ալդ մահւան դատաւորութիւնը կերպարանք ունեցող այդ խորհրդաւոր և անգուժ թուղթը, որը գրած էր մի ինչ որ անհասկանալի լեզուով, ես ցանկութիւն լայտնեցի իմանալ՝ կարճ է արդեօք կլիմայի փոփոխութիւնը այնքան ուղղել իմ առողջութիւնը, որ չքանար ամեն տեսակ վտանգ սպազալում, և..... Այդտեղ ես սկսեցի կարմրել՝ զուր աշխատելով արտալայտել այն ծանր մտքերը, որոնց համար և դու առաջարկեցիր ինձ խորհրդարկեցել Լոնդոնի լայտնի բժիշկների հետ: Հաւատալով եմ քեզ, որ ես անսպառնալի կարողացաւ արդ մտքերը, եթէ հաստիկ դ-րը, որը ուշադրութիւն չէր դարձնում ոչ իմ կարմրելու և ոչ շփոթութեանս վրայ, չընդհատէր ինձ խստութեամբ. այդ բանն իմ սիրտը խոցեց, և դու, բարի Վիլեամ, անպատճառ ինձ հետ միասին զգացիր այդ ցաւը:

Վրանից յետոյ նշանաւոր դ-րը ինձ համար բոլորովին օտաւ դարձաւ. նա նայում էր ինձ

և խօսում, բայց իմ ականջը մեքենաբար էր ընդունում նրա խօսքերի ձայնը, իսկ նորա խօսակցութիւնը չէր շարժում ինձ, չէր պատճառում ոչ հաւատ և ոչ երկիւղ:

Ծիծաղիր քո Խմմալի վերայ, որը դատաւորութեամբ է բրիտանական բժշկական արւեստի լուսատուին. բայց ինձ թուում է, որ մի բժիշկ, եթէ նա չի հասկանում իւր հիւանդին՝ չի կարող բժշկել նորան:

Դ-ր Բ-ն չկարողացաւ սպասել մինչև որ ես վերջացնէի ու բացատրէի նրան. նա՝ մարդարէական տաղանդի տէր լինելով, չկարողացաւ հասկանալ այն ծանր մտքերը, որ ես ուզում էի ասել նորան: Նա չճանաչեց ինձ և իմ զգայուն ու հիւանդոտ կազմածքը. դրա համար էլ նրա խորհուրդները ինձ համար արդէն ոչ մի նշանակութիւն չունէին:

«Ա՛խ, եթէ չեմ սխալուում, դուք կամենում էք փոխել կլիման, գնալ Նիցցա կամ Պիզա, Պոկամ Մենտոն. կամ Պիրինէա, կամ գուցէ Մադերա կղզին, Եգիպտոս կամ լիւս ասիական բարձրաւանդակները, կամ Պերուի, Յերո-դը-Պատկոն: Բայց պէտք է ձեզ տեսլ, որ այդ բոլորը միայն մօղնի լիմարութիւն է, որ քարոզում

են բժիշկները և, որին հաւատում են հիւանդ-
ները: Հա, ասենք ճիշտ որ շատ յարմար է հի-
ւանդներին հեռու տեղեր ուղարկել, որպէսզի
նոքա մեր աչքերի առաջ չմեռնեն և մենք
չլինենք դորա պատճառը: Բայց իմացած եղէք,
որ նոյն իսկ Պիզայում և Եգիպտոսում էլ թո-
քախտ կայ, որ այդ տեսակ հիւանդներից շատ
կան նոյն իսկ Մադերայում ու Նիցցայում:
Այն բժիշկները, որ խորհուրդ են տալիս հի-
ւանդներին ճանապարհորդել, իսկական տգէտ-
ներ են, նոքա հաւատ չունեն դէպի իրանց գի-
տութիւնը. իսկ ով հաւատ չունի դէպի ինքը,
դէպի իւր գիտութիւնը, դէպի իւր արւեստը,
նա կամ չիմար է, կամ սրիկայ: Մեր դեղերի
գրքերում և դեղատներում կան այնպիսի մի-
ջոցներ, որոնք հարկւր անգամ աւելի ազդեցիկ
են, քան Միջերկրական ծովի տակ գեփիւռը:
Այլ դա է իսկական իմաստութիւնը: Դուք,
հասանական է, մի այլ էլ չէք հասկանում բը-
ժըշկականութիւնից. բայց դուք հեշտութեամբ
կարող էք ծաղրի առարկայ շինել այդ բժիշկ-
ներին, որոնք դիմում են օդի, կլիմայի և ու-
րիշ բաների օգնութեան, որովհետեւ այն երկըր-
ների մէջ, որ նրանք մատնացոյց են անում թո-

քախտների համար, կան չոր և խոնավ, բարձր
և ցածր, ցուրտ և տաք տեղեր: Ամենակա-
րող Աստուած, որչափ ազիտութիւն, որչափ
խաբէութիւն... Եւ այդ բոլորը ինչի համար:
Ես կարող եմ վառարանի և ջերմաչափի օգնու-
թեամբ նոյն իսկ ձեր սենեակում ամեն տեսակ
չիմաներ ստրքել. փոքր ինչ քարածուխի և
ջրի օգնութեամբ ստեղծել ձեզ համար Մադերա
և Նիցցա: Օքսֆորդ փողոցում կամ Պիկադեւլա
յում և դուք ստիպւած չէք լինի տեղափոխւել,
թողնել ձեր գորգերը, ծաղիկները և դեղձա-
նիկները: Բայց, հասկանալի է, պետք է մի կա-
թիլ համբերութիւն ունենալ. գորգերի, ծաղիկ-
ների և դեղձանիկների երգերի վերայ ես կա-
ւելայցնեմ էլի մի քանի տգրուկներ, մուշկա-
ներ, ապէսիսի մաշ (аутопритовая мазь) ձկան
իւղ. ես ձեզ հետ կվարւեմ խիստ, բայց ողոր-
մածութեամբ... Փոքր ինչ գրգռիչ սպեղանի
կաշւի վրայ և դառն դեղեր ներքինի համար...
Ես միտք ունեմ բժշկել ձեզ քաղցով ու
տանջանքներով... ընտանեկան բանտարկու-
թեամբ և ահով...»:

Դ-ր Բ-ի խօսակցութիւնը աւելի և աւելի
տարօրինակ ու վայրենի էր դառնում. բայց նո-
հիւանդ սէր.

րա խօսակցութեան եղանակը այնպէս համոզեցուցիչ էր, որ ես ստիպւած էի լսել նորան: Երեւի նա մեծ բաւականութիւն էր զգում ի ցոյց դնելով այն բոլոր սարսափելի միջոցները, որոնք նա գործ էր դնում. այդ միջոցին նա անդադար շուռ ու մուռ էր գալիս Կաթողի վրայ, քթախոտ էր քաշում և իւր շուրջն եղած բոլոր առարկաները շարժում. նա երեւում էր միւսնոյն ժամանակ հսկայ և դահիճ:

— Եւ այց, յարգելի տիրուհի, հիւանդութեան բժշկութիւնը մի կռիւ է հիւանդի և բժշկի մէջ, կռիւ բնութեան և գիտութեան մէջ: Եւ ով աւելի զօրեղ ու համարձակ է նա յաղթող է հանդիսանում: Նայեցէք (այստեղ նա ինքն էլ չնկատելով, սերդուկի թևերը քշտեց, կարծես թէ մուշտակուի էր պատրաստուում), ես բուական ուժեղ և անվեհեր եմ: Արհեստակիցներս ինձ անւանում են կոպիտ վխալխա* և ասում են, որ տարիների ընթացքում ես դարձել եմ իմ սեպհական կարգի կատարան, բայց ես

*վխալխա — բժիշկ, որը բժշկելու ժամանակ գլուխաւորապէս աչքի առաջ է ունենում կենսական ոյժերը պահպանել:

Ծան, հեղ.

օրէ ցօր աւելի մեծ հաւատ եմ ձեռք բերում դէպի իմ գիտութիւնը և արտայայտում եմ այդ գուցէ, չափազանց և եռանդուն կերպով... Ծիծաղեցէք, ինձ անւանում են անգլիական բժշկականութեան Ողիսեւս'րա համար, որ ես ապացուցանում եմ արիւնստութեան անհրաժեշտութիւնը մինչև անգամ Հնդկաստանի հիւանդների համար, որոնք տանջւում են հասարակածային տենդով. նրա համար, որ ես չեմ զբաղւում այն լսելով, որոնք կծում են քեզ, նրա համար, որ ես ժամանակ չեմ կորցնում այն չնչին բաների վրայ, որոնք չունեն ոչ մի նշանակութիւն, չեմ չափում ուռուցքների մեծնշանակութիւնը, չեմ որոշում լեարքի ճիշտ սահմանները, այլ ուղիղ դիմում եմ դէպի կեանքը, քրննում եմ նրան և ինձ հաշիւ եմ տալիս օրգանիզմի անկանոնութեան և խանգարման մասին:

Դ-ր Բ-ն, 'ի հարկէ, երբէք չի փորձել իւր վրայ այն տգրուկների ոյժը, զրգուիչ միջոցները և մուշկաները, որոնք նա առաջարկում էր ինձ: Նա չէր վախենում հիւանդութիւնից, նրա նեղ հագուստը սպառնում էր սպառուել և ամբողջ խօսակցութեան ընթացքում նա շարունակ քրտնում էր, այնպէս որ նա յաճախ ստիպւած

էր իւր ճակատից քրտինքը սրբել: Իսկ ես այնպէս վրդովւած էի, որ այդ քրտինքը իմ աչքին երևում էր արիւնով շաղախւած ճարպ...:

«Ուրեմն, եթէ դուք ուզում էք հիմնովին բժշկուել, ապա հրաւիրեցէք ինձ ձեր տուն և ես ձեզ կբժշկեմ, Բայց եթէ դուք չէք կամենում Անգլիայում մեռնել, ապա համեցէք, գրեցէք Մադերա կամ Նիցցա...»

Այս վերջին խօսքերը, որով դ-ր Բ-ն վերջացրեց իւր ճառը, այնպէս խիստ էին, որ ես չկարողացայ ոչինչ պատասխանել նորան և մրմնջալով մի քանի անկապ նախադասութիւններ՝ ես շտապեցի վճարել այցելութեանս համար և դուրս գնալ:

Այսպիսով ես տարալ արդէն ինձ սպասող տանջանքների մի երրորդ մասը և, ասում եմ քեզ, թանկագին Վիլեամ, որ այդ արեցի միայն քեզ համար...:

Այժմ էլ կգնամ դ-ր Բ-ի երկու արհեստակիցների մօտ և այն ժամանակ արժանի կլինիմ ոչ միայն քո բարեկամը կոչուելու, այլ և քո սրտի հերոսուհին:

Այսօր ես ստիպողական կարիք եմ զգում գործածելու մի որ ևէ գեղթափ այն խորհուրդի

դէմ, որ ես լսել եմ դ-ր Բ-ից: Ես կվերցնեմ Բէրնսը և քո նամակները և կգնամ մեր պատիզի առանձնացած մի անկիւնը, որտեղ մի քանի ժամ կանցկացնեմ քո մասին լիշողութիւններով, խորասուզելով բնութեան և սրտի պօէզիայի մէջ:

Եւստան Վիլեամին.

Լոնդոն, յուլիսի 6-ին 18...թ.

Դ-ր Բ-ին արած այցելութիւնիցս լեռոյ ես զգացի, որ ուտերիցս գլորեց մի ծանր բեռ: Ես համոզւած էի, որ ամբողջ բրիտանական թագաւորութեան մէջ հաստատապէս չի կարելի գտնել մի ուրիշ բժիշկ, որը ինձ համար նոյնքան անհամակրելի լինէր:

Այսպէս, ուրեմն, ես մտածում էի, որ ճակատադիրը հէնց առաջին անգամին ուղարկեց ինձ ամենազառն փորձութիւն և, որ բժշկականութեան յետագայ երկու մարդարէները, որոնցից ես պիտի խորհուրդ հարցնէի, կլինին քաղաքավարի և սիրելի, ինչպէս մարդկութեան ան-

կեղծ բարեկամներ:

Բայց ես նորից սխալեցի և սուիթ ունեցայ կրկին համոզելու, որ բնութեան մէջ աւելի շատ վատ բան կայ, քան թէ լաւ: Թանկագին Վիլեամ, լսիր ինձ ուշադրութեամբ, վերցրու քո տան մէջ դռնաւ հին ձեւի մի ամենալարմար բաղկաթու, մի լաւ նստիւր մէջը, փակիր աչերդ և երեակալութեամբ հետեիր Էմմայիդ, որը քո սիրոյ համար գնաց Սրբալական փողոցը դ-ր Տ-ի մօտ:

Հաղիւ ծառան ներս տարաւ ինձ սենեակը և ես մի արագ հայեացք ձգեցի կահաւորութեան վրայ, որ սիրտս ճնշեց: Ես զգացի մի սարսուռ, որ պատեց իմ հոգուն և, կուչ գալով՝ շտապեցի փաթաթել շալով, որպէս զի պահպանեմ ինձ տաքացնող ներքին ջերմութիւնից:

Սենեակում թագաւորում էր լուսթիւն և անալոյման համաչափութիւն. ալստեղ չէր նկատուում ոչ մի աւելորդ առարկայ, ոչ մի ամենաաննշան պրտակեր, ոչ ծաղիկ, ոչ մի առարկայ, որը արտաշալտէր թէ սենեակի տէրը սիրում է այն ամենը, ինչ գեղեցիկ է, կամ թէ ունի ճաշակ և համակրանք է տաճում գէպի մի որ և է բան:

Երևում էր, որ մինչև անգամ գոյները իւրեանց վառ ներգաշնակութիւնով և տարբերութիւնով հալածւած են ալստեղից, ուր իշխում է միայն մաթեմատիկան:

Ես փակեցի աչքերս և սկսեցի սպասել դ-ր Տ-ին, որ և շուտով յայտնւեց: Նա իւր սենեակի նման պաղ և դժգոյն էր: Թեթեւ զլուխ տալով, առանց մի խօսք ասելու վերցրեց աթոռը և նայեց ինձ, սպասելով, որ ես կսկսեմ խօսել եմ հիւանդութեան մասին:

Երկու կամ երեք անգամ ես նայեցի նրան և նորից աչքերս խոնարհեցի, լականալիցս փոխելով թէ դէմքիս և թէ հայեացքիս արտաշատութիւնը, կարծես թէ, ես կամենում էի ազդել նորա սառն և հանգած աչքերի վերայ, որոնք ոչինչ չէին ասում ինձ և միայն երկիւղ էին ազդում: Ես ոչ մի ժամանակ չեմ կարողացել խօսել մարդու հետ, նախքան մեր մէջ մի ջղալին աներևոյթ կապ հաստատելը, ոչ մի ժամանակ չեմ կարողացել երեակալել, որ երկու մարդկային էակներ կարող են փոխադարձաբար միմեանց տալ հոգու այն շնչառութիւնը, որ կուտում է խօսակցութիւն, առանց ասելութեան կամ սիրոյ, լարգանքի կամ արհամարհանքի:

միջնորդող միացած լինելու: Այսպէս ուրեմն, ստիպւած լինելով խօսել այս սառը մաքրու հետ, ես աշխատում էի պահել երևար, աշխատում էի փոխել ինձ պահելու եղանակը, իմ հայեացքը, խօսակցութիւնը՝ այնպիսի մի կէտ գտնելու համար, որով մենք կարողանայինք մօտենալ իրար: Բայց ամեն բան իզուր էր. դ-ր Տ.-ն և ես երկու կառարեւապետ տարբեր էակներ էինք. մեր մէջ գտնուում էր մի վիհ, աւելի խորը քան այն, որ գտնուում է պիծակի և ծաղկի մէջ, գալլի և դեղձանիկի մէջ:

Մեծ արագութեամբ ես բացատրեցի նրան իմ այցելութեան նպատակը, յայտնեցի ուրիշ բժիշկների կարծիքը իմ մասին և հարկերեւորդ անգամ պատմեցի իմ հիւանդութեան նշանների նկարագիրը (аускультаторный диагноз). ես աշխատում էի, մի խօսքով, կառարել իմ դործը, որքան կարելի է արագ, ես չէի կամենում նայն իսկ մի չնչին բուլէ կորցնել այդ անհաճոյ տեսակցութեան վրայ:

Սահայն դ-րը շարունակում էր լսել, նա թույլ տւեց ինձ խօսել, բայց զէմքի ու աչքերի սչ մի շարժումով չէր հասկացնում, որ ինքը լսում է և առհասարակ կենդանի է:

Այժմ ինձ համար արդէն բոլորովին պարզ էր, որ ես բոլոր հոգովս առում էի դ-ր Տ.-ին:

Յետոյ, երբ ես նորան բոլորը պատմեցի, կարելին և անկարելին, իմ հիւանդութեանս մասին բոլոր գիտեցածս ու չգիտեցածս, խօսելով համարեա անգիտակցաբար քառորդ ժամ ես լսեցի և սպասում էի, թէ ինչ պիտի պատասխանէ այդ երկակենցաղ էակը: Ես յօսուեցի, որ զուցէ նրա ձայնը աւելի սրաագին լինի: Միթէ աշխարհումս գոյութիւն ունին այնպիսի արարածներ, որոնք պաղ են ինչպէս սառույց և աւելի զգուցի քան իժը:

Դ-ր Տ.-ն պատասխանեց շատ սառը կերպով: «Բոլորը, ինչ որ դուք ասացիք, զուցէ և ճշմարիտ է. բայց այնուամենայնիւ ես ինքս պէտք է քննեմ ձեր օրգանները»: Եւ նա, երկար խօսակցութեամբ յոգնածի նման, վեր կացաւ և մատով ցոյց տւեց ինձ բազմոցը, որը դրւած էր հիւանդներին քննելու համար: Ես վեր կացայ կարծես թէ մի որ և է բռնակալի տւած նշանով. բայց ցանկանալով խոյս տալ տանջող ձևական քննութիւնից (процедура) և աչքի առաջ ունենալով, որ իմ թոքերս ար-

դէն հետազօտել էր բժիշկների մի ամբողջ մասնաժողով, ես փորձեցի մի անգամ էլ դիմել նորան աղաչանքով, փորձեցի ներողութիւն խնդրել և մրմնջացի. «Բայց.... ներեցէք....»:

Սակայն նա ուշք չդարձրեց իմ խօսքերին և, դէմքի սկեպտիքական (կոսկածաւոր) տրտայալտութեամբ, թափ տւեց գլուխը աւելի հրամայական կերպով, մատով ցոյց տալով ինձ բաղմոցը:

Բաղմոցի երեսը օլատած էր կաշուով և շատ մաքուր էր, բայց նորանից էլ փչում էր նոյն սառնութիւնը, ինչպէս և ամբողջ սենեակից, նորա սարք ու կարգից և հէնց իւր բժշկի խօսքերից:

Քննութիւնը տւեց կէս ժամ և եթէ մի բույս էլ աւելի քաշէր, ինձ թւում էր, թէ ես կմեռնէի...

Ես վեր կացայ ճնշւած ու տանջւած, բայց լետույ նորից նստեցի: Ինձ տանջողը դեռ ևս կանգնած էր իմ առաջ և մի քանի բույս շարունակեց նորա սարսափելի միմիկան, որը ընդհատուած էր միայն «Հըմմ, Հըմմ....» միավանկերով:

Նա շարժում էր գլուխը, կծոտում էր շըր-

թունքները, կնճռոտում էր ճակատը և ձախ ձեռքով շփում էր իւր ածելած կզակը:

«Այդպէս՝ ուրեմն դուք ուզում էք գնալ Մադերա, որպէսզի խնջա տաք ձեզ սպասող վիճակից...: Միթէ դուք չգիտէք, որ այդ կղզու բնակիչների մէջ էլ կան ստպատողներ, խոզախոտներ (ЗОЛОТУШНЫЕ), և թոքախտներ. սակայն դուք կարող էք մխիթարւել նորանով, որ կոտեսէք այնտեղ կրծքացաւ ունեցողների համար հիւանդանոց. դա հիմնել է Դօն-Պետրօ I կայսեր այրին. բայց դրա անունը շատ էլ քաղցր յիշողութիւններ չի զարթեցնում, դա Մարիա Ամելիա դշխոյն է, Բրազիլիայի կայսրուհու աղջիկը, որը այնտեղ էր գնացել առողջանալու համար, բայց, դրա փոխարէն, մեռաւ այնտեղ:

«Եթէ դուք ուզում էք գտնել այնպիսի մի տեղ, ուր չկան թոքախտներ, այն ժամանակ դուք ոչ թէ հարաւ այլ դէպի հիւսիս պիտի դնաք: Օրինակի համար, ինչո՞ւ չէք գնում Իսլանդիա:

«Թոքախտով հիւանդներ ամենաքիչ թւով գրանւում են այն երկրներում, որոնք տարածւած են միջին բարեխառնութեան գծերի մէջ—այն է 50° և 20° ֆ. մէջ: Պետերբուրգում և Մոսկ-

ւայում, որտեղ միջին բարեխառնութիւնը 38°
ֆ. է, Նանադայում, Ամերիկայի Միացեալ Նա-
հանգների Հիւսիսային մասում: Իսլանդիայում,
Փերրօ կղզիների վրայ, հէնց նոյն իսկ Նորվե-
գիայի ամենահիւսիսային սահմաններում, Շը-
վեցիայում և Լապլանդիայում թոքախտը չա-
փազանց ուշ-ուշ է պատահում:

«Նոյնպէս և հարաւ-արեւմտեան Շօթլանդիա-
յում և Հերրիգեան կղզիների վրայ թոքախտ
ուռնեցողները շատ քիչ են. բայց այստեղ հարցը
ներկայանում է աւելի խառնաշփոթ. մի քանի
հեղինակաւոր անձինք հակառակն են պնդում:
Մօրգանը ենթադրում է, որ դա կախումն ունի
ծխից, որով տեղացի բնակիչների խրճիթները
միշտ լիքն են լինում. նոցա վառելիքն է տորֆ
և, ինչպէս յայտնի է, նոքա գաղափար չունին
մեր վառարանների մասին: Իսկ որտեղ վառում
են քարածուխ, այնտեղ թոքախտը յաճախ է
պատահում: Բժշկականութեան մէջ ոչինչ դը-
րական բան չկայ, տիրուհիս: Բոլորը ձեզ կա-
սեն, որ էլէքտրացած թթւածինը գրգռում է
թոքերը, բայց Հերրիտեան կղզիների վրայ է-
լէքտրացրած թթւածինը առատ է, իսկ այն-
տեղ թոքախտ չկայ: Բոլորը ձեզ կասեն, որ

թոքախտը շատ յաճախ յառաջանում է խո- (301)
ղախտից. բայց Հերրիգեան կղզիների վրայ և
հարաւ—արեւմտեան Շօթլանդիայում խոզախտ-
ներ շատ կան, իսկ թոքախտ ուռնեցողներ քիչ
են:

«Ճշմարիտ չէ նաև այն, որ լաւ կլիման պահ-
պանում է թոքախտից: Բէնուլատօն-դը-Շատօ-
նէֆը գտել է, որ զօրքերի մէջ հիւսիսային
Փրանսիային ընկնում են 85 թոքախտ ուռնե-
ցողներ, միջինին—79 և հարաւայինին—82:
Մարսէլլում, ասում են, թոքախտից մեռնում
է բնակիչների քառորդ մասը, ձենովայում—մի
վեցերորդ մասը: Անտիլեան կղզիներում, Մա-
գերայում, Բիօ-դը-ժանէյրօյում այդ հիւանդու-
թեան դէպքերը շատ յաճախ են լինում, նոյն-
պէս և Նիցցայում, Լիվօնօյում, Փլօրէնցիա-
յում, Նէպօլում, Մալթայում, Իսպանիայում,
Պորտուգալիայում, Կալիթայում և Մադրա-
սում... Մարդինիկօ կղզու վրայ նա աւելի
սակաւ է, քան թէ Փարիզում:

«Բայց տեղացի թոքախտների համար մի
բան, իսկ այնտեղ առողջանալու ուղարկւած-
ների համար մի այլ բան ասելով դեռ հարցը
բաւականաչափ չէ պարզւած: Տաք տեղերի

Թոքախտ ունեցողներին համար սովորաբար վատ է լինում, երբ նոքա գնում են ցուրտ երկրներ: Մի քանի բժիշկներ խորհուրդ են տալիս գնալ ճահճային տեղեր. Բուդէնը ապացուցանում է, որ համաճարակ *Տրասխան* հիւանդութիւնները և թոքախտը միատեղ չեն կարող գոյութիւն ունենալ: Փերժէն, Գինգրակը, Ժենէն, Հուզին և Շեգելը չեն ճանաչում այդ տէօրիան: Իսկ ինչ վերաբերում է ինձ, միայն մի բան գիտեմ, որ Լէյպցիգի բնակիչները միաժամանակ ենթակայ են թէ այդ և թէ միւս հիւանդութիւններին. — թոքախտին և երեքօրեայ բնահատուղ տենդին:

«Մի քանի բժիշկներ իրենց մօտ յաճախող հիւանդներին ուղարկում են բարձրագիր տեղեր: Նոքա կարծում են, որ Ալպերի և Անդերի բարձրութիւններում թոքախտ չկայ, բայց այդ էլ ապացուցւած չէ: Բժշկականութեան մէջ ոչինչ որոշ բան չկայ: Իմ բարեկամ դ-ր Իրվինը բժշկութիւն է արել մի քանի տարի Պերտշիրում՝ Բօննայի և Ադօլէի մօտ և գտել է, որ այնտեղ թոքախտ յաճախ պատահում է գլխաւորապէս բարձրագիր տեղերում:

«Թոքախտի զարգացման վրայ, տիրուհի, ա-

ւելի շատ ազդում են շարժողութիւնը՝ առողջութիւն պահպանելու համար (motion) և կենցաղավարութիւնը, քան թէ կլիման: Andral-ը գտել է, որ թոքախտ առաւել յաճախ պատահում է կենդանիների մէջ, բացի շներից և բացառութեամբ է այդ նրանով, որ վերջիններս ժամանակի մեծ մասը անցնում են շարժողութեան մէջ: Այդ կարծիքը աւելի ևս հաստատուում է այն փաստերով, որ ուռուցքներ շատ յաճախ ունենում են շղթայւած և մուծ ու վատ բոյներում պահւած շները:

«Փուրկօն պատմում է մի բժշկի շան մասին, որ միշտ հետևում էր իւր տիրոջը՝ նորա ամենօրեայ երկարատև զբօսանքների ժամանակ: Երբ որ բժիշկը մտաւ գինւորական ծառայութեան, շունը շղթայւեցաւ և սատկեց թոքախտից: Թոքախտի դարգացման վրայ մեծ ազդեցութիւն են ունենում և կրքերը, որոնք հոգին դէպի անկումն են տանում, որովհետև նոքա փչացնում են արիւնը, խանգարում են նեարգային համակարգութիւնը, դանդաղեցնում են մարսողութիւնը և այլն:

«Լեննոկը թոքախտի ծագման ժամանակ մեծ նշանակութիւն է տալիս բարոյական պայման-

ներին և յայտնում է հետևեալ կարծիքը՝ համարեա՞նք բոլոր ոչ ժառանգութեամբ թոքախտ ունեցողները, այդ հիւանդութիւնը ստանում են բարոյական ցնցումներից: Եթէ արդար է դժբաղդ պնդածը, որ բոլոր մարդկանց $\frac{4}{5}$ մասը մեռնում է վշտից, այն ժամանակ ի հարկէ բարոյական ցնցումը և թոքախտը նոյնն են:

«Դ՛ր Ռուֆը բաւական ուղիղ կերպով հետևեալ մի քանի խօսքերի մէջ որոշում է թոքախտների պարտադիր կենցաղավարութիւնը. — «Ուրախացէ՛ք կեանքով, ապրեցէ՛ք որտեղ կամենում էք, ճանապարհորդեցէ՛ք՝ կուգէ՛ք ձիով, միայն թէ աւելի շատ շարժողութեան մէջ եղէք»:

«Սակայն դա էլ բաւականաչափ ճիշտ չէ պարզաձ, քանի որ բժշկականութեան մէջ ոչինչ չկայ պարզ որոշում: Եթէ դուք չէք ուզում ցուրտ երկրներ գնալ, շատ շարժել և չէք կարող ուրախ լինել, այն ժամանակ ճանապարհորդեցէ՛ք ծովի վրա:

«Գալենը, ծերունի Գալենը, սուաջարկում էր իւր թոքախտներին ճանապարհորդել նեղոսի ափերով ոչ թէ նրա համար, որ ինքը՝ ճանապարհորդութիւնը օգուտ կտար, այլ

propter longinquitatem navigandi (երկարատեւ լողանալու համար): Այժմ էլ այստեղ Լին, Գիլլըրիտը և ուրիշները ապացուցանում են, որ ծովային ճանապարհորդութիւնները շատ օգտակար են, ինչպէս թոքախտի բժշկութեան, նոյնպէս և նորա զարգացման առաջն առնելու համար: Կնօկսը այդ բացատրում է նրա-նով, որ ծովի վրա օդի բարեխառնութիւնը հաւասարաչափ է. իսկ Շպիտը իբրեւ պատճառ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ ծովային օդը աւելի քիչ թթւածին է բովանդակում իւր մէջ: Բայց այդ էլ ապացուցած չէ, բժշկականութեան մէջ մեզ ոչինչ յայտնի չէ՝ ճշգրիտ: Ռօշարը պնդում է, որ ծովային ճանապարհորդութիւնը յաճախ արագացնում է քան կանգնեցնում թոքախտի հոտանքը, որ թոքախտը շատ յաճախ պատահում է նաւաստիների մէջ քան թէ ցամաքի զօրքերի մէջ, որ նա աւելի յաւաքագրւում է ծովի վրայ, քան թէ ցամաքի յաւաքագրւում է ծովի վրայ, որ դորա համար ծովային ճանապարհորդութիւններ պէտք է արգելել այն ջահիլներին, որոնց սպառնում է թոքախտը:

Բժշկականութեան մէջ ամենայն ինչ կարելի է պաշտպանել և հերքել: Ես կարող եմ չիւանդ սէր.

բժշկել ձեզ և այսպէս՝ մինչև ծնօտը թա-
ղել ձեզ հողի մէջ և մալխից մինչև դեկտեմ-
բեր ամեն օր նորոգել ձեր գերեզմանը: Այս
եղանակը կարող է տարօրինակ թւալ, բայց ոչ
նոր: Սօլանդո-դա-Լիւկը անւանում է այդ «հո-
ղային վաննար»: Շատերն այն կարծիքին են, որ
բոլոր նոր մետոգները կանոնաւոր են, գոնէ այդ-
յարմար է: Աւելի դիւրին է չափել ժամանակը,
քան գիտութեան շարժումը, աւելի հեշտ է
տարիների հետ դործ ունենալ, քան խելքի քըն-
նագատութեան հետ: Օրինակ՝ մի քանի տարի
առաջ ծիծաղում էին այն ընդհանրացած կար-
ծիքի վերայ, թէ թոքախտը համաճարակ ախտ
է, իսկ այժմ նորից թեքւում են դէպի այդ
հին կարծիքի կողմը: Այսպէս է նորաձեւ գա-
ղափարների դարեւոր շարժողութեան շրջանը:
«Իհեռ մի քանի տարի առաջ Պլինիոս կըրա-
սերը ասաց, որ թոքախտը համաճարակ է»*)

*)Մենք փնտռեցինք Պլինիոսի հեղինակութիւն-
ները մէջ դ-ր Տ-ի ցուցմունքը, որի մասին ասում
է էմման Խըր Նամակում. և իրաւ գտանք նորա
Խըր բարեկամին գրած նամակը (VII գ, էջ 10),
որեց պարզ երևում է, որ այն ժամանակ թո-
քախտը ընդունւած էր իբրեւ համաճարակ ախտ:

Խոստովանում եմ քեզ, անգին Վիլեամ, որ
ոչ մի ժամանակ ես չեմ անիծել իմ լիշողու-
թիւնս, որին դու գերազանց ես ասում, այն-
պէս ինչպէս այն օրը, երբ ես նստած էի այդ
խօսող մեքենայի առջև, որ կոչւում է դ-ր
Տ. և լիշում էի նորա բոլոր խօսքերը, քանի
որ իմ լիշողութիւնից, իրաւ որ, խոյս տալ
չի կարող ոչ մի անուն և թւանշան, ոչ մի
խօսք:

Բայց ինչ օգուտ բոլոր այդ գիտութիւնից,
եթէ մտքի ահագին աշխատանքից լետոյ չի
կարելի նորանից դուրս բերել մարդու օգտա-
կար ոչ մի ճշմարտութիւն: Ինչե՛ք է ծառայում
այդ անպտուղ և սառը գիտութիւնը: Նա չի
կարողանում մեզ ոչ մխիթարել, ոչ էլ յուսա-
դրել և միմիայն այն եզրակացութեանն է գա-
լիս թէ «մենք ոչինչ չգիտենք, ոչ մի ճշգրիտ

«Angit me Fanniae valetudo. Contraxit hunc
dum assidet Juniae virgini, sponte primum
(est enim affinis) deinde etiam ex auctoritate
pontificum... Insident febres, tussis increscit,
summa macies, summa defectio»...

բան չկայ: Իմ բարի Վիլեամս, ներիր համարձակութեանս, որով ես գնահատում եմ գիտութիւնը իմ կանացի սրտիս տեսակէտից, բայց ես միշտ խափուօրէի եմ համարել այն ճանապարհները, որոնք չեն տանում գէպի բաղդաւորութիւն: Մարդս ձգտում է գւարճութեան և ուզում է յուսալ. ուստի այն բոլորը, ինչ որ չէ տանում գէպի բաղդաւորութիւն՝ ներկայանում է ունայնութիւն: Չէ որ նոյն իսկ ամենաբարձր կրօնները խօստանում են մարդուն յաւիտենական երջանիկ կեանք՝ ի վարձատրութիւն գոհերի և կատարելութեան ձգտելուն: Բարոյական օրէնքը և հասարակաց կարծիքը բաղդի ամենաբարձր տեսակն են համարում բարոյական կատարելութիւնն ու վառքը և կատարեալ են ճանաչում նորան, ով փորձում է իւր վրայ բաղդը, ուրիշներին բաղդաւորացնելով...

Բայց դառնանք մեր գրին:

Թւելով բժշկական աշխարհագրութիւնից իւր բոլոր տեղեկութիւնները, նա շարունակեց:

«Այսպէս ուրեմն, անսնում էք, աիրուհիս, թէ որքան քիչ լաւ բան կարելի է սպասել կլիմայի ազդեցութիւնից: Այստեղ աւելի շուտ ճաշակի հարց կայ, քան թէ գիտութեան: Ե-

թէ սիրում էք ձմեռ — ուղևորւեցէք Իսլանդիա կամ Հեբրիտեան կղզիները. եթէ սիրում էք տաքը — ուղևորւեցէք Մադեյրա. գերագասում էք լեռները — գնացէք Պէրուի բարձրաւանդակը. եթէ սիրում էք ծովերը — գնացէք Քսերէս: Իսկ եթէ կամենում էք մնալ Լոնդոնում, այն ժամանակ ես հաճութեամբ յանձն կառնեմ բժշկել ձեզ և ամենայն ջանք կգործադրեմ դորա վրայ: Դուք, ի հարկէ, զիտէք այն առաժը, որ ասում է՝ «Աստծու պահած դառը գալլը չի ուտի»: Հիւանդին բժիշկ է հարկաւոր և եթէ դուք ինձ կրնորէք բժիշկ, ես կարող եմ, առանց աւելորդ խօստումների, ասել, որ միւս բժիշկներից ոչ լաւ եմ ոչ վատ: Ես պահանջ եմ գգում միշտ ճշմարիտ խօսել և ոչ ոքի չխտրել: Ասում են, որ ես սկեպտիկ եմ: Դուցէ դորա մէջ մի հանելուկ կայ ծածկած, որ ինձ զիմում են արդէն միւս բոլոր բժիշկներից լետոյ, որպէսզի ես հաստատեմ նոցա վճիռը, կամ ցոյց տամ վերջին զթուլութիւն... Այդ ինձ համար միևնոյնն է: Իւրաքանչիւր ոք հասարակութեան մէջ ունի իւր առաքելութիւնը և եթէ իմը հէնց այդպիսին է, ես ոչինչ չեմ կարող փոփոխել դորա մէջ»:

Ես իմացալ տուաւել, քան Հարկաւոր էր...
 Շնորհակալութիւն յայտնելով բժշկին և վճարե-
 լով նորան, ես շտապեցի տուն և չնայած իմ
 յոգնածութեանս, Համոզւած էի, որ իմ գէպի
 գողգոթալ տանող ճանապարհի երրորդ մասը
 չի կարող սորանից վատ լինել:

Էմման Վիլհամին.

Լոնդոն, յուլիսի 8-ին 18...թ.

Իմ բարի Վիլհամ, դ-ր Տ-ին այցելելը խիստ
 տանջեց ինձ. ես ստիպւած էի երկու օր շա-
 րունակ Հանգստանալ, նախ քան վերջին ճա-
 նապարհորդութեան սկսելս բժշկական աշխար-
 հում: Այդ երկու յոգնեցնող օրերի ընթացքում
 ես ցտակելով մտածում էի այն արւեստի վրայ,
 որը ալգպէս հպարտ կերպով կոչւում է բժշկա-
 կանութեան արւեստ և սեպհականեցնում է
 իրան գիտութիւն ահուճը: Ողորմած Աստուած,
 որքան ինքնագոգովութիւն այդ խօսքերի մէջ:
 Բժշկականութիւնը քնչ իրաւունք ունի գի-
 տութիւն մեծ անունը կրելու, երբ նորա
 քրմերը հակասում են միմեանց, երբ մենք

ակամայ ստիպւած ենք մեզ համար բժիշկ
 ընտրել մեր զգայմունքի և մեր սրտի համակը-
 րանքի խորհրդով: Սա Խնչ չնչին գիտութիւն
 է, որ անգոր է պակասեցնել մահացութիւնը
 գոնէ մի տոկոսով. մէկը բժշկում է միւսին
 հիւանդութիւնը թէ ցուրտ թէ տաք ջրով,
 արաղով և կաթով, միւսը անտարբեր կերպով,
 իբրև բժշկելու միջոց, առաջարկում է մեզ
 գնալ կամ Մադերա կամ Իսլանդիա:

Ինչքան էլ աշխատեցի մեղմացնել իմ գա-
 տալձիւր և խեղդել իմ, գէպի այդ երկու բը-
 ժիշկներն ունեցած, դժգոհութիւնը, որոնք ար-
 դէն արտայայտել էին իրենց կարծիքը իմ հի-
 ւանդութեան մոտին, այնուամենայնիւ ես չգը-
 տալ ոչ մի կէտ, որով արդարանային այդ Էս-
 կուլապները*) և նոցա գիտութիւնները: Շնոր-
 հիւ իմ այս այցելութիւնների, ես յակամայից
 ծանոթացալ բժշկականութեան արւեստի եր-
 կու ծայրալեզութիւնների ներկայացուցիչների
 հետ, գուցէ երկու՝ կրօնականքի և ֆանատի-

*) Բժշկականութեան աստուծները Հին յու-
 նաց մէջ:

Ճան. Թարգ.

կոսութեան չափազանց որոշ կարեկատուութեան-
րի հետ: Չձմարիտ է, թէեւ ես տեսել եմ մի-
այն երկու բժիշկ և դատում եմ բոլորի մա-
սին, բայց չէ որ մնացածները բոլորն էլ այդ
մի ծալրայեղութիւնից միւսը տանող աստիճան-
ներն են ներկայացնում, աստիճաններ՝ կոյր
հաւատից գէպի սառն սկեպտիկականութիւնը:
Շարունակ այդ միւսնայն խնդրով զբաղւելով,
իմ լարւած մտածողութիւնը խանգարեց ջղերու:
Մի կողմից ինձ թւում էր թէ տեսնում եմ
մի գոթիք իւր ահռելի հրաշունչ լեռներով,
որոնց վրայ բնակւում են սարսափեցնող ու
գիներ, գահիճներ ու սատանաներ և, որոնք
պատրաստում են տանջանքների ամեն տեսակ
գործիքներ. իսկ միւս կողմից—տեսնում եմ
մի ահագին գերեզմանատուն մի խումբ մռայլ
խաչերով, որոնք ցցւած են ձիւնի ընդարձակ
ծովի մէջ. գերեզմանատուն մէջ թաղաւորում
էին մառախուղն ու լուսթիւնը, որը խանգար-
ւում էր միայն մարդկանց մի ահագին խմբով,
որոնք հագած էին սև, երկար հագուստներ,
սիւստակ փողպատով և կրում էին մեծ կեղ-
ծամբ: Եւ այդ մարդիկը արձակում էին փոյ-
րենի աղաղակներ, սարսափելի կրճատացնում էին

առամները և կատաղութեամբ չորս դին նա-
լելով հրում էին իրար. բայց ինչպէս և իւրա-
դանչիւր ամբոխ, որ անընդատ շարժողութեան
մէջ է գտնւում և յատկապէս իւր տեղը չէ փո-
խում, այնպէս էլ սոքա անփոփոխ տատանում
էին երկու հակադիր բեւեռների—կրակի և
սառցի—մէջ:

Մոգութեան պատմութիւնն արդէն վերջա-
ցած է և նա ինքը, ընդհանուրի կարծիքով,
լաւիտեանս լաւիտեանց ոչնչացել է միջին դա-
րերի աւերակների տակ. բայց ես կարծում եմ,
որ նորա վերջին երեսը գեռ ևս մաքուր է
և, որ նա թողւած է բժշկականութեան հա-
մար: Այս ձանձրալի օրերում բժշկականութիւ-
նը ինձ ներկայանում էր ինչպէս մի հին կա-
խարդութիւն, ծածկւած միայն ժամանակակից
մետաքսեայ նորաձև հագուստով: Լատինական
դեղատոմսը՝ իօրօգլիֆի նման թւանշաններով,
բազկերակ շփելը, լեզուն դիտելը, բժիշկներին
և նախագուշակութիւններին հաւատալը, ո-
րոնք հեղինակաբար արտասանւում են, բայց
երբէք չեն ճշտւում.— միթէ այդ բոլորը չեն
կազմում կախարդութեան յատկանիշները: Իսկ
լատինական և յունական անուններով այդ բո-

լոր դեղօրայքը, որոնք սապոնի ալպշականների ծխածանադոյն ծածկոցի նման ծածկում են գիտութեան դատարկութիւնը, միթէ դոքա վկաներ չեն ներկայ կախարդութեան:

Միթէ բնական կապ չկայ նախագուշակութիւնների, խաբեբայութեան և կախարդութեան մէջ, Սիբիլեան գրքերի, գնչուհու և Գոֆօպոսի*) մէջ, Դելֆեան պատգամախօսի, ԽիրօՏանախոյի**) և բժշկականութեան մէջ:

Մահւան երկիւղը ծնեցրել է շատ ենթատրուրութիւններ. և միթէ նա չէր բժշկականութեան օգալին տաճարի գոյութեան պատճառը: Լամարտինը, 'ի հարկէ, չափազանց մեղմ է խօսել նորա մասին ասելով. «նա միայն մի գեղեցիկ ձգտումն է բժշկելու»: Կարծես թէ դ-ր Բ-ն, որը կամենում էր սպանել ինձ, միայն թէ ցոյց տալ իւր հաստատակամութիւնը և համոզմունքը, և դ-ր Տ-ն, որը կամենում էր

*) Այնպէս մեջոյններով բժշկութիւն անող, որոնք առողջ մարդու մէջ էլ նոյնպիսի հիւանդութիւններ կյառաջացնեն.

Ծան. Բարգ.

**) Ձեռքերի գծերով գուշակութիւններ անել:

Ծան. Բարգ.

ոչնչացնել ինձ իւր դատարկ գիտութեան ծանրութեամբը, մի փոքրիկ տեղ անգամ չթողեցին իսկական, ուրախութիւն պարգևող, ոչ-մոլեռանդ և ոչ — ինքն իրան բացասող բժշկականութեան համար:

Սիրելի Վիլեամ, ես սխալեցի. կրակի և լաւօրեանական սառույցի բեռների մէջ տարածում է դեռ իրական բժշկականութեան մի ընդարձակ արտ: Կան բժիշկներ, որոնք բժշկում են հիւանդներին և, որոնք նման չեն ոչ դ-ր Տ-ին և ոչ դ-ր Բ-ին...

Այդ հաճելի գիւտը ես արեցի բժշկականութեան լուսատուներից երրորդին օլցելելու ժամանակ, այսինքն՝ երբ գնացի դօկտոր Գաուզի մօտ:

Նրա մօտից ես տուն դարձալ առողջ և ուրախ, կարծես թէ զբօսնել էի արօտներում և հաւաքել էի ծաղիկների ու խոտերի մի մեծ փունջ. Օ, ինչ սիրելի մարդ է և հիւանդների իսկական բարեկամ այդ դ-ր Գաուզը:

Հազիւ ներս էի մտել նորա առանձնատեղեակի, որ արգէն դէպի նա համակրութիւն զգացի: Սանդուղքներով բարձրանալիս և նախասենեակից ու միւս սենեակներից անցնելիս

ես հէնց առաջին հայեացքից նկատեցի, որ նա սիրում է գեղեցկութիւնը և լատկապէս բնութիւնը, որի շնորհիւ նորա բնակարանը բոլորովին այգի էր դարձել:

Սանդուղքի վրայ դրւած էին բարձր փշատերև ծառեր, որոնք տնկւած էին մեծ կաւեայ անոթների մէջ. տեսնողը կգարմանար, թէ ինչպէս կարող էին նրանք այդտեղ աճել: Ամանների միջի հողը ծածկւած էր մամուռով և ուրիշ խոտերով, ճիշտ այնպէս, ինչպէս Շոթլանդիայում. իւրաքանչիւր խոտ, միւսների հետ միասին, աճում էր մամուռեայ վառ կանաչ գորգի վերայ:

Նախասենեակում և դահլիճում, ամեն կողմ ծաղիկներ կային և լսւում էր թռչունների ճըլվըռոցը, որոնք չէին երևում: Ես ուշադրութիւն դարձրի արձանների վրայ. դռքա ընդօրինակութիւններ էին Յունաստանի և Ժամանակակից Իտալիայի ամենալաւ արտադրութիւններից, դռքա ներկայացնում էին տղամարդի, կնոջ և երեխայի գեղեցկութիւնը. բացի մարմարեայ ալաբաստրեայ քանդակագործութիւններից, ամեն կողմից կախւած էին նկարներ: Նորա աշխատութեան սենեակի գրասեղանի

վրայ դրւած էր ալաբաստրէ Մեդիցիեան Վեներան՝ շրջապատւած դափնիի և մրգենոլ թփերով. բոլոր այդ գեղեցիկ առարկաները կորչում էին ամեն տեսակ մեծութեան և գոյնի գրքերի կոյտերի մէջ:

Որքան պօէզիայ կար այդ տասի մէջ: Մեդիցիեան Վեներա, երկու մշտադալար թփեր և մարդկային մտքի ստեղծագործութիւններ: Բնութիւնը, գեղարւեստը և գիտութիւնը այնպէս մօտ էին միմեանց և, կարծես աննկատելի կերպով, միանում էին իրար: Այդ բժիշկը, ի հարկէ, այստեղ աշխատելով բաւականութիւն պիտի զգար:

Ես ուշադրութեամբ դիտեցի դափնիներն ու մրգենիները: Այս գեղեցիկ բոյսերը պատահամբ չէին ընկել այստեղ, նորա ընտրւած էին մեծ ճաշակով: Միթէ նոքա չեն ներկայացնում փառքի և սիրոյ նշանաբանը:

Հազիւ ես՝ քաղցր խորհրդածութիւնների մէջ խորասուզւած, մտածում էի դ-ր Գաուզի այս երկու գեղեցիկ գերիների մասին, որ լսեցի միջանցքով մօտեցող քայլերի ձայն: Լսեցի նաև երեխայի ձայն և մետաքսեայ հագուստի խրչխրչոց և մի քանի խօսքեր, որոնք ես որոշել

չկարողացալ, բայց դժբա՛հի հարկէ սիրոյ խօսքեր էին...

Ի՞նչ զօրեղ կերպով ես տրամագրւած էի դէպի այդ բժշկը, թէև դեռ չէի տեսել նորան:

Մի րոպէ՛ և ես արդէն նստած էի նորա առաջ ... նա չասաց ինձ ոչ մի խօսք, միայն գլուխ տւեց, ժպտաց և էլի ժպտաց...

Ժպիտը չէր հեռանում նրանից, բայց իւրաքանչիւր րոպէ փոխւում էր և դառնում էր մերթ հարցական, մերթ քաջալերող և մերթ յոյս տուող: Դ-ր Գառլզը ինձ արդէն շատ բան ասաց, թէև դեռ մի խօսք էլ չէր թռցրել բերանից:

Ես հէնց իսկոյն զգացի դէպի նա մեծ հաւատարմութիւն. բայց խօսում էի քիչ, որովհետև նա ամեն բան մի անգամից էր հասկանում: Նորանից չհեռացող ժպիտը քաջալերում և թև էր տալիս ինձ: Ես կրճատեցի իմ խոստովանութիւնը և թողեցի բոլոր աւելորդն ու անախորժը: Երբ ես նորան պատմեցի ինձ ձանձրացնող հիւանդութեանս պատմութիւնը, զգացւած էի այդ մարդուց. նորա բարութիւնն ու ուշադրութիւնը այնպէս ներգործեցին վրաս, որ ես ոչ ցաւ ոչ էլ դայրոյթ էի զգում:

Ես քեզ մի բան էլ ասեմ դ-ր Գառլզի մասին... Երբ ես խօսակցում էի նորա հետ, նա երիտասարդ էր թւում ինձ, չսփազանց երիտասարդ մի անուն հանած բժշկի կոչման համար և այդ անախորժ գիւտը մի անգամից ստիպեց ինձ վերջացնել իմ պատմութիւնը և ես սովորաբար իմ առաջին լափշտակութեան ազդեցութեան տակ հարցրեցի.

«Ներեցէք, դուք իսկապէս դ-ր Գառլզն էք»:

— «Ձեր ծառան, տիրուհի, պատասխանեց նա և յետոյ ցած ծիծաղելով՝ հարցրեց ինձ, — Իսկ ինչո՞ւ դուք կասկածում էք:

«Ներեցէք, բայց դուք իմ աչքին յանկարծ այնպէս ջահիլ երևացիք, որ ես կասկածեցի թէ չլինի՞ դուք դ-ր Գառլզի օգնականն էք:

Նա ծիծաղեց, երևի շողորթորթւած իմ խօսքերով. յետոյ պոկելով մի մրդենու թերթիկ, շփեց մատների մէջ և սկսեց հոտոտել բաւականութեամբ: Այդ մարդը անշուշտ անգլոսաքսոն և բրիտանացի չէ. նա ռօմանական ծագումից է և պատահմամբ ընկել է մառախլապատ Անգլիա: Նրա մազերը խիտ և սև էին, ճակատը բարձր, արծաթեթև և մորթը թուխ. դէմքը

սլարապմունքներից խոնջացած և խիստ կենդանի էր, որ երբեմն ցնցուռ էր թեթև գոլով: Յետոյ նա բոլորովին ուշադրութեամբ կարգաց այն *«Լուսին»**, որ իմ նախկին բժիշկներն էին կազմել, մի քանի հարցեր տուց ինձ շտապով — ոչ թէ նրա համար որ ոչ մի բույս ինձ երկիւղի մէջ չթողնի — նախ քան ես կարողացայ նստել և նա հարթեց իւր մազերը, որոնք խառնուել էին կրծքիս ականջ գնելու ժամանակ:

— «Օ՛, ոչինչ ծանր բան չկայ, նոյն իսկ ամենափոքր ծանր բան չկայ, դուք կառողջանաք անկասկած, բոլորովին կառողջանաք:

Յետոյ, կարծես թէ իւր պարտականութեան ամենածանր և ամենանշանաւոր մասը կատարած լինելով, նա հանգիստ նստեց իւր աթոռի վրայ, պոկեց գափնի մի թերթիկ և, ինչպէս առաջ, տրորեց մատների մէջ:

— « Այո՛, ողորմած տիրուհի, դուք կառողջանաք և շատ շուտ: Դա ամենաէականն է, որ

*) Диагноз — հիւանդութիւնները ճանաչելը իւրեանց նշաններով:

որ ես պէտք է ասեմ ձեզ: Հաստատ համոզւած եղէք, որ դուք կառողջանաք, ուրեմն հանգիստ և ուրախ սպասեցէք մինչև հասնէք նորան: Ինձ թւում է, թէ դուք ունիք կամքի մեծ ոյժ, հարուստ օժտւած էք այն բարոյական յատկութիւններով, որոնք դրամով չեն գնուում և չեն քաղուում գրքերից, բայց ոչոնց շնորհիւ թեթևանում են, ինչպէս անձնական, նոյնպէս և ուրիշի տանջանքները: Սկսեցէք ձեր գործը այսպէս, ամենից առաջ հեռացրէք ձեր հիւանդութիւնից այն չարիքը, որ ծագում է ապագայի երկիւղից. յետոյ... յետոյ գնացէք Մադերա և միայն Մադերա: Առաւօտեան ես նամակ տաացայ իմ մէկ հիւանդից, որը ահա արդէն հինգ ամիս է, որ տալու է Փուլգալօյում. այդ նամակը ինձ շատ ուրախացրեց: Նա ամեն օր արիւն էր թքում, իւրաքանչիւր երեկոյ տաքացնում էր և, նկատելի կերպով, նիհարանում էր. իսկ այժմ նա ալ ևս ջերմ չունի, արիւն չի թքում և, գրում է ինձ, որ սկսել է լցւել: Նա երջանիկ և գոհ է, որ գնացել է Մադերա:

Ես գիտեմ շատ գէպքեր, երբ հիւանդութիւնը ձերինից աւելի ծանր կերպարանք է ըստացել և սակայն հիւանդները առողջանում հիւանդ սէր:

էին հէնց միայն շատ կամ քիչ ժամանակ մնալով Մադերալում, ծաղիկների այդ դրախտում: Եթէ դուք կվճռէք ուղևորուել այնտեղ, ևս կրտամ ձեզ իմ խորհուրդներս գրաւոր կերպով, քանի որ Ֆունգալօյում դ՞ուք ձեզ պէտք է բըժըշկէք... Կտամ ձեզ նաև լանձնարարական նամակ մի անգլիացի լաւ բժշկի վրայ, որ իմ բարեկամն է. բայց ձեզ պարզ կասեմ. դուք մենակ չպիտի գնաք Մադերա, այլապէս դուք չէք կարող այնտեղ առողջանալ... Մենք, տղամարդիկս, բաւական եսասէր ենք. մենք կարող ենք մենակ ապրել. սէրը դէպի կեանքը կարող է լինիլ բաւականացուցիչ կերպով փոխարինել մեզ համար ամեն տեսակ հասարակութիւն և լեցնել մեր կեանքը. բայց դուք, Եւայի աղջկերքդ, չէք կարող տանել միայնութիւնը. դուք կմեռնէք ձանձրութից նոյն իսկ Ֆունգալօյի գեղեցիկ երկնքի տակ... Աստուած ձեզ ստեղծել է, որպէսզի դուք կազմէք ընկերութիւն մարդու հետ. եթէ դուք ընկեր չունիք, չէք կարող կատարելապէս բաւականութիւն ստանալ երջանկութիւնից...»

Դ-ր Գառլը ինձ աւելի շատ բան էր ասում ժպիտով և ձևերով, քան թէ խօսքերով և,

երբ մենք նորից կհանդիպենք ես կպատմեմ քեզ բառ առ բառ մեր բոլոր խօսակցութիւնը: Նա իւր վարւողութեամբ ներշնչեց իմ մէջ այնպիսի հաւատարմութիւն, որ ես վճռեցի անմիջապէս մօտենալ խնդրի ամենափափուկ մասին...

Ես, բոլորովին կարմրելով, հարցրի նորան. «Կարո՞ղ եմ ես արդեօք, առողջանալուց յետոյ, առանց կասկածելու ապագայի համար և աներկիւղ, ամուսին և մայր դառնալ, չլանդըդնելով ստանալ թոքախտոտ սերունդ»:

Յանկարծ ժպիտը կորաւ բժշկի երեսից, սակայն մի րոպէ միայն... Յետոյ նա նորից երեւաց նորա շրթունքների վերայ, և այս անգամ արդէն աւելի լուրջ. նրա մէջ այլ ևս նկատելի չէին հոգեկան պարզութեան այն հետքերը, որոնք մինչև այդ ժամանակ ինձ այնպէս քաջալերում էին:

Ամենամեծ ուշադրութեամբ և խորը համակրանքով հետեւելով այդ մարդու իւրաքանչիւր շարժումներին, ես նկատեցի մի ամպ, որ մի րոպէ պատեց նրա ուրախութեան արեգակը և իսկոյն հասկացայ, որ իմ հարցը նրա մէջ ծանր լիշողութիւններ դարձեցրեց:

Նա թեթեւ կերպով հառաչեց և ասաց վրդով-
լած ձայնով:

— «Օ ինչո՞ւ չէ: Երբ ձեր առողջանալը բու-
լորովին հաստատ կլինի, երբ դուք կատարելա-
պէս կառողջանաք, դուք, 'ի հարկէ, կարող
էք և մայր լինել. դուք ազնիւ և անկեղծ սիրտ
ունիք, որ դիմում էք ինձ այգալիսի հար-
ցով... Զեր հիւանդութեամբ բոլոր տաջադ-
ները, որոնք դեռ ևս երիտասարդ ու անպսակ
են, պէտք է դիմեն իւրեանց բժիշկներին խոր-
հուրդ հարցնելու, բայց նոքա այդ միշտ մո-
ռանում են...»

Յետոյ նա նորից աւելի խորը հառաչեց և
ծածկեց ձեռքով իւր ազնիւ դէմքը...

— «Մարդս շատ եսասէր է: Նա չի մտածում
այն կեանքի մասին, որ տալիս է իւր սերնդին:
Ես ճանաչում եմ շատերին, որոնք մի ինչ որ թե-
րամիտ ունայնութեամբ կամենում են ողջ աշ-
խարհին ցոյց տալ, թէ իրենք կարող են հայրեր
և մայրեր լինել. նոքա մօտեցնում են ընտա-
նիքները զերեզմանին և ոչնչացնում են նոցա
զոհակերպ իւրեանց խելացնոր մեքենայութիւն-
ներին. իսկ իւրեանց որդոց ժառնգութիւն են
թողնում հիւանդութիւններ և տառապանք»:

Դ-ր Գառլը կարծես այժմ աւելի ինքն իւր
հետ էր խօսում. բայց ինձ նայելով՝ նա խկոյն
նկատեց, որ իւր վերջին խօսքերը ինձ համար
դանակի հարածներ էին. նա զղջաց և յան-
կարճ, ընդհատելով զրոյցը, շարունակեց արդէն
բոլորովին ուրիշ ձայնով:

— «Յամենայն դէպս, այժմ այդ մասին խօ-
սելն աւելորդ է: Դուք, 'ի հարկէ, դիտաւո-
րութիւն չունիք այսօր կամ վաղն ամուսնա-
նալ՝ դա մեծ անգգուշութիւն կլինէր... Զա-
նացէք առողջանալ, հաստատ վճռեցէք այդ
և դուք առողջ կլինիք»:

Խորը վրդոված ես վեր կացալ, արդէն վրճ-
ռած լինելով Մադերա գնալ:

Ես այլ ևս ոչ մի խօսք չեմ գրի քեզ: Մենք
պայմանաւորուել էինք ութ օր չտեսնել և ժա-
մանակամիջոցը լրանում է: Շուտով ես կհանդի-
պեմ քեզ այն բերկրալի զգացմունքով, որ, գէպի-
քեզ ունեցած սիրոյս համար, ես մի զոհ բերի
և ուրախութեամբ կստեմ. «Քո Էմման վճռեց
Մադերա ուղևորուել, քո Էմման հնազանդեց
ամբողջ ամիսներ և տարիներ քեզ չտեսնելու
անհրաժեշտութեանը, քո Էմման ուզում է ա-
մեն բանում և միշտ քեզ հնազանդել, քանի

որ նա ապրում է քեզ համար և առանց քո սիրոյ նորա համար գոյութիւն ունին միայն յուսահատութիւն և մահ։

Մնաս բարեաւ, Վիլեամս։ Քո ցանկութիւնը կտարւած է. բրիտանական գիտութեան երեք լուսատուների հետ ես խորհրդակցեցի։

Էմման Վիլեամին.

Լոնդոն, չորեքշաբթի առ. Ժ. 11.

Առաւօտեան ես մէկ գիւտ արեցի, որի մասին անյապաղ պէտք է յայտնեմ քեզ, որովհետեւ չեմ կարող սպասել մինչև վաղը, քո գալուն։

Առաջ ես տրտադրեցի իմ նամակը, որ երեկոյեան գրել էի քեզ և գրեցի քո նամակների մէջ, ինչպէս որ այժմ միշտ անում եմ՝ իմանալով, որ դու ևս այդպէս ես անում։ Յետոյ, բազմոցի վրա պառկած, ես թերթում էի այդ թղթերը, որոնք ինձ համար ամենից թանկագինն են աշխարհիս վերայ և բաւականութիւն

էի զգում համոզելով, որ իմ մտքերս սերտ կերպով հիւսւում են քոնի հետ։ Նամակներից մանուշակի հոտ էր բուրում, որ դու սիրում ես։

Այժմ երեւակալիր, սիրելի Վիլեամ, քո և իմ նամակներից մի քանի երես կարդալով, ես գրտայ, որ երկուսս էլ միատեսակ ուճ ունինք և, մինչև անգամ, շատ դժբեք ենք ածում միևնորս դարձածները, նման առարկաները հասկացնելու համար. այնպէս որ մեր գաղտնիքների անծանօթ մէկը, եթէ կապած օչքերով մերթ մէկ, մերթ միւս նամակի ընթերցումը լսի, չի կարող գուշակել թէ երկուսիցս ո՞րը ո՞ր նամակն է գրել։

Ես իսկոյն կամեցայ հաստատել իմ գիւտի ճիշտ լինելը և խելագարի նման թռալ այն սենեակը, ուր մօրաքոյր Աննան նստած էր և գրազ եկայ, որ նա չի կարող գուշակել թէ մեզանից ո՞վ է գրել այն տողերը, որ ես նորան կկարդամ, մինչև որ նա չնայի նամակներին։ Բարի մօրաքոյրս ծիծաղեց և ուրախութեամբ համաձայնեց այդպիսի փորձին։

«Ես կկարդամ մի որ և է բան Վիլեամի և իմ նամակներից, իսկ դու գուշակիր թէ մեզնից

ո՞վ է գրել»:

— Լաւ, սկսիր:

Ես կարգացի կէս երես:

«Այս ո՞վ է գրել, մօրաքոյր»:

— Էմման:

Ես սկսեցի ծիծաղել խելագարի նման:

«Ոչ, այս Վիլեամն է գրել: Իսկ ո՞վ է գրել այս նախադասութիւնը»:

— Գէ, ի հարկէ Վիլեամը, այդ տեղ կասկած չկայ:

«Ոչ, մօրաքոյր Աննա, այդ նախադասութիւնը իմն է»:

Չորս անգամ ես կրկնեցի այս փորձը՝ խորամանկութեամբ ընտրելով այնպիսի մտքեր, որ երկուսին համար ընդհանուր են և մօրաքոյր Աննան միշտ շփոթուում էր իւր գուշակութիւնների մէջ:

Այսպէս ուրեմն, սիրելի Վիլեամ, գիւտը ոչ միայն արւած է, այլ և, ինչպէս սովորաբար դու ես ասում, հաստատուած է փորձով: Բայց մեր երկուսից գոյրը ո՞վ է: Ո՞րն է մեզանից ստեղծողը և ո՞վ համեստ հետևողը:

Եւտոով պատասխանիր իմ հարցին: Դու գիտես, որ մենք պայմանաւորուել ենք չտեսնել

մինչև վաղը, ուստի ուղարկում եմ քեզ մօտ Ջօնին. նա կսպասէ նախասենեակում մինչև դու կասս նորան այս հանելուկի վճիռը:

Ողջ լէր, Վիլեամ: Մեզնից մէկը գոյ է, աշխատիր գտնել նրան:

Մնաս բարեաւ. անյապաղ պատասխանիր:

Վիլեամը Էմմային.

Լոնդոն. չորեքշաբթի, 1 ժամ կէսօրէայ:

Գողութիւնը ակներև է, թանկագին Էմմա, բայց գոյր գտնել անկարելի է: Ես ու դու իրարից գողանում ենք մտքեր, զգայմունքներ և խօսքեր, բայց գոյր չկայ. մենք վերցնում ենք այն, ինչ որ վաղուց արդէն մեզ էր պատկանում: Ես ամիսոսում եմ, որ այդ գիւտի որոտթութիւնը խլում եմ քեզանից, սակայն նա իմն է, ըստ օրինի առաջնութեան: Դեռ սրանից մի քանի ամիս առաջ, երբ մենք սկսեցինք թղթակցել, էս նկատեցի, որ մեր ոճը միասնասակ է և, որ մէկ ձեռքերը իրար են հանդիպում մինչև անգամ այն ժամանակ, երբ մենք

թերթում ենք բառարանը:

Բայց առա ինձ, սիրելիս, երբ ես սեղմում եմ քո ձեռքը և քո աչերի խորն եմ թափանցում, մեզանից ո՞րն է գողանում միևսի հոգին. ես իմ հոգին չեմ կարող գտնել և կրճքիս մէջ զգում եմ քո սրտի բաբախումը:

Երբ մենք երկար խօսակցում ենք, մեր երկուսից ո՞վ է հարցնում և ո՞վ է պատասխանում:

Եւ երբ մենք միասին նայում ենք աստղերին և մտքով մոլորում ենք երկնական մասնաշաղկապներին մէջ, մեզանից ո՞րն է առաջարկում միևսին ձեռքը և օգնում նորան իջնել երկիրը, ո՞վ է առաջարկում և ո՞վ է ընդունում անբացատրելի հրճւանքով:

Եւ երբ մենք տեսակցելիս, լիացած սիրով և ուրախութեամբ, զգում ենք մեզ մի բարձր մթնոլորտում, մեզանից ո՞րն է տալիս այդ ոչ երկրաչին երջանկութիւնը և ո՞վ ընդունում:

Փիղիօլոգները յաճախ դիտել են, որ սիրահար ամուսինները իրար հետ երկար տարիներ ապրելուց յետոյ իրար այնքան նման են լինում, որ նրանց աւելի շուտ եզրօր ու քրոջ տեղ են ընդունում, քան մարդ ու կնոջ: Միևնոյնը չպատահեց և մեզ:

Եւ այդ գողութիւնը երևում է բայց գողը գտնել անկարելի է:

Էմման չուսի իր սեպհական մտքերը, որովհետեւ Վիլեամը մտածում է այն, ինչ որ Էմման, որովհետեւ մենք երկուսս էլ ունինք միևնոյն ուրախութիւնը, միևնոյն վիշտը, միևնոյն միտքը, մի հոգի...

Ահա քո հանելուկի լուծումը:

Ուրեմն ցտեսութիւն:

Վիլեամը Էմմային.

Լսեղոն, կեւակէ.

Պու յաճախ ասում էիր ինձ, իմ թանկագին Էմմա, որ մենք միշտ նոյնանման մտքեր ունինք և որ, եթէ ես բացատրում եմ քեզ իմ մտքերը, ապա ինչքան էլ նոքա նոր և անսպասելի լինին, դու անմիջապէս հասկանում ես այդ բոլորը և քեզ թւում է՝ թէ ինքդ էլ վաղուց այդպէս էիր մտածում: Եւ դու ո՞չ միայն հասկանում ես այդ բոլորը, այլ և միտքդ էս պահում: Եթէ այդ ճիշտ է, եթէ քո սրտի

երևակայութիւնը չի սաւառնում ուրեականներէ
րի աշխարհում, ապա զու պէտք է ինձ հետ
ման գաս կատարի ծովի վրայ, կռես սոսկալի
փոթորկի դէմ և անգոր, թէև զարթ, դառ-
նաս միութարութեան իջեանը:

Լսիր ինձ, թանկագին Էմմա, վերցրու քո
ցածրիկ կապուտ աթոռը, որի վրայ սովորաբար
նստում ես, երբ ես դիմացդ կանգնած նայում
եմ քեզ և կշտանում քո հայեացքի լուսով, դիր
ձեռքերդ այնպէս, որ մէկն իմանալ այն ինչ որ
միւսն է զգում և լսիր ինձ:

Երեկ առաւօտեան ես արթնացայ հոգու վատ
տրամադրութեամբ: Ինչո՞ւ, չգիտեմ: Որքան
մտքերս լարեցի, որքան մտածեցի, չկարողա-
ցայ բացատրել ինչո՞ւ ամեն բան ինձ թւում
է սաւառնով ծածկւած: Սիրտս կամենում էր
ինձ խափել և հաւատացնել, որ իբր թէ ես
տխուր եմ նորա համար, որ երեք օրից ի վեր
քեզ չեմ տեսել. բայց իմ ճշմարտասիրութիւնը
ասում էր, որ այդ չէ իմ ձանձրոյթի բուն
պատճառը: Երբեմն պատահում էր, որ ես քեզ
չէի տեսնում ամբողջ շաբաթներով, բայց և
այնպէս չէի զգում այսպիսի սարսափելի հոգե-
կան տանջանք. սա ինձ հետեւում էր ամեն

տեղ, ուր որ ես գնում էի և ինչ բանի որ
նայում էի, պատկերանում էր առաջիս վատ և
անախորժ գոյներով:

Վերջապէս գնացի այն սենեակը, որտեղ սո-
վորաբար պարապում եմ և ինքս ինձ ասացի.
«Այդ ձանձրոյթը մի պարտք է, որը մարդս
պէտք է կրէ այս աշխարհում: Ինչպէս որ մաք-
սատանը կնքում են սնտուկները և տալրակ-
ները, այնպէս էլ ծնւելիս մեզանից իւրաքան-
չիւրի վերայ դրւում է մի գրոշմ, որը ներկա-
յացնում է տանջանքների մի շարք և այդ
մենք պէտք է ցմահ կրենք. լինի դա սովա-
ծութիւն կամ արհամարհանք, առամնացաւ
կամ սիրոյ տանջանք, բնութեան համար այդ
միւսնոյն է, միայն թէ իւրաքանչիւր մարդ հա-
տուցանէր իւր մաքսը սառն արցունքներով, ջը-
ղաձգութեամբ, (КОМБУЛЬСІЯ) լուռ ձանձրոյթով
կամ անմիտ լուսահատութեամբ: Լաւ, ասացի
ինքս ինձ, այժմ ինձ մօտ է եկել մաքսատան
աստիճանաւորը և պահանջում է հատուցանել
պարտքս և ես կհատուցանեմ անպատճառ:
Ո՛չ երկնքի ժպիտը, ո՛չ հանճարի շանթը, ո՛չ
կամքի երկաթէ ոյժը չեն կարող հեռացնել մե-
զանից հոգու այդ վատ տրամադրութիւնը, ո-

րը առանց գրգռելու հոսում է հէնց մեր հոգու խորքից:

Ես մօտեցայ վառարանին. նա մխում էր: Բարկացած չետ դարձայ և սկսեցի ման գալ անկիւնից անկիւն. ապա մեքենաբար կանգնեցի գրքերի դարակներից մէկի առաջ. իմ աչքին ընկան Իւլինայը և Մարցեալը և ես զգացի՝ կարծես թէ կամենալով մանուշակ քաղել ձեռքս դարձ ընկաւ: Արագութեամբ հեռանալով այդ տեղից ես կանգնեցի հակառակ կողմի դարակի մօտ, ուր աչքիս ընկաւ Հովարտի գրեածքը լանդերի մօտին: Ես աչքս փակեցի, աւելի լաւ համարելով այլ ևս ոչ մի գիրք չտեսնել և շտապեցի դէպի լուսամուտը: Երկինքը չէր երեւում, թանձր մառախուղը ծածկել էր ամեն ինչ, այնպէս որ հազիւ էի կարողանում մօտակայ պատը որոշել: Այդ մառախուղի միջից հասնում էին ինձ մի տեսակ ականջ խլացնող ձայներ, մանաւանդ պարզ լսւում էր մանկան ձայնը, որը գուցէ սոված է, կամ մրսել է...

Բայց չնայելով այդ բոլորին, ես էլի չյուսահատուեցի: Դու գիտես, թանկագին Էմմա, որ ինձ միշտ դուր է եկել տանջանքը և ծանրութիւնը. ես կամեցայ փշրել այն շղթաները, ո-

րոնցով կաշկանդել էր ինձ հոգուս վատ տրամադրութիւնը. ես կամեցայ, եթէ արևելեան պատկերաւոր ոճով խօսեմ, պղտորել ծովի ջուրը գալլի կաթով, որպէսզի ծովի յատակում գտնեմ ուրախութիւն...

Եթէ կամենում ես, ինձ յիմար անւանիր, բայց մի քառորդ ժամում ես կատարեցի հետեւեալ երեք գործերը: Կարգացի քո ամենապարզ և ամենաուրախ նամակներից տասը հատ, նւագեցի Փօրտէպիանօյի վրայ Շտրաուսից չորս վալլս և աչքի անցրի Կամի կարեկատուրաները, ապա նստեցի գրասեղանի առաջ, ձեռքս առայ գրիչը, ինչպէս յաղթական սուր և սկսեցի ուրախ բաներ գրել, կամենալով հաւատացնել ինձ, որ ես արդէն յաղթել եմ: Ահա ուղարկում եմ քեզ այն, ինչ որ այդ ժամանակ գրեցի:—

Ո՛րքան զւարթ է երկինքը, որքան ուրախ է երկիրը: Իմ շուրջն ամենայն ինչ ժպտում է և ուրախութեամբ ինձ ձեռք է մեկնում: Բոլոր մարդիկ իմ եղբայրներս են և սիրում են ինձ, ես էլ սիրում եմ նրանց: Որքան հիանալի է կեանքը, որքան գեղեցիկ է մարդը:

Այո՛, մարդս—կատարելութիւն է և երջան-

կուլթիւն մինչև անգամ այնպիսի հազաւագիւտ
րօպէներին, երբ նորա երեսը ողողում են դառն
արցունքները: Արցունքներ-միայն ժամանակա-
ւոր փոթորիկ, արից յետոյ երկինքը աւելի ևս
սրարգւում է, աւելի ևս մաքրւում:

Խեղդած ուրախութիւնը նորից դուրս է
գալիս, լացը կտրւում է, բայց դառն արցունք-
ները խորին հեաքեր են թողնում լացակումած
գէմքի վերայ, հեաքեր, որոնք երբէք չեն ան-
հետանում: Այն արցունքը, որ չի չորանում
ընկերոջ ձեռքով կամ շրթունքներով, խորը
թափանցում է հէնց սրտի մէջ և այնտեղ թող-
նում է հեաք, ինչպէս գալար ծառի վրայ ըն-
կած հալած կապարի կաթիլը:

Բայց ինչո՞ւ խօսենք արցունքների մասին,
քանի որ մարդս ստեղծւած է ծիծաղելու հա-
մար և քանի որ երբեմնական արցունքները
կորչում են կեանքի անվերջ վայելքների մէջ,
ինչպէս ուրախութեան ծովի մէջ: Ի՞նչ նշա-
նակութիւն ունի մազձի մի կաթիլը հրճանք-
ները ամբողջ ովկիանոսի մէջ:

Այո, բայց մազձի մի կաթիլին շուտով հետե-
ւում է միւսը, ապա մի ուրիշը և հետզհետէ
աւելի ու աւելի դառն. և մարդս զգում է

բաժակի տակ պահած այդ բոլոր դառնու-
թիւնը:

Ահա, հէնց այդ դառնութիւնը ընկնում է
սրտի վրայ, ուր թողնում է իւր հեաքը. նա ար-
եան հետ մտնում է մարդուս օրգանիզմի իւ-
րաքանչիւր մասի մէջ և թունաւորում է մար-
դուն, որը չի կարող իրեն բաղդաւոր համարել:

Այո, մարդս բոլորովին անբաղդ է... Անվերջ
հետեւող սերունդների գանգատները, անողորմ
բաղդից խորտակւած ամենաջերմ և սուրբ ցան-
կութիւնները, վաղաժամ հանգած երիտասարդ
կեանքի ճնշւած բազմութիւնը, այդ բոլորը
բարձրաձայն ողբում են — մարդս անբաղդ է:

Այո, մարդս անբաղդ է: Վիշտն ու թախիժն
է նորա բաժինը: Նա օրհասական օրէնքով մի-
ացած է խղճալի կեանքի հետ, որը միաժամա-
նակ թէ ձգում և թէ վանում է նորան:

Նա անկարող է ազատւել չարչարանքներից,
նա չունի վճռողականութիւն մեռնելու, ո՛չ կամք
ապրելու համար. նա զգացմունք ունի նրա
համար, որ զօրացնի իւր վիշտը, նա խելք ու-
նի նրա համար միայն, որ լիովին հասկանայ
իւր բոլոր չարչարանքների անհունութիւնը:

Միաքը քաշում է նրան գէպի բարձր մըթ-
շիւանդ սէր.

նուրդը, սակայն ծանրաբեռնաժ մարմինը
թույլ չի տալիս նրան երկրից վերանալու. սիր-
տը ձգտում է գրկել անգրկելին, սակայն մի
ինչ որ երկաթեայ ձեռք սեղմում է նորան:

Մարդս ամենատանկատար, ցաւալի և չնչին
արարածն է ամբողջ տիեզերքում:

Այստեղ, թանկագին էմմա, գրիչն ընկաւ
ձեռքիցս: Մի քանի րոպէ առաջ ես վերցրի
նորան յաղթութեան կատարեալ լուսով, սակայն
այժմ խոստովանում եմ, որ յաղթւեցի:

Դա ծանր էր ինձ համար, բայց ես ցաւ չէի
զգում, որովհետեւ կռիւր բարձրացնում է մար-
դուն, եթէ մինչեւ անգամ յաղթութիւն էլ
չբերի: Նա է միայն արժանի արհամարհանքի,
ով որ դուրս չի գալիս կռւելու և առաջուց
խոստովանում է իւր պարտութիւնը:

Ես մտածում էի, որ մի օգտակար և լաւ
բան արի նրանով, որ իմ վիշաք ենթարկեցի
մտքիս և թղթի վերայ արտայայտեցի:

Գուցէ, ասացի ինքս ինձ, իմ էմմային գեղեցիկ
թւան այս մտքերը և այն ժամանակ ծանր տրամա-
դրութիւնը անպայման չարիք չի պիտի համարել:

Մարդս հասկանում է իր արժանիքը այն-

քան աւելի զօրեղ կերպով, որքան աւելի շատ
իր ազդեցութեան տակ է բացում շրջակայքը.
նա բարձրացնում է իրեն, եթէ գնում է բո-
լոր այն բաների վրայ, որոնք իրենից դուրս
են գտնուում, ինին դոքա ախորժեիլի թէ ան-
ախորժ, իր անհատականութեան (ИНДИВИДУ-
АЛЬНОСТЬ) պայծառ կնիքը:

Չնայելով այդ կռիւն, ծանր տրամադրու-
թիւնը յաղթեց ինձ, բայց և այնպէս ես կռւե-
ցի նորա հետ և աւելի նորան անհատականու-
թեան ձև, փոփոխեցի մտքումս:

Ներքի իմ եսականութեանը: Ամբողջ օրւայ
ընթացքում իմ բոլոր մեծ ջանքերից լիառ
վերջապէս, ձանձրոյթս փոխւեց մեղամաղձո-
տութեան, իսկ մեղամաղձոտութիւնը այնքան
խիտ չէ, որքան ձանձրոյթը. և ահա թէ ինչ
գրեցի ես նրանով ներշնչւած:

«Տուր ինձ ձեռքդ, ով սէր. թող տուր ինձ
զգալու քո մօտիկութիւնը. կեանքի փոթորիկն
ինձ վախեցնում է: Ես չեմ կարող տանել մի-
այնութիւնը:

«Իմ հայեացքը համարձակ ուղղւեց դէպի ճշ-
մարտութիւնը. ինձ համար այլ ևս գոյութիւն
չունէին ծածկւած գաղտնիքներ. ես կամեցայ

բաց անել ամենաչնչին արարածների հրաշա-
լիքները և հպարտութեամբ կարծում էի, որ
բաց եմ արել արարչագործ բնութեան գաղա-
նիքները. բայց մի տեսակ մշուշ սկտեց աչքե-
րըս և ես այլ ևս չկարողացայ տեսնել: ՏՈ՛ւր
ինձ ձեռքդ, ո՛վ իմ սէր, ես չեմ կարող տանել
միայնութիւնը:

«Իմ հայեացքը հեռացաւ երկրից. ուր նա ի-
զուր տեղը որոնում էր մխիթարութիւն և
յառուց գէպի երկնակամարը. ես անմտութեամբ
կամեցայ չափել տիեզերքի սահմանները, սա-
կայն բազմաթիւ արեւների փայլը կուրացրեց
աչքերս և ես այլ ևս ոչինչ չէի տեսնում:
Մեկնիր ինձ քո ձեռքդ, ո՛վ սէր, ես չեմ կա-
րող տանել միայնութիւնը:

«Իմ ձեռքս համարձակ ընկաւ այն տեղ, ուր
բնութիւնը, փաթաթւած իւր հրաշալի ծած-
կոցով, պահում է իւր ամենամեծ գաղտնիք-
ները, ուր կեանքը, դուրս գալով մահաւան ա-
ւերակների միջից, ստիպում է մեզ զգալ իւր
շարկերակի առաջին հարւածը: Բայց իմ եր-
կաթեայ ձեռքով ես խեղդեցի և ոչնչացրի փա-
փուկ սաղմը և այլ ևս ականջիս չհասաւ կեան-
քի և ոչ մի զարկի ձայնը: Դիր քո ձեռքը

ճակատիս վրայ, ո՛վ սէր և հանգցրու այն կրա-
կը, որ այրում է նորան:

«Եւ ուր էլ որ դարձնում էի հայեացքս ճշմար-
տութիւնը որոնելու և կեանքի գաղտնիքները
հետազոտելու նպատակով, ամեն տեղ ճանա-
պարհները փակւած էին ինձ համար:

«ՏՈ՛ւր ինձ ձեռքդ, ո՛վ սէր, որ ես զգամ քո
մօտիկութիւնը. ես չեմ կարող տանել միայ-
նութիւնը:

«Իմ սիրտը խօսեց և բաց արեց իմ առաջ
նոր հորիզոններ ուրախ ավերով և ծաղկազարդ
դաշտերով և ես բաց արի գիրկս, որ սեղմեմ
այդ դրախտը այրւած կրծքիս...

«Բայց տուր ինձ ձեռքդ, ո՛վ սէր, ամուր սեղ-
միր իմը, որովհետեւ հէնց մի լիշողութիւնն
էլ դրա մասին ինձ վախեցնում է և ես չեմ
կարող տանել միայնութիւնը:

«Բայց ինչո՞ւ բաց անենք այն վէրքը, որ ար-
դէն մի քանի օրից ի վեր ծածկւած է:

«Չարաբաստիկ կռիւը, որ յառաջացել է հո-
գուս մէջ և մօքի հալւածը, տալիս են հե-
ռաւոր արձագանք, որ, կարծես, դուրս է գա-
լիս իբր վրէժ մեր հպարտութեան համար, բայց
տխրութիւնը և արտմութիւնը նոյնպէս տալիս

են սրտին իրենց արձագանքը, որը չի անյայտանում ժամանակի ընթացքում և միշտ լիջւում է մեծ վշտով:

«Իիր ձեռքը սրտին վրայ, ով իմ սէր և չափաւորէր նրա մրրկալից հարւածները. թնյ տուր ինձ իմանալ, որ ես վերջապէս մենակ չեմ այս աշխարհում»:

Երեկ երեկոյեան տանջւում էի այն մտքով, թէ ինչպէս փոխեմ ծանր դրութիւնս գեղեցիկ և օգտակար բանով:

Բնութիւնը մեզ թոյն է տւել, որ արեւագարձային վայրի խոտի նման է, իսկ մարգը նրանից դեղ պատրաստեց *դոկտորի* (յօղացաւ) համար:

Այդպէս հարկաւոր է և բարկութիւնը, տետելութիւնը, հոգու ծանր տրամադրութիւնը փոխել մի ոյժի, որ բարձրացնում է անհատին ամբօխի միջից: Ինչպէս որ գառն եղեսպակը (шалфей) քիմիայի միջոցով գառնում է բրժրչկական գարման, այնպէս էլ տխրութիւնը, կամքի օգնութեամբ, պէտք է գառնայ մի

դեղ, որը բուժում է ամբօխի կտտողի զայրութիւն և հանճարի մէջ երեցած մելամաղձոտութիւնը: Հանգիստ քունը ցրւեց իմ հոգու վատ տրամադրութիւնը և ոյժերի փոփոխութեան ցնորքները. այժմ ես գրում եմ ժպիտն երեսին, անհուն հրճւոնքով նայելով կապույտ երկնքին: Մնաս բարով, հազար անգամ մնաս բարով:

Վիլետտի թղթերի մէջ, 'ի միջի ալոց, ես դառնում եմ մի թերթ տառնց թւականի, որի մէջ կային հետեւեալ նկատողութիւնները:

«Ես բաց արի բերանս շնչելու գարնանային օդը, լի ախորժելի բուրմունքով, բայց ես զգացի, որ այդ օդը շփւեցաւ իմ համալի փափուկ շրթունքներին:

«Ես քաղեցի մանուշակ, որի անուշ հոտը անցաւ սրտիս խորքերը և շարժեց նորա ամենազգայուն լարերը և ինձ թւում էր, որ իմ համան այստեղ, ինձ մօտ է:

«Ես հայեացքս ուղղեցի դէպի կապույտ երկնակամարը և ինձ թւում էր, որ այնտեղ խաղացող նոսր ամպերը կապույտ ֆօնի վրայ գրւում էին իմ համալի անունը:

«Ինքս իմ մէջ, իմ լիշողութիւնների և յոյ-

սերիս մէջ ես ոչինչ զկարողացալ գտնել, բացի քեզանից և ամեն բան, ամենայն ինչ նկարում էր իմ մէջ Էմմայիս պատկերը: Մինչև անգամ իմ արևեստանոցի գործիքները, իմ պատկերները, գրքերս, ալգ բոլորը ինձ երևում էին իբրև հայելի, որի մէջ ցոլանում էր միմիայն Էմմայիս պատկերը:

«Թէ իմ մէջ և թէ ինձանից զուրս, թէ հոգու և թէ նիւթի թագաւորութեան մէջ, թէ ուրախութեան և թէ վշտի մէջ ես տեսնում և զգում էի միայն մի բան— իմ Էմմային:

«Առանց նորան ես ոչինչ եմ. մեր երկուսիս կեանքը կազմում է մի ամբողջութիւն»:

Էմման Վիլհամին

Լոնդոն. յուլիսի 17-ին 18...թ.

Ուրեմն, իմ անգին Վիլհամ, յանուն մեր սիրոյ, մենք պէտքէ բաժանուենք իրարից: Ես գնում եմ Մադերա: Իմ ծերունի բժիշկը նոյնպէս համաձայն է ալգ բանին:

Մի քանի տարի է արդէն, որ նա բնակւում է հեռու աշխարհից, Բրոմպտոնի մօտ եղած իր կալածքում: Երեկ մօրաքրոջս հետ գնացինք նրա մօտ: Վաղուց ես նորան չէի տեսել, բաց Սննայի միջոցով նա ամեն բան իմացել էր: Նա, ինչպէս գիտես, մեր խորհրդակիցն է բոլոր նշանաւոր դիպածներում. նրա մէջ գեռ ևս տպւում է իմ հօր հոգու և կեանքի մի մասը: Ես չեմ կարող նայել նորան առանց արցունքների և երբ նա սկսում է խօսել ինձ հետ իրեն յատուկ հանդարտութեամբ և մտերմութեամբ, ես սաստիկ յուզւում եմ: Այժմ նա 80 տարեկանից աւելի է, բայց նա չունի ծերութեան թուլութիւններից և ոչ մէկը, որոնք ծերունիներին անհաճօյ են դարձնում, մեր մէջ զալլոյթ են լառաջացնում գէպի նոցա: Տարիները նորա մէջ ներշնչեցին միայն տնհուն ներդամտութիւն գէպի մարդկանց թուլութիւններն ու սխալները և լաւիտենտական ժպտի կրնիքը դրօշմեցին նրա գէմքի վրայ:

Մօրաքրոյս՝ Աննան տաւում է, որ նա միշտ ծիծաղում է, մինչև անգամ երբ քնած է: Նրա երկար, սպիտակ մազերը խնամքով սանդղաւորաձէ կտրուած են, իսկ լիքը, կոլոր գէմքը սիրուն

ածիլած էր. նա կործես Թրանկլինն է:

Երբ մենք Բրոմպտոն գնացինք, նա շատ զբաղւած էր իր պարտիզում, ուր կապկապում էր վարդի թփերը: Ինձ տեսնելով նա շատ պեց դէպի ինձ և գրկեց, ինչպէս հարազատ անձկան, ապա մեզ տարաւ իւր աշխատութեան սենեակը և, զիմացս նստելով, երկար պահեց իմ ձեռքը իր ձեռքի մէջ, չհեռացնելով աչքերը ինձանից և չկորուզանալով ոչինչ տակ, բացի, «Մեր Էմմա, մեր բարի Էմմա» խօսքերը: Ես մանրամասնօրէն որոտեցի նորան իմ այցելութիւնները Բրիտանական բժշկականութեան ասոցիերին և նա մի քանի անգամ ժողտաց:

Այն, այն, իմ բարի Էմմա, դուք պէտք է գնաք Մադերա և այնտեղ մնաք ամենաքիչը երկու, երեք տարի, որ բոլորովին առողջանաք: Այն ժամանակ կվերադառնաք Անգլիա, փորձելու ձեր առողջութիւնը և եթէ երկու ձմեռւան ընթացքում ոչ մի հազ ոչ մի բորբոքում (ка-тарах) չունենաք և եթէ մենք ողջ մնանք տեսնելու այդ ոսկորների վրայ մի քիչ ճարպ ու միս, այն ժամանակ Էմման կարող է վերջին անգամ խոստովանել ծերունի բժիշկ Թոմ-

մասի մօտ, որը նորա բոլոր մեղքերին թողութիւն կտայ և թող կտայ նորան մարդու գնալ Վիլեամին: Համաձայն ես:

«Ո՛հ, թանկագին բժիշկ, երանի թէ ձեր խօսքերը լինէին իսկական ճշմարտութիւն և իմ խեղճ հայրը կարողանար լսել այդ բոլորը»: — Զեր հայրը լսում է մեզ և եթէ ես ասում եմ ձեզ նորա անունով «Ամուսնացեք Վիլեամի հետ», այն ժամանակ դուք կաբող էք անել այդ, հաստատ համոզւած լինելով, որ դուք չէք դժգոհ ձեր տւած խօսքը և երդումը:

«Բայց, անգին բժիշկ, չէ որ ես երդւեցի հօրս առաջ երբէք չամուսնանալ»:

— Ճշմարիտ է, սիրելի Էմմա, բայց պէտք է աչքի առաջ ունենալ երգման ճիտքը և ոչ թէ բառացի նշանակութիւնը: Եթէ դուք աւելի առողջ լինէիք և եթէ ձեր կազմւածքը աւելի ևս ամուր լինէր, այն ժամանակ ձեր հայրը ոչ մի առիթ չէր ունենայ ձեզանից հայրը ոչ մի առիթ չէր ունենայ ձեզանից պահանջելու այդ հանգիստւոր խոստումը: Մի-թէ նա ձեզ չասաց, որ դուք պէտք է միշտ ինձ հետ խորհրդակցեք և կուրօրէն հետևեք իմ խորհուրդներին:

«Այդ ճիշտ է, թանկագին բժիշկ, դրա հա-

մար էլ ես պէտք է միշտ հնազանդւեմ ձեզ, առանց տատանւելու և առանց որ և է բացատրուած թիւն պահանջելու»:

Երբէք ես դեռ չէի տեսել մեր բժշկին այդպէս գեղեցիկ և ուրախ. ես կամեցայ համբուրւել նորա հետ: Ես շատ պարզ տեսնում էի, որ նա երբէք չի ցանկանում միմիջարական խօսքերով խափել ինձ, բայց որ նա ինքն հաւատում է իմ առողջանալուն, ամուսնանալուն: Այդ խօսքերը, որոնք ինձ անմեղ էին թւում, խորը կերպով շարժում էին սիրտս և ես արդէն ինձ զգում էի դրախտի մէջ:

Բարի ծերունին նկատեց այդ բոլորը. նրա աչքերը երկար նայում էին ինձ, նա և լաց էր լինում և ժպտում:

Ապա նա դարձաւ դէպի մօրաքույրս հետեւալ խօսքով:

«Բայց միթէ Վիլեամը կսպասի այդքան երկար: Արդեօք նա կցանկանայ մնալ այդպիսի տարտամ գրութեան մէջ չորս կամ հինգ տարի:

Այդ հարցին ես, բոլորովին կարմրած, շտապով պատասխանեցի. «Վիլեամը, ի հարկէ կրսպասի»...:

Արդեօք ես վառ արի, թանկագին Վիլեամ, որ քո փոխարէն երաշխաւոր եղայ այդպիսի մի նշանաւոր գործի համար: Ապացուցիր իմ սուտը, եթէ կամենում ես:

— Ի միջի այլոց պէտք է իմանաք, ծիծաղելով կտրեց խօսքս բժիշկ Թովմասը, որ պարոն Վիլեամը պէտք է ձեզ խօսք տայ, երբէք չայցելել ձեզ Մադերայում և ձեզ ազատ թողնել լիովին անձնատուր լինել ձեր «եսին». բայց ընդհանրապէս դուք «ես» ունե՞ք, որը պէտք է աչքի առաջ ունենայ միայն ձեր առողջութիւնը: Բայց չէ՞ որ դուք ցանկանում էք առողջանալ միմիայն նորա սիրոյ համար»:

Ես, ըստ սովորականին, հաղորդում եմ քեզ մեր խօսակցութիւնը. բայց հաւատացած եմ, որ շատ խօսքեր եմ աւելացրել, որոնք ամենեւին չեն խօսւել: Մենք երեք հոգի էինք, իրար հասկանում էինք կէս նախադասութիւններով և աւելի շատ խօսում էինք ձևերով ու ժպիտներով:

«Ես կգրեմ և կուղարկեմ ձեզ Լոնդոն պէտք եղած հրահանգները, տարէք այդ ձեզ հետ Մադերա, թող նոքա ընտանեկան բժշկի տեղ ծառայեն ձեզ: Ես կտամ ձեզ և մի յանձնարա-

բովան իմ բարեկամներին մեկի՝ դոկտոր Սոու-
տի վրայ, բայց դուք նշանակածի համեմատ
կյանձնէք նորան այն ժամանակ, երբ, Աստուած
մի արասցէ, ստիպւած կլինէք մահճին դիմե-
լու, թէպէտ, յուսով եմ, որ երբէք այդ չի
սրտատահի Մադերայի տաք և առողջարար օդի
մէջ: Այո՛, բայց դուք ո՛ւմ հետ պէտք է գնաք
այնտեղ»:

— Ինձ հետ, պատասխանեց մօրաքոյրս՝ Ան-
նան:

Ափսոս, որ դու ներկայ չէիր այդ տեսարա-
նին, թանկագին Ալիւսամ: Ես կցանկանայի, որ
դու լսէիր, թէ ինչպիսի բարեսրտութեամբ,
պարզութեամբ և սիրով ասաց մօրաքոյրս՝ Ան-
նան այդ խօսքերը — «Ինձ հետ»:

Իմ մօրաքոյր թաղութիւնը այնքան բարձր
է, նա այնքան ճշտութեամբ արտայայտուում
է, այնքան սերտ կերպով միացած է նորա
բնակչութեան հետ, որ երբեմն անցնում են
ամբողջ օրեր, ամիսներ և ես չեմ ունենում ոչ
ժամանակ և ոչ առիթ նորա մասին մտածե-
լու: Եթէ, ինչպէս վերոյիշեալ գէտըրում, յան-
կարձ պատահաբար բացուում է նորա բարու-
թեան անսահմանութիւնը, այն ժամանակ ա-

կամայ հիանում ես այդ բնակչութեան վրայ.
Իմ մօրաքոյր բնակչութիւնը մշտական պարզ
երկինք է և միայն նա կարող է գնահատել
նրան, ով որ իւր կեանքում տեսել է մեզ,
անձրեւում մըքիկ:

Դոկտոր Թովմասը նոյնպէս խիստ զգացւած
էր այն ձևից և պարզասրտութիւնից, որով
մօրաքոյրս՝ Աննան արտասանեց այդ երկու խօս-
քերը և աւելի ևս մեծ ջերմութեամբ ժպտա-
լով ասաց նորան. —

— Այո՛ այո՛... բայց և այնպէս դուք էլի նոյն
Աննան եք, ինչ որ էիք 50 տարի սրանից ա-
ռաջ... մինչև անգամ տարիները չկաբողացան
ներշնչել ձեզ մի քիչ եսականութիւն — այդպէս
էլ կմեռնէք դուք առանց զղջալու:

Դոկտոր Թովմասը բարի և սիրելի մարդ է,
բայց նա երբէք չի սիրում ներկայ լինել այդ-
պիսի երկար քնքույշ տեսարանների:

— Ուրեմն հարցը վճռւած է, ես ինքս կգամ
Լոնդոն ձեզ ճանապարհ քցելու: Գնանք, տե-
սէք իմ պարտեզը, իսկ դուք, Էմմա, համեցէք
իմ նոր ջերմոցը, ես ձեզ ցոյց կտամ այն բոյ-
սերից շատերը, որոնք դուք կտեսնէք Մադե-
րայում կատարելապէս ծաղկած բաց երկնքի

տակ. գնանք: Սրանից 14 օր առաջ ես Բրազիլիայից ստացայ **Solanum**-ի (пасленъ) մի տեսակը անսովոր գեղեցկութեամբ: Անգլիայում միայն ինձ մօտ և մէկ էլ հերցոգ Դեվօնշիրի մօտ կարելի է գտնել այդպիսի **Solanum**:

Մենք էլի մի ժամի չափ մնացինք Բրոմպտոնում, բայց, պէտք է քեզ խոստովանեմ, որ ման գալով գեղեցիկ և մաքուր ծառուղիներով, (аллеѣ) դիտելով ջերմոցի տաք օդի մէջ բուսած հազազիւտ բոյսերը ես մտածում էի միայն քո և Մագերայի վրայ:

Այն նոր կերպարանքը, որը շուտով պիտի ընդունէր իմ կեանքը, ինձ երազ էր թւում: Յոյսը, երկիւղը և սէրը դէպի քեզ, ուժեղութեամբ կռոււմ էին իմ սրտում, որ ես, թէև ըստ երևութիւն մասնակցում էի մօրաքրոջս և բժշկի խօսակցութեանը, սակայն, կէս ժամի չափ ես ոչինչ չհասկացայ դրանից և չկարողացայ ինձ հաշիւ տալ, որտեղ եմ ես:

Շուտով ինձ մօտ արի, թանկագին Վիլեամ. այժմ մենք պէտք է ամեն օր տեսնուենք, քանի որ ես Անգլիայումն եմ: Մի փոքր ևս և ահա ծովը մեզ կբաժանի իրարից ամբողջ ամիսներ ու տարիներ:

Իմ Վիլեամ, իմ մի հօտիկ Վիլեամ, քո էմման սպասում է քեզ:

Վիլեամը Էմմային

Լոնդոն, օգոստոսի 9-ին 18...թ.

Էմմա, դու խօսք տւիր ինձ, որ կվերցնես քեզ հետ իմ նամակը, կտանես Մագերա և այնտեղ միայն կկարդաս: Իմ «եսի» մի մասը քեզ կառաջնորդի և հէնց որ դու դուրս գաս օտար երկիր, իմ խօսքը առաջինը քեզ կողջունի: Ինչո՞ւ ես չեմ կարող հէնց ինքս ինձ մօտընել այդ բաղդաւոր թերթի մէջ, ինչի՞ ալն երեւակայութիւնը, որ ստեղծում է ոգիներին և ուրականներին, չի կարողանում ստեղծել կենդանի մարմիններ անտեսանելի հոգիներով:

Ո՛հ Էմմա, այդ նամակով ողջունում է քեզ իմ հոգին, նա պտտւում է քո շուրջը և ցանկանում է, որ այն կղզին, ուր դու պիտի գնաս, լինէր քեզ համար պարտէզ ու դրախտ. նա ցանկանում է, որ Մագերայի հողը ողորմած լինի դէպի քեզ և տայ քեզ առողջութիւն, խաղաղութիւն:

Հիւանդ սէր.

թիւն և ուրախութիւն: Ես կսիրեմ այն կղզին, որ այդպէս անժամանակ խլեց ինձանից իմ էմմային: Իսկ դու հալածեցիր ինձ քո կղզուց այնպէս, ինչպէս որ Աստուած մեր նախահայրերին արտաքսեց գրախտից և թոյլ չտւիր ինձ այցելել քեզ ընդամենը մէկ անգամ և այն էլ գոնե՞ս մի ժամ ժամանակով: Դու թողատրեցիր այն բժշկին, որին դու յարգում ես, տալ քեզ մի այդպիսի խիստ վճիռ, բայց, ի հարկ է, հէնց դու ինքդ ես իսկական դատաւորը և միայն խորամանկութեամբ ծածկում ես քո բարձր հեղինակութիւնը: Վերջին օրերը՝ մեր նամակների և խօսակցութիւնների մէջ դու սիրով և գեղարւեստօրէն նկարեցիր քո բժիշկ թո՞վմասի ամենագեղեցիկ պատկերը. դու ցոյց տւիր ինձ՝ բժիշկ փիլիսոփային, այն մարդու տիպարը, որի մէջ բարի սիրտը միացած է խորին գիտութիւնների հետ, մարդ, վսեմ գաղափարներով. բայց և այնպէս դու չկարողացար նրան ինձ վշտակից անել: Ինձ համար բժիշկ թո՞վմասը մի այնպիսի մարդ է, որը հեռացրեց քեզ Անգլիայից, իսկ քո Վիլեամին այն աւետեաց երկրից, որտեղ գտնուում էր նրա ամբողջ երջանկութիւնը: Ես չեմ սիրում, ամե-

նեին չեմ սիրում քո Փրանկլինին բժշկական շորերով, քո այդ գոկատը թո՞վմասին:

Բայց և այնպէս իմ վշտի մէջ կայ և մի մեծ միտթարութիւն: Ես հաստատ գիտեմ, որ դու մի բանի կարօտ պիտի մնաս Մագերայում, նոյն բանին, ինչ բանի որ ես կարօտ եմ մնացել: Ոչ անուշաբոյր (бальзамический) օդը, ոչ ծաղիկները, ոչ քո այդ կղզու ուրախ հովիտները, ոչ քո մօրաքօյր Աննայի բարութիւնը չեն կարող յագեցնել քո այդ կարօտը: Բայց անտանելի կլինէր իմ գրութիւնը, եթէ իմանայի, որ դու կատարելապէս երջանիկ ես Մագերայում:

Դու տեսնում ես, էմմա, որ ես սիրում եմ քեզ այնքան զօրեղ և այնքան հպարտանում եմ քո սիրով, որ երբեք չեմ կասկածում, թէ դու կարող ես ուրիշին սիրել: Բայց ո՞վ կունենայ այնքան յանգոյնութիւն, որ սիրէ քեզ այնպէս, ինչպէս ես եմ սիրում: Ի՞նչպիսի լոյս կարող է փայլել աւելի պայծառ, քան մեր սիրոյ արեգի ջինջ ճառագայթները: Այս աշխարհում ո՞վ կարող է հպարտութեամբ ասել—«Ես սիրում եմ էմմային աւելի քան Վիլեամը»: Ես, քո վերաբերմամբ, չեմ զգում խոնդոտութիւն. գէպի

մարդկանցից և ոչ մէկը, բայց քո Վիլեամը նախանձում է բնութեանը և այն ամեն մի գեղեցիկ առարկային, որ դու, հիացած կապտագոյն ծովով կամ աստղային երկնքով, անուշահոտ ծաղիկներով լի դաշտերը պատելով, ուրախութեամբ մտածես նրանց մասին, իսկ ինձ միտդ էլ չբերես: Չէ որ դու շատ ես սիրում այն ամենը, ինչ որ գեղեցիկ է: Ես յաճախ լսել եմ, ինչպիսի հրճանքով խօսում ես թիթեռների կամ մամռապատ ժայռի մասին. յաճախ լսել եմ, թէ ինչպիսի գոյներով նկարագրում ես դու այն կաղնին, որի վրա փաթաթւած է պատուտակը: Դու ասում էիր ինձ, որ կարելի է այդ արարածներին սիրել առանց զղջալու և չարչարելու: Սիրել բնութիւնը՝ դա մի կիրք է, որը մշտապէս անմեղ է մնում և դեռ ևս ոչ ոք չի կարողացել ծածկել ամբողջ բնութիւնը երկաթէ պարսպով. նա իւրաքանչիւր անհատի տալիս է մի պարգև, մինչև անգամ ամենաողբատին և ամենադժբաղդին: Այժմ, թանկագին Էմմա, դու գտնւում ես մի երկրում, որը հազար անգամ աւելի գեղեցիկ է Անգլիայից, որը, ինչպէս ասուած են, գեղեցիկ է մինչև անգամ Իտալիայից և ես նա-

խանձում եմ քեզ Մադերայի համար:

Այս շաբաթ որքան գրքեր եմ կարդացել քո կղզու մասին: Բարեբաղդաբար ես անմիջապէս չկարողացայ Լոնդոնում գտնել Մադերայի մասին եղած բոլոր գրւածքները և այսպիսով այժմ կարող եմ չարչարել իմ գրավածառին, որ ինձ համար ձեռք բերի նորանոր գրքեր: Ամերիկայից, Գերմանիայից և Փորթուգալիայից: Ես մի առանձին ձևով պահարան ապսպրեցի, ուր պիտի պահւին այն բոլոր հեղինակութիւնները, որոնք նւիրւած են քո կղզուն:

Բայց ես գիտեմ արդէն, որ այդ կղզին լիքն է ծաղիկներով, որ այդտեղ արեւածաղիկը հնձում են, ինչպէս մեր երկրում գարին, որովհետեւ, հակառակ դէպքում, դոքա կլցնէին բոլոր դաշտերը: Գիտեմ նոյնպէս, որ այդտեղ կարելի է զբօսնել պուտի (страстоцветъ) սուէրի տակ, որ հովիտները լիքն են դափնիներով և ուրիշ շատ մշտադալար ծառերով, որ այդտեղ խաշանճը (берескѣ) մարդու հասակին կհասնի...

Դու անչափ սիրում ես այդ բոյսը և մինչև այժմ տեսել ես նորոն միայն ջերմանոցներում, իսկ այժմ խաշանճի ամբողջ անտառներ քեզ

պիտի ծառայեն:

Վիլեամի առաջին միտքը, որ դու կիմանաս կղզին դուրս գալով՝ դա նախնին է, անսահման նախանձս դէպի գեղեցիկ բնութիւնը: Նա, այդ բնութիւնը, պէտք է բոլորովին իշխէ քեզ վերայ և Աստուծո՛ւ գիտէ, քանի՜ ամիսներ. ինչ կրճու՞մ է այն ատելութիւնը դէպի ամեն մի ծաղիկ, որ դու կքաղես և որի բուրմունքով դու կլիանաս: Երևակայում եմ, ի՞նչպիսի սառնութիւն պիտի փչէ իմ նամակներից, երբ որ նոքա, դեռ ևս անգլիական մառախուղով լիքը, ընկնեն քո ձեռքը. որքան պէտք է խղճաս դու մեզ, ողորմելիներին, որ ամբողջ ամիսներ զրկւած ենք ծառերի վրայ տերևներ և մարգագետիններում ծաղիկներ տեսնելու բաւականութիւնից:

Ուրեմն, թանկագին էմմա, նախ քան բոլորովին անձնատուր լինելդ՝ այդ գեղեցիկ բնութեանը, որի մասին մինչև այժմ դու շատ թող դադափար ունէիր, դու պէտք է ինչ մի բան խոստանաս, պէտք է խոստանաս մի տեղ էլ պահել ինչ համար, քո հրճանքի և հիացմունքի մէջ, ամեն մի ծաղիկի, ամեն մի գեղեցիկ առարկայի առաջ: Միայն այդպիսի

պայմանով ես կարող եմ սիրել քո կղզին:

Երբ ձի նստած՝ սև ժայռի բարձրութիւնից դու կդիտես հովիտը և կտեսնես խառնւած, շագարեղեգնի մէջ ծաղկած վարդի թփեր, որոնցից թեթև քամին քեզ կհասցնի արբեցնող բուրմունք, երբ դու կտեսնես հանդարտ, պարզ ծովը և չգիտես ինչի՜ վրայ լառես քո սիրատենչ հայեացքը, այն ժամանակ ասա, «Ի՞նչ կմտածէր Վիլեամը, եթէ ինչ հետ այստեղ լինէր»:

Երբ դու կթողովես մի կողով լիքը ծաղիկներ, մի ամբողջ փունջ վարդ, լասնիկ, մուրդ (MYRTS) և խաշանճ, երբ քո սենեակում խորը կերպով կշնչես նոցա հրաշալի բուրմունքը, — ասա՝ «Զգո՞ւմ ես դու, Վիլեամ, այն ուրախութիւնը, որ թափանցում է մինչև սրտի խորքերը և, որը վսեմացնում է հոգին»: Երբ երեկոյեան կգնաս ծովափը և այնտեղ, շալով փաթաթւած, կդիտես կապուտ երկնակամարը — մտածիր՝ «Ո՛րքան բաղդաւոր կլինէր Վիլեամը, եթէ այստեղ լինէր, ինչ հետ միասին»:

Չասես, որ ես խիստ շատ բան եմ պահանջում. ո՛չ, էմմա, ո՛չ. այլ պարզ ասա, որ ես սիրահարւած եմ...

Սէրը, դա կեանք է, լի զգացմունքներով։
դա մի լիակատար կեանք է, որ զանազան-
ւում է իր յատուկ ոլժով, իր ջերմութեամբ,
իր գաղանիքներով, որոնք կորչում են, կարծես
անհունութեան և անյագ ծարաւի մէջ։

Հասկանում ես դու, էմմա, ինչ է նշանա-
կում մարդ, բոլորովին կաշկանդւած սիրային
բուռն ցանկութիւններով։

Դիտեն արդեօք ինչ է նշանակում ունենալ
գեղեցկութիւն, ջահիլութիւն հանճար, ջերմ
զգացմունքներ, հպարտութիւն, արհամարհանք
բանաստեղծութիւն, մարդկային բոլոր ընդու-
նակութիւններ և զգալ, թնչպէս մի զարհուրելի
բոց այրում, ոչնչացնում է այդ բոլորը... Եւ պատ-
րաստ լինել ամեն մի բոցէ ձգելու մի արարածի
ոտների տակ իր բոլոր ձիւքերը, իր բոլոր զօրու-
թիւնը, իր ամբողջ կեանքը մի ժպիտի համար
և սիրել կեանքը միայն նրա համար, որ կարողա-
նայ անդադար ասել մի կնոջ, «Ես պատրաստ եմ
մեռնել քեզ համար»։ Եւ երբ բոցը կլափէ քո
սիրտը, զգալ ինքն իրա մէջ այդ անյագ, անսահ-
ման, մշտնջենական ձգտումը, որը ոչ այլ ինչ
Դէ ոչ նոյն ինքը կեանքը, նոյն ինքը սէրը։
— դա աստուածային ներշնչութիւն է

մարդկային կերպարանքով։ Սէրը— դա անվերջ
ապագայ է, որը անցնում է մի ժամանակաւոր
մահկանացուի աչքերի առաջ։ Սէրը— դա այն
կրակն է, որ Պրոմէթէոսը փախցրեց երկնքից։
այդպէս է գոնեա իմ, դէպի քեզ ունեցած սէրը։

Ընդուն չափազանց աղքատ է՝ արտայայտե-
լու քեզ այն ամենը, ինչ որ ես զգում եմ,
քեզ շրջապատելու այնպիսի մթնոլորտով, որը,
քանի դու Մադերայումն ես, գիշեր ցերեկ
քեզ ասի «Վիլեամը այստեղ է, միշտ քո մո-
տըն է»։

Ընդուն կարող է ուղեւորին ցոյց տալ անա-
պատի ճանապարհը, բայց ճանապարհորդել
կարելի է միայն երևակայութեան թևերով
կամ կրակոտ ձիով։

Եթէ ճիշտ է, որ 25 տառը բաւական է մեր
մտքերն արտայայտելու, եթէ ճիշտ է, որ հան-
ճարը եօթը ձայնանիշներով կարող է ցոյց տալ
մեզ ներդաշնակութեան ամենաբարձր աստի-
ճանները, եթէ ճշմարիտ է, որ եօթը գոյնե-
րով կարելի է նկարել ամբողջ տիեզերքը՝ ա-
պա ճիշտ է և այն, որ արտայայտւած մտքե-
րի, ձայնի ներդաշնակութեան, նկարչի պատ-
կերի միւս կողմը գտնւում է նոյնպէս մի խոր-

հըրդաւոր աշխարհ: Մեր գիտակցութիւնը այդ աշխարհն իրանն է համարում, բայց մինչև այժմ գեռւ ևս ոչ մի երգիչ, ոչ մի կոմպոզիտոր, ոչ մի նկարիչ չի կարողացել արտայայտել այդ: Եւ մեր ճշմարիտ մեծութիւնն էլ հէնց այն է, որ մենք կրում ենք մեր մէջ մի ամբողջ աշխարհ, որի սահմանները անկարելի է գտնել, որի մէջ զգացմունքն ու երեւակայութիւնը մոլորւում են, չկապւելով ոչ ձեռով և ոչ գիտութեան երկաթէ արամաբանութեամբ:

Մարդս աւելի շատ զգում է, քան խօսքերով արտասանում. և աշխարհիս ոչ մի լեզու, նկարչի ոչ մի վրձին, ոչ մի ներդաշնակութիւն չի կարող արտայայտել այն, ինչ որ նա զգում է արհամարհանքի կամ սիրոյ, ուրախութեան կամ տրտմութեան միայն մի բոլորում:

Ո՛հ, Էմմա, միտքս ուր հասցրեց ինձ. ես կամեցայ շնորհաւորել քո Մադերա հասնելը, իսկ աժմ գրում եմ քեզ նախանձի և բնազանցական (метафизический) իրերի մասին: Բայց դու, սիրելիս, որ հասկանում ես ինձ, մինչև անգամ այն ժամանակ, երբ ես լռում եմ, դու այժմ էլ կհասկանաս ինձ: Դու կհականաս իմ նախանձը, որի

մէջ չկայ, ոչ վշտի սաւերը և ոչ, հէնց նոյն իսկ, անմեղ եսականութեան հետքը և կներես ինձ:

Դու իմն ես այնպէս, ինչպէս որ իմն եմ իմ մտքերը, իմ աչքերը. դու կազմում ես իմ էութեան կէսից աւելին և այժմ, երբ դու ինձանից այդպէս հեռու ես, ես աւելի զօրեղ կերպով զգում եմ, ինչպէս սերտ կերպով կապւած եմ քեզ հետ:

Նախանձը (ревность), ինչպէս ես եմ հասկանում, է ինքնաճանաչութիւն, որ լցնում է մարդուն, է ինքնասիրութիւն, ինքնապաշտպանութեան բնագդ, (ИНСТИНКТЬ) ամենասուրբ և բնական իրաւունք:

Իմ էութեանս մեծագոյն մասը Մադերայումն է և ես նրան ուղեկցում եմ անհուն սիրով և շրջապատում եմ քաղցրասիւք հողմով, որը նրան կախի ինձ համար— կեցցէ՛ նա, որը իմն է, իմն է լաւիտեան:

Տղամարդը չի կարող միայնակ ապրել, ես տեսել եմ քեզ այդ հազար անգամ. այդպէս էլ՝ կինը չի կարող գոյութիւն ունենալ մենակ. տղամարդը և կինը կազմում են մի էութիւն, որը ապրում է միեւնոյն կեանքով:

Եւ այդպէս, սիրելի Էմմա, ինձ համար տեղ

պահիր թէ կղզու մամռապատ բաշալլգի ժայ-
ռերի վրայ, թէ ծովի ափին, որտեղից դու
զւարճանում ես հիասքանչ տեսարանով և թէ
քո անուշաբույր ծաղիկների կողովի մէջ: Թող
Մադերայի առողջարար օգը հանդարտ շնչէ քո
շուրջը և առողջացնի քեզ, որպէս զի շուտ և
շուտ վերադառնաս: Թող մարգագետինները
ծաղկազարդ ձևերով գեղեցկանան քո կոշիկնե-
րի տակ և պուրակների ծառերը թափեն քո
գլխին ծաղկէ անձրև. թող Մադերան դառ-
նայ կատարեալ դրախտ—բայց և հէնց այդ
դրախտում դու տեղ որոնիր քո սիրահար Վի-
լեամի համար:

Էման Վիլեամին.

Մադերա, հոկտեմբերի 3-ին 18...թ.

Մի քանի օր շարունակ, Վիլեամ, ես ինձ
շատ յոգնած էի զգում և քէֆս տեղը չէր.
ամենափոքր շարժումն անգամ յոգնեցնում էր
ինձ, իսկ հանգստութիւնն ինձ չէր տալիս ցան-
կալի անդորրութիւնը: Ես ամբողջ ժամեր անց-

կացրի, յարմար տեղաւորւած մեծ բազկաթոռի
մէջ, լուսամուտի մօտ և ամբողջ ժամանակը
կարդում էի քո նամակները. <դա իմ ամենա-
լաւ զւարճութիւնն է՝ երբ ուրախ եմ և միակ
մխիթարութիւնս՝ երբ տխուր եմ: Եւրաքան-
չիւր նամակ վերջացնելիս, հայեացքս ակամայ
թափառում էր ծովի վրայ, որ մշտնջենական
զւարճութիւն է մտախոհ մարդու համար և
դանդաղ սահում էր ամենամօտիկ առարկանե-
րից դէպի ամենահեռաւորները, ներկայից դէպի
հեռաւոր անցեալը և ապագայի անյայտ սահ-
մանը: Առաջին մասում—ծովի հարթութիւնը,
որի վերայ ակօսներ էին ձևացրել սպիտակ ա-
ռազաստները, ճեղքում էին բարձրացող ու
ցածացող թիակները, ծփում էին հազարաւոր
ալիքներ. գործունեայ կեանքը իւր աղմուկով,
ահագին շարժումով, իւր պարզ ու խիստ սահ-
մանափակող գծագրութեամբ (contour): Հեռ-
ւում—կապույտ ու խաղաղ ծովը. կարծես մի
հեռաւոր քող անհետանում էր այդ ջինջ հո-
րիզոնում և ձևանում, ինչպէս անյայտ ծովային
թռչնի թևեր: Ռա մտքի էմբլեմա էր, որը
իր ոյժը քաղում է իրական կեանքից, բայց
վերանում է արդէն անվախճանի թագաւորու-

թիւնը, այնտեղ, որտեղ չկան այլ ևս որոշ սահմաններ, չկալ աղմուկ և մնում է միայն յարատե հոսանք, որը երբէք չի դադարում, երբէք չի ընդհատւում: Բայց իմ հայեացքս ուղղւում էր աւելի հեռուն և հանգչում էր գորշ ծովի վրայ, որը անհետանում էր մառախլապատ հորիզոնում. այնտեղ թէև չկար զրգը-ռիչ աղմուկ, բայց չկար նաև այն պարզ անդորրութիւնը, որը բարձրացնում է մարդուն. այնտեղ նկարւում էր մի ինչ որ անհաստատ, տատանող պտտկեր, մի անսահման, խորհրդաւոր անապատ: Եւ յատկապէս պտտկերի այդ մասին ամենից աւելի սիրով ուղղւում էին իմ թախծալի և անհանգիստ մտքերը: Այդ գորշ գիծը երբեմն ինձ թւում էր անշարժ, երբեմն դանդաղ բարձրանում էր, ինչպէս մըշուշի քուլաներ և ձևակերպւում էր արդէն իբրև մի անջատւած աշխարհ, աշխարհ յարատե լուսոյ և անսահման անուրջների: Այնտեղ՝ այն միգապատ հեռաւորութեան մէջ, չկան ոչ գոյներ, ոչ ձևեր. դա միայն մի Բաթս է, որից Աստուած ստեղծեց կարգաւորութիւն, իսկ մարդը բանաստեղծութիւն. այնտեղ թագաւորում է մշտնջենաւոր շարժում, մշտնջենա-

կան, անփոփոխ, անդադար միապաղտղ հոսանք, որի խորքերում ապաստան են գտնում մանրադէտային (МИКРОСКОПЪ) կենդանին և ահագին կետը — հոսանք, որը գտնւելով իւր յարատե անյալտութեան մէջ, առանց խտրութեան ծածկում է ստտկած ծովաշան ոսկորները և ածիւնը նաւաբեկեալների: Այնտեղ տիրում է անչափելի գորշ մառախուղ. նա չի ուրախացնում, չի հանգստացնում, բայց դիւթում է մարդուն, որը անլերջ ձգտում է դէպի նա, թէև ոչ մի ժամանակ չի կարող զրկել նորան, որովհետև շարունակ քննում է և իսկապէս երբէք չի հասկանում. նա կախարդում է մարդուն յատկապէս նրանով, որ մնում է յաւետ անմերձենալի նորա սիրատենչ զրկախառնութիւններին:

Գորանից յետոյ, երբ ես այդ դրութեան մէջ անցկացրի մի քանի օրեր, գրեթէ ուժասպառ և թուլացած, միտս եկաւ, Վիլեամ, քո խօսքերը և ես մտաբերեցի, որ ծուլութիւնը ամենամեծ մեղքերից մէկն է: Անմիջապէս ուժերս հաւաքեցի և խնդրեցի մօրաքրոջը ինձ հետ մի զբօսանք կատարել Մախիկօյում: Ինձ պատմեցին մի սրտառու պատմութիւն, որը

կապ ունի այդ ամբողջ կղզու վրայ եղած ամենից աւելի նկարչական տեղի հետ և ես ցանկանում էի մի տխուր ուխտագնացութիւն կատարել այնտեղ: Իմ բարի մօրաքոյրը, ուրախանալով, որ ես վերջապէս արթնացայ վտանգաւոր մահաքնից, իսկոյն և եթ սիրով համաձայնեց և հրամայեց իրեն համար թամբել մի լաւ ջորի, իսկ ինձ համար պատրաստել պատգարակ: Արդէն առաջուց գրել էի քեզ, որ այստեղի տեղափոխութեան այս սովորական միջոցը ինձ դուր չէր գալիս, որովհետեւ իւրաքանչիւր շարժման միջոցին ես ականջ մտաբերում եմ, որ երկու մարդ չարչարում են իմ պատճառով և անմիջապէս ինձ հարց եմ տալիս, «Ինչո՞ւ Աստուած մարդկանց այնպէս է ստեղծել, որ նոցանից մէկը պարտաւոր է միւսին ծառայել»: Մօրաքոյրս մի քիչ հանգստացրեց ինձ, ցոյց տալով երկու արեակէզ և ուժեղ երիտասարդներ և ասաց, որ նոցա համար քո քնքոյշ և թույլ համան շաքարեղեգնից էլ թեթեւ է: Մախիկօ տանող ճանապարհը ձգւում է օձապլտույտներով կանաչապատ ու բերկրալի մարգագետնի միջով, ծածկւած սև, անկիւնաւոր բազալիտի ժայռերով, որոնք խորը շերտերով, կրճարտ-

տւած են և նայում են ինչպէս հինաւուրց ամբողջի ատամներ: Փոքրիկ և ուրախ դաշտակները, (ПОЛЯНКА) որոնք խաղաղ տարածւած են այդ սև հսկաների մէջ, նմանում են հանգած հրաբուխի բաժակում դրած սոխակի բնի: Այդ վայրի, ահաւելի ժայռերից բոլորից վեր բարձրացնում է իր գլուխը Կոստանիսօ սրածալր գագաթը:

Պատգարակի չափաւոր ճոճումը ինձ այնպէս օրորում էր, որ ես երբեմն ննջում էի և այդ ժամանակ ինձ այնպէս էր թւում, թէ ես ձգւած—պառկած եմ պերօլեան ճլորթիում, կապւած երկու արմաւենիների մէջ, իսկ երկու սև բազէ, իւրաքանչիւրը կանգնած մի ուրիշ սև բազէ, իւրաքանչիւրը համապատասխան տի վրայ ճլորթիի երկու համապատասխան կողմերում, երգում են իմ թաղման երգը: Հագի ձայնը լանկարծ ինձ սթափեցրեց և ես արթնացած ահ ու գողով սկսեցի որոնել բազէների. բայց իմ առաջ տեսայ միայն պատգարակակրիս ծիծաղելի գլխարկը, որը մի ականթարթում ցրւեց իմ թախծալի մտքերը:

Երբ Մախիկօ հասանք ես արագութեամբ դուրս թռայ պատգարակից և ինձ աւելի լաւ էի զգում, քան Թունգալօյից դուրս գալիս: Մի չիւանդ սէր.

քանի ժամայ շարժումները և օդափոխութիւնը ահագին փոփոխութիւն լառաջացրին իմ մէջ:

Մախիկօն մի բոլորովին աղքատ գիւղ է, բայց նա մի այնպիսի սրտառու է տեսք ունի, որ ակամայ սկսում ես մտածել մի ինչ որ վէպի կամ էլեգիայի մասին, և իսկապէս էլեգիան այստեղ տեղ ունէր: Զմայլելով ափերի լայն տարածութեամբ և նայելով ծովի մօտ եղած փոքրիկ բերդիկին, որին տեղական բնակիչները անւանում են «desembarcadouro» ես դիմեցի դէպի եկեղեցի և այնտեղ տիրացուն (постояль) ինձ հետևեալ սրտաշարժ պատմութիւնն արեց:

«XIV դարում, հիմայ լաւ չեմ լիշում ճիշտ որ տարում, այդ ափի մօտ կանգ առաւ մի ոչ մեծ անգլիական նաւ և ափը դուրս հանեց մի տղամարդի ու կնոջ, երկու գեղեցիկ, ջահիլ անգլիացիների, որոնք դատապարտւած էին ապրել և մեռնել Մադերայում: Նոցա անուն էր Մախիմ և Աննա: Յայտնի չէ, ինչ մեղք էին գործել նոքա, բայց, ըստ երևութիւն, նա շատ աննշան պիտի եղած լինէր, կամ դատաւորը նոցա հետ շատ բարեօրաութեամբ էր վարւել,

եթէ նոցա պատժել էր միայն նրանով, որ ստիպել էր ապրել և մեռնել միասին այդ դրախտում:

Ծովի ափից մի քանի քալ հեռու գտնւում էր մի մայրի ծառ (кедръ, cèdre) նոյնքան հին, որքան այդ իսկ կղզին. նա ներկայացնում էր մի ամբողջ անտառ իր մութ կանաչաւուն գմբէթով, ճուղքերի և տերևների լաբիւրինթոսով, որոնց միջից հագիւ էին թափանցում արեգակի ճառագայթները: Այդ մայրին կարողանում էր մաքտուել նոյն իսկ փոթորկի հետ: Նորա հիւրընկալ յարկի տակ ամառնային խորշակը փոխւում էր բարեխառն օտքութեան, իսկ ձմրան հիւսիսային քամին դառնում էր զովաշունչ գեփիւռ: Այնտեղ երկու աքսորականները շինեցին իրենց համար խրճիթ և ապրում էին նրա մէջ երկար, երկար տարիներ բաղդաւոր, բայց առայց որդիների:

Աւանդութիւնն ասում է, որ նոքա երբեք չհեռացան Մախիկօյից. նոքա ապրում էին առանց որդիների, առանց բարեկամների և առանց թշնամիների. նոցա համար գոյութիւն ունէր միայն մի տաճար—նոցա մայրի մշտնջենաւոր կանաչ յարկը, մի հորիզոն—ծովի յա-

ւիտենական կապոյտ հորիզոնը, մի սէր—նոցա փոխադարձ սէրը։

Աննան էր, որ առաջինը մեռաւ և Մախիմը նորան թաղեց մայրիկ տակ. նա մի ճիւղ կրտսեց և նրանից մի այնպիսի գեղեցիկ խաչ շինեց, որի նմանը մինչև այն ժամանակ դեռ տեսնւած չէր։ Յետոյ նա շինեց մի երկրորդ խաչ, բոլորովին նման առաջինին և իւր սիրուհու գերեզմանի կողքին փորեց մի ուրիշ գերեզման։ Նա մեռաւ հազիւ վերջացնելով այդ նախապատրաստութիւնները։

Հարեաններից ոչ ոք, Աննայի մահից յետոյ, չլսեց և ոչ մի խօսք Մախիմի բերանից։ Մի առաւօտ նորան գտան մեռած. նա պարկած էր գետնի վրայ և իւր գրկում այնպէս ամուր սեղմել էր խաչը, որ միայն ուժով կարելի էր դուրս հանել։ Մախիմին թաղեցին իւր ուղեկցուհու կողքին։

Այնուհետև երկար, երկար տարիներ այդ մայրին համարում էին սիրոյ նւիրւած ծառ։ Սիրոյ մէջ խաբւածները գնում էին նրա մօտ, որպէս զի ողբան իրանց անբաղդութիւնը. թըշւառ սիրահարները այդտեղ էին դիմում, որպէս զի խնդրեն փոխադարձ սիրոյ բաղդաւո-

րութիւն. իսկ բաղդաւորները թագնւում էին նորա հովանու տակ, որպէսզի լուսնի աղօտ լոյսի տակ շրջնչան սիրոյ խօսքեր։ Այդտեղ կանգնած երկու խաչերն էլ ոչ ոքի վրայ ծանր տպաւորութիւն չէին թողնում. նոքա ներկայացնում էին բաղդաւոր սիրոյ սեղան։ Քամին մեղմ շրջնչում էր մայրիկ տերեւների մէջ, իսկ ծովի ալիքները տխուր աղմկում էին խաչերի պատւանդանները։

Մի անգամ Tristaô Vaz Teixeira քաղաքապետը, այն, որ Զարկի հետ բնակութիւն հաստատեց Մագերայում, հրամայեց կտրել այդ մայրին և նրանից եկեղեցի շինել Մախիմի և Աննայի գերեզմանների վերայ։

[Սիրոյ տաճարի վրայ կառուցւեց Աստուծոյ տաճար և սուրբ բանաստեղծութիւնը լեւեց սրտի քնքոյշ բանաստեղծութեան վրայ։]

Անցել է հինգ դար։ Մախիմից և Աննայից մնացել է միայն տղբատ գիւղին դրւած Մախիկօ անունը և մի խաչի կտոր, որը Մախիմը շինեց Աննայի գերեզմանի վերայ, կտոր, որը տիրացուն ցոյց է տալիս այցելող ճանապարհորդներին։

Եւ համբուրեցի մայրի ծառի կտորը, թանկագին Վիլեամ և ինքս ինձ հարցրի. «Արդեօք

մենք էլ, մեր մահից լետու, միմեանց մօտ թաղած կլինենք:

Պատգարակով ճանապարհորդելը ինձ յոգնեցրել էր և որովհետև ծովը խաղաղ էր, ինչպէս հայելի, մենք Մախիկօյից մի փոքրիկ նաւակ վերցրինք և ճանապարհ ընկանք գէպի Կանիսալա, որը մի շատ խղճալի գիւղ է, բաղկացած մի քանի խրճիթներից և մի տխուր, ոչ գեղեցիկ եկեղեցուց: Մենք այցելեցինք մատուռ և ասլա ծովով վերադարձանք Փունգալօ:

Իմ լետարգիան (летаргия, lethargia) փոխւեց խաղաղ մելամաղձօտութեան, շնչառութիւնս սկսեց աւելի ազատ կատարւել և ես ուրախանում էի, որ գտայ բանաստեղծութեան մի թանկագին յիշատակ, որի մասին կարող եմ լայտնել իմ Վիլեամին:

Լեւման Վիլեամին.

Մաղերա. հոկտեմբերի 19-ին, 1877.

Տօսն և չորս օրւայ ընթացքում ես միայն Մախիկօյի մասին էի մտածում: Ես ցանկանում

էի լինել բանաստեղծ, որպէս զի ծաղիկներից պսակ դնէի Մախիմի և Աննայի գերեզմանի վրայ, ես կամենում էի ուժ և իշխանութիւն ունենալ անմահ դարձնելու համար այն երկու բաղաւոր աքօորականներին, որոնք հինգ դար է արդէն հանգչում են փառահեղ մայրիկի արմատների մօտ: Բայց ամենից աւելի ես ցանկանում էի, որ մենք էլ լինէինք ալգալիսի բաղաւորներ:

Բայց ինչո՞ւ թագցնել այս բոլոր գողտրիկ բանաստեղծութիւնը իրական կեանքից, անմըխիթար պատկերի առաջ: Ինչո՞ւ հարկաւոր էր թուում ծածկել ջինջ, որպէս կապուտակ երկինքը, անցեալի բանաստեղծութիւնը ներկայի թաղման վարագուրի տակ: Ես քեզ խօսք եմ տւել չծածկել քեզանից իմ ամենամանշան ուրախութիւնը և չթաքցնել փոքրիկ հոգսն անգամ: Գուր կոեսնես, ինչպէս ազնուութեամբ կպահեմ ես իմ խօսքը:

Բացի դորանից, թանկագին Վիլեամ, ինձ պիտի հարւածէր և այն ցաւը, որ ես զգացի այսօր, եթէ չկարողանայի քեզ ինձ հետ նորան մասնակից անել: Բայց այդ, միւսնոյն ժամանակ, ամենաբարձր աստիճանի կրթիչ և մարդու

բարձրացնող ցաւ էր և ես շնորհակալ պիտի լինեմ նրանից: Դա մի բժիշկ է, որը կտրոււմ է, դադոււմ, բայց, դորա փոխարէն, առողջացնում է: Ո՛հ, պարտականութիւն, դու անողոք աստուած ես. դու բովում ես հոգին, դու անգուլթ ես, բայց միայն դու ես ամրացնում մեր մէջ հըպարտ գիտակցութիւնը, որով մենք՝ թէև մի փոքր, բայց բարձր ենք այն արարածներից, որոնք միայն ծնւում են, ուտում և մեռնում: Եթէ կայ մի բան մեր մէջ անմահ, դա միայն օրինակն է, որը աւանդում են ապրողները ապագայ սերնդին. մեր պարտականութիւնը մարդկութեան արժանաւորութեան պալլադէիումն*) է, որը անցնում է սերնդէ սերունդ և մենք միշտ պիտի լինենք նրա արթուն պահապանները, նրա հաւատարիմ քուրմերը: Թէ որ բոլորը այնպէս ջերմագին խոնարհւէին այդ աստուծոյ առաջ, ինչպէս ես մանկութիւնից սկսած, ինչ տեսակ դրանք պիտի լինէր երկրի վերայ:

*) Պալլադա աստուածուհու արձանը, որը երկրնքից ընկաւ Տրոյեա քաղաքը, իբր դաւաճան այդ քաղաքի անվտանգ մնալուն:

Ծանօթ. լսարդ.

Այժմ ականջ դիր ինձ, թանկագին Վիլեամ: Երեկ առաւօտեանից ես ինձ շատ առողջ էի զգում, ամբողջ գիշերւայ ընթացքում ընդ ամենը մի անգամ միայն հազացի: Ես այնպէս դբաղւած էի իմ առողջութեամբ և այնպէս ձգտում էի հաւաքել նոր ոյժեր քո բաւականութեան համար, որ վճռեցի անմիջապէս փորձել ինձ:

Եւ այսպէս, վաղ առաւօտեան, երբ դեռ մօրաքոյրս քնած էր, մէն մենակ դուրս եկայ տանից և, զինւած զօնտիկով (նա իմ թոյլ ոտների համար ծառայում է ինձ աւելի շատ իբրեւ օգնական, քան արեւից պաշտպանելու համար.) քայլերս համարձակ ուղղեցի դէպի այն զառքայլերս համարձակ ուղղեցի դէպի այն զառքայլեր ճանապարհը, որը տանում է Ֆուլգալոյից դէպի հիւսիս, դէպի փոքրիկ Կուրալը: Այդ ճանապարհը մի շատ գեղեցիկ, բանաստեղծական անուն ունի. նրան անւանում են «caminho do foguete» կամ «փայտաշար» ճանապարհ:

Եւ ահա քո էմման կամենում էր բարձրանալ այս փամփուշտի ճանապարհով, որպէս զի բնենմ թոքերս և իւրաքանչիւր քալ նա անում էր իւր դէպի Վիլեամն ունեցած սիրուց: Բայց մենք ինչ տեսակ եսականներ ենք

դառնում, երբ սիրում ենք և մանաւանդ երբ մեր սէրը կարիք է զգում մեր առողջութեանը: Ես նայեցի զառ ի վեր բարձրաւանդակին և սարսափեցի, բայց անյապաղ աչքերս խոնարհեցրի և, քայլերս շնչառութեանս հետ յարմարեցրնելով, սկսեցի դանդաղ բարձրանալ. այգպէս գրեթէ ուղիղ հարիւր քայլ անցայ առանց նեղւելու և հազալու: Ի՞նչպէս բաղդաւոր էի, որ հասայ հետեանքի, ի՞նչպէս հպարտանում էի, որ նպատակիս հասայ, «փամփուշտի ճանապարհի» մի մասն անցնելով: Եւ այս բոլոր հերոսութիւնը քեզ համար է, թանկագին Վիլեամ: Ծանապարհը այնուհետեւ փոքր ինչ հարթ է. երկու կողմից նրան շրջապատում են քարէ պատեր, — նա ունի առւակի կերպարանք, սալալատակաժ քարերով և շրջապատւած հողաբլուրներով. արեւածաղկի (георгинъ) ամբողջ թփեր կախւած էին այդ պատերից. նոքա այնքան գեղեցիկ էին, որ ձեռքս տկամայ մեկնւեց դէպի նոցա: Սակայն գու գիտես իմ սովորութիւնը, ես չեմ կարող ծաղիկ քաղել դաշտում, կամ անտառակում ճիւղ կտրել, առանց տիրոջից թույլտուութիւն խնդրելու: Մի՞թէ մեր պարտականութիւններից մէկն էլ այդ չէ:

Տիրոջը եկար փնրելու հարկ չեղաւ: Ես մի քանի քայլ էլ առաջ գնացի և պատի մէջ տեսայ մի փոքրիկ կանաչ դռնակ. նա կիսաբաց էր, իսկ նորս լետեում երևում էր սիւնաքարի արտը: Բարձր, սուերաշատ բանանների մինդրի արտը: Բարձր, սուերաշատ բանանների մէջ ընկած ճանապարհը տանում էր դէպի համեստ, բայց գեղեցիկ, կանաչագոյն փեղկերով (жальони) և բացմոխրագոյն պատերով տնակը:

Տան առաջ երևում էր մի փոքրիկ բակ, որտեղ մի քանի հաւեր ագահութեամբ քրքրեցում էին իրենց նախաճաշը, իսկ մի կողմում բուսած էր բարձր թփեր, որը տարածել էր, բուսականին մաքուր տեղի վրայ, զովարար սուեր: Յենւելով դուռնը ես կանգնեցի ոտիս թաթերի վերայ, որպէս զի տեսնեմ այնտեղ արդեօք մարդկային շունչ չի երևում և հենց իսկոյն տեսայ այն, ինչ որ որոնում էի:

Թղենու տակ, ծղնոտի բազկաթուռի վերայ, մէջքը ինձ դարձրած, նստած էր մի հասակաւոր մարդ՝ շապկանց: Նա, ըստ երևութին, ուշի ուշով նայում էր մի ինչ որ բանի, պարկած նորա ծնկների վերայ, որին ստկայն ես չէի կարողանում տեսնել: Եթէ ես տեսնէի նորա երեսը, հենց իսկոյն կորոշէի, կարող եմ ես արդեօք դիմել նորան:

ծաղիկներ խնդրելու համար. բայց ոչ նորա ուսերը, ոչ անդրավարտիքի գոյնը և ոչ նորա կոշիկների ձևը չէին տալիս ինձ բաւականին հիմք, որ եզրակացութիւն դուրս բերէի, թէ ինչպէս կհանդիպի նա ինձ: Այդ պատճառով ես դանդաղում էի և զօնտիկիս ծալրով ուշի ուշով աւազի վրայ նկարում էի բազմաթիւ մեծ ու փոքր «Վ» յուսալով, որ շուտով այդ մարդը երեսը դէպի ինձ կգարձնի և ինձ կնկատի:

Բայց արեւածաղիկները չափազանց գեղեցիկ էին, իսկ ես գտնւում էի ուրախ և չարաճճի դրութեան մէջ, ինչպէս փոքրիկ երեխայ: Այդպէս գրգռել էին ինձ առաւօտեան օդը և բլրի վրայ լաջողակ բարձրանալը: Ես չկարողացայ ինձ զրսւել և վատ փորթուգալեան լեզւով, դողդոջիւն ձայնով վերջապէս սիրտ արեցի խօսել այդ անշարժ մարդու հետ. —

«Ներեցէք, յարգելի պարոն.»

— Ո՞վ է այդտեղ:

Հարց տալով նա դարձաւ և ինձ նայեց. նորա ծնկների վերայ կար մի տասը տարեկան երեխայ, որը ըստ երևութին քնած էր:

«Ի՞նչ հոտաւէտ և գեղեցիկ արեւածաղիկներ կան ձեր այգու պատի վրայ. նոքա ինձ մեղքի

մէջ բցեցին և ես եկայ ձեզ հարցնելու, արդեօք կարո՞ղ եմ քաղել մի քանի ծաղիկ»:

— Նոքա բոլորը ձեզ են պատկանում, օրիորդ, ես մինչև անգամ չգիտէի, թէ նոքա ծաղկել են: Քաղեցէք նոցանից, որքան ցանկանում էք:

Այդ ժամանակ ես ուշադրութեամբ նայում էի ինձ հետ խօսող մարդուն և երեխային և իմ կայտառ ուրախութիւնը արագ փոխւեց խոր տխրութեան: Իմ առաջ, անկասկած, մի մեծ անբաղդութեան պատկեր կ'որ:

Արեւածաղիկների տէրը, ինչպէս երևում էր, Մադերայի հողագործ էր. դա մի լայնաթիկունք տղամարդ էր. նորա դէմքի տարչինի գոյնը սաստիկ տարբերւում էր նորա աւելի տարչինագոյն պարանոցից, որը ոչնչով չէր փաթաթւած: Բայ օձիքը և բաց շապիկը ցոյց էին տալիս, որ նա ոչ մի ժամանակ չէր վախենում արեւից: Նորա երկարաձև դէմքը սև մորուքով և արծւի քթով, ունէր բաց արտայայտութիւն. իսկ կրնճիւնները, յատկապէս ճակատի վրայինները, աւելի բազմաթիւ էին, քան սպիտակ մազերը: Բնաւորութեան կողմից նա, անկասկած ուրախ և միամիտ մարդ պիտի լինէր, բայց այժմ նորա վերայ դրօշմւած էր խորը հոգսի կնիքը: Նորա

կնճիռները, որոնք խոր ակոսներով գուգահեռաբար բարձրանում էին օնքերից դէպի ճակատի մէջ տեղը, երբէք չէին հարթւում: Բայց և այնպէս, ոչ այդ ակոսները ոչ և այդ ահռելի կընճիռները չէին արգելում նորան լինել քաղաքավարի:

— Նստեցէք ահա այստեղ, օրիորդ: Երևի դուք յոգնել էք: Գուք այնպէս ծանր էք շընչում, կամ, կարող է պատահել, ձեր կոճիճքն է ցաւում:

Մի քանի լուսնից յետոյ, նա, այնպէս էր թւում, արգէն նկատեց իմ ինչ հիւանդութիւն ունենալս. նրա ձայնը սկսեց աւելի մեղմանալ և նա աւելի ուշադրութեամբ սկսեց վերաբերել դէպի ինձ: Նա իմ առաջը դրեց մի աթոռ, որը դրւած էր հէնց այնտեղ կարգով, առանց վերցնելու երեսային իր ծնկներից, որին նորա ուժեղ և մազոտ ձեռները բռնել էին ինչպէս մի տիկին (кыкла): Ինձ ահամայ քաշում է այն տեղը, որտեղ ես տեսնում եմ չարչարողի, որտեղ հոգս եմ ենթադրում և ես մնում եմ, ինչպէս մեխած մի ինչ որ անյաղթելի, ձգողական ուժից:

Ես նստեցի և մոռացայ արեւածաղիկները,

որոնք շուրջս տարածում էին հրաշալի անուշահոտութիւն:

«Այո, իմ կուրծքը ցաւում է. ես եկել եմ Մադերա—բժշկւելու. գրեթէ մի ամբողջ տարի է արգէն, որ ես այստեղ եմ և զգում եմ, որ բաւական լաւ եմ այժմ»:

Նա, հաւանական է, չլսեց իմ այս վերջին խօսքերը և ձախ ձեռքով խփելով իւր ճակատին, բարձր գոռաց. —

— Ո՛հ, անիծեալ հիւանդութիւն. ամեն ժամանակ և ամեն տեղ թոքախտ: Ինչո՞ւ ամենակարող, իմաստուն Ստեղծողը տւեց մեզ թոքեր ծծող թղթից աւելի թույլ: Գուք, օրիորդ, կառողջանաք, դրանում կասկած չկայ, բայց ես, ե՛ս...

Նա հոգոց հանեց և նայեց երեսային, որին, նրան հետեւելով, նայեցի և ես: Երեսան միայն լոկ շապկով էր, գունատ, լղար. նորա մաքուր ձեռքերն ընկած էին կրծքի վերայ, որը ուժգին ցածրանում ու բարձրանում էր դժւար շնչառութեան պատճառով: Նորա հրեշտակային դէմքը ներկայացնում էր լատինական և անգլիական ցեղերի գեղեցկութեան խառնուրդ. փոքրիկ, կլորիկ դնչիկ, փորդագոյն, բայց

չոր ու կիսափակ շրթունքներ, նուրբ քիթ, սև, նկատելի խիտ լոնքեր և երկար արտևանունքներ, որոնք երբեմն փակուում էին, երբեմն բացուում, ցույց տալով սև, տենդորէն թափառող, աչքերը: Շէկ մազերի մի ամբողջ հեղեղ թափւած էր ճակատից ցած: Այդ բոլորը միասին ներկայացնում էին ներկերով հարուստ մի պատկեր, որը ակամայ և երկար ձգում, բեւեռում էր իւր վրայ մարդու հայեացքը:

— Ահա, իմ Դուրդեսը, վերջինն է. նա միակն է, որ մնացել է ինձ մօտ: Ես նորան անւանեցի Դուրդես, որովհետև նա աշխարհ եկաւ մօր մահից մի քանի օր առաջ: Այո, օրհորդ, ես կորցրի կնոջս, երեք որդիներիս և երկու աղջիկներիս, նոքա բոլորը թոքախտից մեռան:

— Ես չկարողացայ ուղարկել իմ որդիներին Մադերա, որպէս զի նոքա առողջանան, աւելացրեց նա զարհուրելի ծիծաղով. նոքա ծընւեցին իմ տան մէջ Մադերայում և Մադերայում էլ մեռան:

Այդ ժամանակ յանկարծ զարթնեց Դուրդեսը իւր տենդային քնից, նստեց հօր ծնկների վերայ և սկսեց հազալ և հազում էր այնքան ուժով, որ նորա թշերը կարմրեցին, իսկ չա-

րչարւող աչքերը լցւեցին արտասուքով:

«Նայեցէք, տա էլ է գնում նոցա յետեից. անիծեալ թշառութիւն»:

Բայց երեսփայի տանջանքը այնքան մեծ էր, որ հօր բարկութիւնը երկար չէր կարող տևել. թշառը թեքւեց դէպի աջ. հրեշտակային գէմքը և սկսեց այրւած համբուրել. Երբ նա բարձրացրեց գլուխը, նորա աչքերը կարմրել էին և լիքն էին արտասուքով:

«Ես տգէտ մարդ եմ, գիւղացի մէկը, որ կարող է տնկել խաղողի ուրթեր և գետնախնձոր. բայց տասներկու տարի է արդէն, որ իմ տանից հիւանդներն ու մեռելները անպակաս են. բայց երգւում եմ Աստուծոյ մէկ անուանով, իմ սիրտը (և նա այնպէս ուժգին խփեց բռունցքով իր կրծքին, որ քիչ մնաց ճաքէր) դեռ չի քարացել, ես գեռ ևս կարող եմ արտասուել»:

— Դուք շատ անբաղդ էք, բարի մարդ, ապացի ես, բայց Դուրդեսը կառողջանայ: Թոքախտոտ ընտանիքում մեռնում են ոչ բոլորը: Ես էլ ունէի տասնութեկ եղբայրներ ու քոյրեր, որոնք բոլորը մեռան թոքախտից. բայց ես արդէն քսան և հինգ տարեկան եմ և յուսով

եմ, որ կառողջանամ, Դուրըսը թող կլինի
և յաճախ կհազայ, բայց նա կառողջանայ, նա,
հաւատացէք, կառողջանայ:

«Յուսով եմ, որ այդպէս կլինի: Ինձ համար
շատ խիստ կլինէր, եթէ ստիպւած լինէի գորկ-
ւել իմ բոլոր որդիներից:

Եթէ ես ստիպւած կլինեմ թաղել և սորան,
այն ժամանակ ես կայրեմ տունս և նաւաստի
կգրեմ հենց առաջին պատահած նաւում, որը
կողայ դէպի Ամերիկա, Փորթուգալիա, կամ,
բոտ լիս, թէկո՛ւզ նոյն իսկ դժոխքը... ներողու-
թիւն օրիորդ»:

— Բայց ի՞նչպէս պատահեց, որ դուք, ապրե-
լով մի այնպիսի երկրում, որտեղ թոքախտ
շատ հազիւ է լինում, մանաւանդ քիչ թէ շատ
հարուստ մարդկանց շրջանում, դուք այդքան
թշուառութիւններ կրեցիք:

«Պա մի շատ տխուր պատմութիւն է, իմ
բարի օրիորդ և, տեսնում էք արդեօք, ես
այդ պատմում եմ բոլոր պատահողներին, որ-
պէս զի նա կարողանայ օգուտ բերել նոցա,
որոնց համար նա կարող է դեռ խրատ լինել:
Դուք էլ դեռ ամուսնացած չէք:

— Ոչ:

«Շատ լաւ, այն ժամանակ իմ պատմու-
թիւնը կարող է իբրեւ դաս ծառայել և ձեզ
համար: Տեսնում էք, դուք ունէք նեղ կուրծք
և նուրբ կազմածք. դա իմ սիրտը միանգամից
փափկացրեց, որը երբեմն անմատչելի է մնում
ամբողջ օրերի, շաբաթների և մինչև անգամ
ամիսների ընթացքում: Յաճախ իմ դարդի հետ
փակում եմ տանը և ման եմ գալիս Դուրըսի
հետ, բռնած նորա ձեռքից և յաճախ ձեռ-
ներիս վրայ առած, դատարկ սենեակներում:
Իմ տանս մէջ տասներկու սենեակ կայ և նո-
քա բոլորն էլ դատարկ են, բացի այն սենեա-
կից, որի մէջ քնում եմ ես աղջկանս հետ,
ուտում եմ և ընդհանրապէս ապրում: Դուք
հասկանո՞ւմ էք ի՞նչ տեսակ անապատում եմ
անցկացնում իմ ժամանակը: Եւ ինձ շատ ա-
խորժելի է, որ ձեր մէջ գտնում եմ այն էա-
կին, որին կարող եմ հաղորդել իմ դարդերը:

Գիտէք, ես դեռ ևս քառասուն տարեկան
եմ, չնայելով իմ սպիտակ մազերին և խորշոմ-
ներին. շատերը ինձ համարում են լիսուն տա-
րեկան և դեռ աւելի: Եւ ես դորա վերայ
չեմ զարմանում. աւելի տարօրինակ է այն, որ
եւս դեռ ապրում եմ. ի հարկէ դա միայն Պո-

լորէսն է, որ չի թողնում ինձ մեռնելու:
 Ես էլ երբեմն քսան տարեկան էի, և հեծ-
 նում էի Մադերայի ամենավառվառն ձիերը:
 ինձ շատ զւարճութիւն էր պատճառում ա-
 ռանց թամբի թռչկոտել հէնց անդունդների
 եզերքների շաւիղներով և քշել, որքան քէֆդ
 կտայ, դէպի ներքե, թիք զառկայրով, մի
 ձեռքով բռնած բաշից իսկ միւսով-պոչից ես
 հաւատացած էի, որ չեմ ընկնի: Ինչքան էի
 ուրախանում ես, երբ գլուխս սկսում էր պտոյտ
 գալ, իսկ քամին ցրւում էր մազերս և շրւ-
 շրւացնում էր ականջներումս: Ես ուժեղ էի,
 այնպէս որ յաճախ, խլելով մշակի ձեռքից բա-
 հը, ինքս սկսում էի աշխատել, մինչև որ քըր-
 տինքը առւակներով թափւում էր իմ ուսե-
 րից: Հօրիցս ես ժառանգեցի սէր դէպի ազատ
 դաշտային կեանքը: Ես առում էի քաղաքը և
 գիւղը և անդադար դիմում էի մի մի քան
 դաշտերը կամ դափնիների սուէրները:

Ինձ երբէք չէին հրապուրում կանացի դէմ-
 քերը: Ես, չգիտեմ ինչո՞ւ, մէկին դուր գալը հա-
 մարում է յետևել քաջ գալ (ухаживание)
 և քաղքի կոտորատել (городское же-
 манство): Իմ ջղերը կարծես տենդի մէջ էին

գտնւում և պահանջում էին անընդհատ գոր-
 ծունէութիւն: Իմ ուժեղ կուրծքը ճանաչում
 էր միայն ամենամաքուր օդը: Ամենաբարձր
 լեռների կղզիացած գագաթները ինձ չէին սար-
 սափեցնում, իսկ մի քանի ժայռերի վրայ եղել
 եմ միայն ես և մէկ էլ արծիւը:

Սէրը ինձ ընդգրկեց յանկարծ, ինչպէս փա-
 լակ, ինչպէս մի գնդակ, որ թափանցում է ու-
 ղիղ կրծքի մէջ:

Մի անգամ ես գնացի Փունգալօ և ման էի
 գալիս նաւահանգստում, սպասելով բարեկա-
 միս, որի հետ մտադիր էինք ծովով գնալ Պօր-
 տօ - Սանդօ: Ինձ տանջում էր անհամբերու-
 թիւնը, որ բարեկամս ստիպում էր ինձ այդ-
 պէս երկար սպասել իրեն և ես սկսեցի շւշաացը-
 նել, երբ յանկարծ տեսայ իմ առաջ մի
 փոքրիկ կառք: Նորա մէջ նստած էր մի
 ինչ որ գունատ մարդ, որին ես անպատճառ
 մեռած պիտի կարծէի, եթէ նորա աչքերը բաց
 չլինէին: Կառքիկը լետեից հրում էր մի ջա-
 հիլ աղջիկ. նա յաճախ թեքւում էր և սիրով
 հարցնում էր թշառ մեռնող կնոջը՝ արդեօք
 մի որ և է բան չի ցանկանում:

Այդ աղջիկը գուցէ աղախին էր. բայց ինձ

Համար բոլորը մէկ էր: Ես յիշում եմ միայն, որ տեսնելով նորան, ես ինձ զգացի երկինք տարւածի նման. ես միանգամից սիրահարւեցի նորա կապոյտ աչքերի, խիտ, շէկ մաղերի, վարդազօյն այտերի վրայ, այնպէս որ, երբ իմ բարեկամը եկաւ հրացանը (ВИНТОВКА) ձեռին, ես լսել անգամ չէի ուզում մեր որսի մասին:

Այդ առաջին կինն էր, որի աչքերի մէջ ես ուղիղ նայեցի և ինձ թւում էր, որ չեմ կարող այլ ևս առանց նորան ապրել. իմ սէրն այնքան բուռն էր, այնքան վարակիչ, որ ութ օրից լետոյ Ջեսսին էլ սիրահարւեց ինձ վերայ:

Նա աղախին էր, բայց անգլիացի աղախին. խօսում էր երեք լեզուով և շատ կարդացել ու գրել էր: Նորա սիրտը շատ բարի էր և նա թափառում էր իւր տիրուհու լեռնից, որին չէր թողնում ոչ ցերեկը և ոչ գիշերը և, որի վրայ, բառացի ասած, սիրահարւել էր: Այստեղ մեզանում բոլորը այն կարծիքին են, որ թոքախտը տարափոխիկ չէ, բայց ես գիտեմ, որ իմ Ջեսսին, գեղեցիկ և թաքմ ինչպէս վարդ Ջեսսին վարակւեց իւր տիրուհուց և գիտեմ նոյնպէս, որ երբ նա մեռաւ և ես կամենում

էի ամուսնանալ Ջեսսիի հետ, այդ ժամանակ նա հիւանդացաւ և Գուրգալօյի բժիշկները նորա հիւանդութիւնն անւանում էին կրծքային փռչալու. բայց դա իսկապէս թոքախտ էր: Նա այդ ժամանակ հիւանդ պառկեց երկու ամիս և այդ օրւանից երբէք չուղղւեց. նա ուտում էր, մօն էր գալիս, բայց միշտ մնում էր սառտիկ լղար ու թոյլ և երբէք չէր դադարում հազալուց:

Չնայելով այս բոլորին, Ջեսսին միշտ կայտառ էր, ինչպէս ձուկ և անգաղար ասում էր ինձ, որ նորա լղարութիւնը կանցնի նրանով, որ ինձ սիրում է: Իմ հայրը միշտ պնդում էր, «Սեբաստիան, Սեբաստիան, այդ աղջիկը քեզ համար չէ ստեղծւած, նա շատ քնքոյշ է, դու շուտով նորան կկորցնես և քո երեխաները հիւանդոտ կլինին: Սեբաստիան, գնա Լիսսաբօն հօրեղբորդ մօտ, մոռացիր Ջեսսիին. ես ասան անգամ սիրահարւել էի, նախ քան քո մօր հետ ամուսնանալը. և միթէ դու իրաւ ցանկանում ես ամուսնանալ քեզ պատահած հէնց առաջին աղջկայ հետ»:

Հայրս ճշմարիտ էր ասում. և նոյն իսկ ոչ մի բժիշկ խորհուրդ չէր տալիս ինձ այդ ամուս-

նութիւնը իրագործել: Բայց ինչ օգուտ են բերում մեզ այդ բժիշկները: Նոքա ապրում են, կարծես միայն նրա համար, որպէսզի չարչարեն հիւանդներին և ոչ թէ նրա համար, որ պահպանեն տուղջների տուղջութիւնը:

Մենք սաստիկ սիրում էինք միմեանց: Մենք պատկեցինք: Ջեսսին իսկոյն յղացաւ, հազը ընդհատեց և նա մի փոքր ուղղւեց. ես ինձ մահկանացուներից ամենաերջանիկն էի համարում. բայց ահա սկսեց ծնունդները և այդ ժամանակից Ջեսսի կեանքը ներկայացրնում էր մի դանդաղ կռիւ մահւան հետ:

Իսկ ես, նկատելով, որ նա աւելի լաւանում է չղութեան շրջաններում, հա ուզում էի, որ շատանան երեխէքս: Ոչ մի բժիշկ չտասց ինձ, որ իւրաքանչիւր երեխայ նորան նոր հարւած է բերում և մօտեցնում գերեզմանին:

Մագերայի առողջ կլիման պահեց նորան. նա ինձ հետ միասին ապրեց ութ տարի: Անգլիայում նա կմեռնէր անկասկած, հէնց մի քանի ամսից լետոյ. մեր կղզու երկինքը պարգևում էր նորան երկարատեւ և տանջանքներով լի ճգնաժամ:

Եւ ոչ միայն իմ Ջեսսին, բայց և իմ բոլոր

որդիները կորան... Նոքա բոլորն էլ մօր նման էին. նոցանից ոչ մէկը չունէր իմ ուսերը իմ երկաթէ թոքերը:

Եթէ դուք նրանց տեսնէիք: Ինչպէս գեղեցիկ էին նոքա: Նոքա բոլորը նման էին Դոլորէսին, իսկ մի քանիսը դեռ աւելի գեղեցիկ, շէկ, վարդագոյն, խելօք, սիրելի:

Ահա արդէն քսան տարի է, ինչ ես ամուսնացել եմ. այդ քսան տարւալ ընթացքում կարգով իմ տունը ներկայացնում էր հիւանդանոց և գերեզմանատուն: Ես հիւանդապահ էի կնոջս ու երեխաներիս մօտ, ես ինքս էլ թաղել եմ նրանց բոլորին...

Հասկանում էք դուք, ինչ է նշանակում ունենալ մի մեռնող երեխայ անկողնում, իսկ միւսը արիւն թքող, պառկած այգում, ծառի տակ, որովհետեւ նա այնքան ուժ չունի, որ կարողանայ տեղիցը շարժւել: Դիտէք դուք, ինչ է նշանակում նստել սեղանի առաջ և կարգալ, յուսահատ դէմքով, օրհասական հիւանդութեան առաջին նշանները իւր որդոց գէմքի վերայ: Հասկանում էք արդեօք ինչ է նշանակում գիշերը քնած, լսել յանկարծ իւր որդիներից ամենապնդակազմի հազը, նորա հազը, որը,

ըստ երեւութին, բնդհանուր աղետից ազատ-
 ւելու բոլոր նշանները (ПАВСТВО) ունէր: Դուք
 պարզ երեակալում էք այն գրութեան սարսափը՝
 ապրել կենդանիների և մեռնողների մահու-
 տանջանքների (agonia, agonia) մէջ, ծիծա-
 դել, որպէսզի հանգստանան վախկոտները և սը-
 տել, խափել այսօր, խափել վաղը, խափել օրէցօր,
 խափել և՛ հիւանդներին և՛ առողջ որդիներին,
 որովհետեւ վերջինները սկսում են վախենալ,
 որ իրանք էլ հիւանդ են և իւրաքանչիւր օր
 հնարել նոր, գեռ աւելի սոսկալի ստեր:

Հականում էք դուք այն բոլորը: Կարգացել
 էք արդեօք հին գրքերում սորանից աւելի սար-
 սափելի տանջանքների մասին:

Մէկ անգամ, ես դեռ լաւ յիշում եմ, այդ գեկ-
 տեմբեր ամսին էր, յորդ անձրեւ էր գալիս և խո-
 նաւ ցուրար անցնում էր մինչև ոսկորները,
 ես որդիներիս հետ վերադառնում էի գերեզ-
 մանատնից, ուր մենք տարել էինք թաղելու մեր
 փոքրիկ սիրուն Եղիսաբէթին, տասնհինգ տարե-
 կան աղջկան: Սրդ ժամանակ մենք չորս հոգի է-
 ինք՝ ես, Ռոբինսոն, Դոլորէսը և Միքայէլը: Մեր
 վրայի հագուստները աչնպէս թրչւեցին, որ
 կարելի էր մզել, (քամել) բայց ոչ ոք մի խօսք

անգամ չէր ասում: Հէնց այն ժամանակ, երբ
 մենք բարձրանում էինք նոյն իսկ ճանապարհով,
 որով դուք էլ եկաք, Միքայէլը յանկարծ սկսեց
 հազալ. հազը չոր էր և տևողական. նա թաշ-
 կինակը դրեց շրթունքներին, նայեց և գունա-
 թափւած, բայց ծիծաղելով, ցոյց տւեց քրոջը՝
 Ռոբինսոնին. թաշկինակն ամբողջ արիւն էր
 դարձել:

Ես գալիս էի յետեից և բոլորը տեսայ: Ռո-
 բինսոն անակընկալ դարձաւ ինձ և լացով ու
 հառաչանքով բացականչեց — «Հայրիկ, հայրիկ,
 միթէ մենք բոլորս պիտի մեռնենք, միթէ
 ճշմարիտ մենք բոլորս կմեռնենք»:

Ես ինձ չկարողացայ պահել և ընկալ այն
 պատի վրայ, որ պատում է ճանապարհը: Ռոբի-
 նսոն, Միքայէլը և փոքրիկ Դոլորէսը շրջապա-
 տեցին ինձ և գրկեցին իմ ծնկները. Դոլորէսը լա-
 լիս էր, չիմանալով ինչու, իսկ Միքայէլը համ-
 բուրում էր ինձ և աղում «Հայրիկ, էդ ոչինչ, ես
 վիրաւորեցի ընդերքս, արիւնը միայն ընդերքիցս
 է»: Բայց անցաւ մի տարի, բարի օրիորդ և մենք
 թաղեցինք նոյնպէս և Միքայէլին և տուն վե-
 րադարձանք արդէն երեքով:

Թող անիծւած լինեմ ես, երիցս անիծեալ:

Այժմ մնացել է մօտ միայն Դուրդեւը, բայց նորան էլ կթաղեմ Զեսսիի կողքին և հրամայում եմ ինձ կենդանի թաղել իմ որդիների մօտ: Թող անիծւած լինեմ ես: Ոչ ոք իրաւունք չունի աշխարհ գուրս բերել հիւանդոտ երեխաներ: Ո՛հ, ո՛հ: Ոչ ոք իրաւունք չունի կեանք տալ այնպիսի էակների, որոնք մեռնում են մանուկ, ջահիլ, ուրախութեան և յոյսերի հասակում:

Ո՛հ, կեանք: Դա մի սոսկալի բեռ է: Պէտք է ունենալ ոյժ և աւողջութիւն, որ կարելի լինի տանել նորան: Կեանքը ամենևին բարի պարգև չէ, այլ բեռ և տանջանք...

Իսկ դուք, բարի օրիորդ, դուք գուցէ նույնպէս թոքախտոտ հօր կամ մօր աղջիկ էք»:

Թանկագին Վիլեամ, այս խօսքերի միջոցին ես վեր թռայ և ինչպէս խելագար, գոռացի. «Բաւական է, բաւական. դուք կսպանէք ինձ ձեր երեխաների հետ»:

Եւ ես արագ փախայ այդ այգուց դէպի տուն և հեկեկալով ընկայ մօրաբօջոյ գերկը, որը գուրս եկաւ իմ հանդէպ:

Վիլեամ, ես ցանկանում էի այս բոլորը քեզ հաղորդել և ինձ պարտականութիւն եմ համարում անել այդ:

Լոնդոն Օգոստոսի 3-ին

Վիլեամ մեր էմման մեռավ: Ես չեմ կարողանում գտնել մի ուրիշ ար-

տահայտութիւն, չեմ կարողանում մտածել մի որևէ ցաւակցական նախադասութիւն, որպէսզի ծածկեմ քեզանից այս սարսափելի եղելութիւնը: Ոհ, Վիլեամ, դու, որ այնպէս

սիրում էիր նորան, դու, որ յաւիտյան պիտի ապրես այդ հրեշտակի մասին ունեցած յիշողութիւններով, կըմբռնես իմ կողմութիւնը ինչու՞ համար տողերի մէջ ծածկեմ սարսափելի լուրը: Ինչու՞ լռեմ նրա մասին մինչև նամակիս վերջին երեսը: Ես հաւատացած եմ, որ դու, նամակը բանալով, գերեզմանի հօտ կըզգաս և միևնոյն է՝ ինձ չի յաջողւիլ քեզ խօսել:

Գուցէ ես կարողանայի դեռ ելի մի քանի ամիս թագցնել քեզանից առաջ այդ սարսափելի լուրը, բայց լռութիւնն աւելի մեծ անգթութիւն կըլինե՞ր իմ կողմից: Նա խոստացել էր քեզ ճշտութեամբ առաջ տանել նամակագրութիւնը, այն ինչ դու ոչ

մի տող չէիր ստանայ նորանից:
 Կայ մի աւելի զարհուրելի բան,
 հէնց նոյն իսկ մահաւանից՝ դա են-
 թատրուօթիւնն է մահաւան մասին:
 Մեր էմման, արդէն տասն և չորս Օր է,
 է հանգչում է մայրիների անտառում
 մի փոքրիկ կամրջի մօտ և միայն
 այսօր, աչքիս առաջ ունենալով թղթ-
 տար շոգեհաւի մեկնելն, ես, երկար
 կուլից յետոյ, գրիչն առայ ձեռս,
 որպէսզի գրեմ քեզ, Վիլիամ: Ով որչի
 հաւատում Աստծուն, նա ինչպէս կարող
 է ապրել: Մենք ի՞նչպէս կարող էինք
 ապրել, զգալով որ մեր սրտից կտ-
 րում են մի կտոր. ի՞նչպէս կարող
 էինք մենք քաշ տալ մեր գոյութիւնն,
 եթէ չյուսայինք, որ մի ժամանակ
 պիտի տեսնիենք մեր մերձակորներին
 և սիրելիներին հետ:

Ես կարդացել եմ, որ հաբեշները
 ողջ կենդանիներին պոկում են մսի
 ամբողջ կտորներ և գործածում իբ-
 րե կերակուր: այդպէս նորա խեղճ
 կենդանիներին ամենայն Օր մասմաս
 կտրատում են և տանջում, մինչև որ
 նոցանից մնում են կիսամեռ կիսակե-
 նդան ոսկորներ և փորոտիք: Բայց մթե
 մենք մեր կեանքում բոլորովին նը-
 ման չենք հաբեշստանի այդ եղանակին:

ընդին նման չենք հաբեշստանի այդ եղան-
 ակին: [Չենք կորցնում ժենք աստիճանաբար մեր
 ամենասուրբ մտերմական կապերը: Միթէ նա,
 երկար ժամանակ ապրում է, աստիճանաբար
 դառնում մի կմախք, արտնայ մսի և կենդա-
 յի ոյժի, կմախք, որ միայն, ըստ իւր հին սո-
 լութեան, քաշ է տալիս իւր ողորմելի գո-
 լութիւնը:] Ես այսպէս զատ ըմբռնեմ
 Վիլիամ, լաւ միտդ պահիր, քո էմման մե-
 ռա հաստատ համոզւած, որ քեզ կտեսնի մի
 աւելի լաւ աշխարհում: Նա փոկեց իւր աչքերը
 հանդիստ և զւարթ: Նա հաստատ հաւատում
 էր, որ դու կդիմադրես այդ սարսափելի ցաւին,
 որ դու ինքնակամ ոչ մի բոպէ չես կարճիլ քեզ
 նախատահմանւած կեանքը:

Ես ընդ միշտ կողբամ իմ էմմային, որին
 սրազատ ազգկանս պէս սիրում էի, բայց, ար-
 ասուք թափելով հանդերձ, ես միշտ կպահեմ
 այժմու յօյս, որ մի ժամանակ կտեսնեմ նորան:
 Ի՞նչ ևս, Վիլիամ, պիտի ողբաս նորան, նոյն-
 յիսի յօյս տածելով: Վերագարձիր Անգլիա, որ-
 յիսդի համբուրես նորա գերեզմանը, դարձիր
 դ մօտ:

Ես մենակ մնացի՝ շառաւիղ այն բազմաթիւ

տոհմի, որ ոչնչացաւ մի քանի տարւայ մէջ: Դու
իմ որդեգիրն ես. ապրիր այսուհետեւ ինձ հետ:
Արի միխիթարեւոյ թշուառ պառաւիս, որը մէկ
մենակ ապրում է ամալի պալատում և, իւր քաջ
լերի ձայնը լսելով, վախենում է: Ամբողջ տա-
րիներ արդէն այստեղ չէր լսում երեխաների
ուրախալի աղմուկն ու աղաղակը: Բայց մի տարի
սրանից առաջ տունը լցեցաւ նոր կեանքով.
այնտեղ, ուր շարժւում էր այդ հրեշտակը, ուր
նա շնչում էր, այնտեղ մշտադալար այգի էր:

Նորա բերանից արտասանւած իւրաքանչիւր
խօսքը բանաստեղծութիւն էր, նորա շրթունք-
ների իւրաքանչիւր ժպիտը մի համբոյր էր: Նո-
րա, այդ տխուրի, հիւանդի և տանջուողի միակ-
զարճութիւնները, ընդհանուր էին այն ամեն-
քի հետ, որոնք մօտենում էին նորան...

Արի, Վիլեսամ և ժառանգիր սէրն ու վիշտը
նա քեզ և միայն քեզ է պատկանում, մին,
քո գալը նորան ոչ ոք չի կարող պղծել: Եւ
արգելեցի տունը մուտք գործել բոլոր հեռ-
քրքիրներին, բոլոր հեռաւոր ազգականները
և բարեկամներին: Այն տունը, որի մէջ ապ-
րո էմման իւր վերջին օրերում՝ քեզ և մի
այդ է պատկանում: Թող տունը ինձ միայ-

297
որ քո գերեզմանատան պահապանը
Լինեմ: Դու կգտնես նորա ընտանիքը
բաց և պիպերտի վերայ այն պիեսը,
որ նա նվագեց վերջին անգամ: Դու
կգտնես նորա մահակալի մոտ, որի
մեջ նա մեռավ, բաժակում նորա
թառամած, բայց դեռ ես անուշաբույ-
սաղիկները: Դու կտեսնես նորա ժա-
մացույցը, որը կանգնել է նորա
մահակալից 7 ժամ ցետոյ, դու դեռ
կենդանոյն կգտնես նորա դեղձանիկը
նորա մուրճերտի վերա դու կգտնես
դեռ չվերջաւորաց նկարը: Դու կը-
գտնես անձեռնամուխ եղած նորա
շորերը, նորա սիրած գրքերը, բո-
ւոր այն գեղեցիկ առարկաները, ո-
րոնցով նա սիրում էր շրջապատել
իրան: Դու կգտնես ամեն բան,
միայն ոչ էմմային, որը նա խաղա-
ղությամբ հանգչում է պարտիզում,
հոր կողքին: Արի Վիլեսամ, չլինի
թե կամենաս մեռնել հեռու երկրու-
Օտարների մեջ,

որոնք քեզ չեն հասկանում, այն

մարդկանց մեջ, որոնք չեն ճանա-

չում նորան: Արի, ներշնչիր քո էմմայի

վերջին շունչը. նա ապրում էր մի-

այն քո սիրուն, միայն քեզ համար:

Մեր էմման զգում էր մահվան

յոտենալն և վախենոյում էր նրանից,

չնայած իւր բոլոր հաստատամտութեանը

վերջին Օրերում նա խոյս էր տալիս

մենակ մնալուց, բարկանում էր եմբե-

ամեն մի չնչին բանի համար աղախնի

վրայ, իւր ընկերուհու վրայ և շա-

րունչակ գրգռւած էր: Մի որ սովորաբար

այնպես էր համբերող, սաստիկ հայհո-

յում էր աղախնին, բայց դորանից յե-

տոյ զղջում էր և թողութիւ խնդ-

րում:

Նա պնդում էր, որ լաւ է զը-

գում իրան, բայց հազում էր առաջ-

վանից շատ և ախորժակը կորցրել էր:

Նա մի քանի խոսք ասելով յոգնում

էր, ամենաաննշան բարձրության վրայ

եւնեւիս շնչասպառ էր լինում: Ես
առաջարկեցի նորան՝ կանչել բժշկին.
բայց նա բարկութիւնից կորցրեց ի-
րան. ամբողջ երեսը ըրպեպես կարմ-
րեց և ես վախեցայ, մի գուցէ ջերմն
արդեն բռնել է նորան: Բարկացած, ան-
հանգիստ և ամեն բանից անբաւական,
նա պառկեց անկողնում:

Թանկարժեք անակընկալ կերպով

բարձրացաւ և նորից ընկաւ գլուխը
բարձերի մեջ, մի ինչ որ սարսափով:
Մի ժամայ ընթացքում նա բազմա-

թիւ գործ էր կատարում, կարդում
էր, գրում, նւագում էր դաշնակի
վրայ, փորձում նկարել, լրագիր էր
պահանջում, քրքրում էր մզտենադարանը:
Բայց նորան ոչինչ չէր բաւականաց-
նում:

ւակնացնում:

Ր Օրւալ ամենաշոգ ժամերին նա այնպէս էր
 Ր յոգնում, որ գուրս չէր գալիս սենեակից. ես
 ա տեսնում էի, որ նա տանջւում է, բայց չէի կա-
 րողանում մխիթարել նորան: Ես փորձեցի ամեն
 բան, որպէս զի պահպանեմ նորա մէջ քաջու-
 թիւնը, բայց նորան ներսից մաշող վիշտը սար-
 սափելի զօրեղ էր, ալդ պատճառով վերջապէս
 ես թողի հարցերով և խորհուրդներով նրան
 ձանձրացնելը. նա, որ միշտ կարողանում էր
 գուշակել ծածուկ մտքերն ու զգացմունքները,
 առանց խօսքերի, շնորհակալ էր լինում ինձանից
 լռութեանս համար:

Մի անգամ, այս նրա կեանքի վերջին օրումն
 էր, զգալով ինձ ոչ բոլորովին առողջ և տե-
 ղեկանալով Եմմայի մասին, իմացալ, որ նա շատ
 վաղ վեր է կացել և փաթաթւելով ծածկոցով,
 դուրս է գնացել տանից, գոռալով աղախնին.
 «Ասացէք մօրաքրոջս, որ ես ուղևորւեցի Բադ,
 առաջին գնացքով, որպէս զի այցելեմ հօրս
 գերեզմանին, և կգառնամ ճաշին:

Ամբողջ օրը ես անհանգիստ էի լինում և
 շարունակ նայում էի ժամացույցին. ինձ թւում
 էր թէ ժամանակը շատ դանդաղ էր անցնում:

Վերջապէս, մօտ ժամը չորսին, նա վերադարձաւ: Ես վազեցի նորա դէմ. նա գունատ էր՝ ինչպէս մահ եւ սարսափելի շնչագրելութիւնից չէր կարողանում ոչ մի խօսք արտասանել: Նա փորձեց ժպտալ, իբրեւ պատասխան այն հարիւրաւոր հարցերի, որոնք նա կարգում էր իմ երեսին: Եւ այդ շտապեց ննջարան եւ պառկեց գահաւորակի (кушетка) վրայ, հասակով մէկ ձգւելով, առանց հանելու ծածկոցը, գլխարկը եւ ձեռնոցները: Նորա ձեռները սառչի նման ցուրտ էին եւ միայն անընդհատ դողից ու խորը հառաչանքներից հասկացւում էր, որ նա գեռ կենդանի էր:

Ես այնպէս ուժեղ զանգահարեցի, որ լարը կտրւեց եւ հրամայեցի, ըստ կարելոյն, շուտ կանչել տնային բժշկին եւ յետոյ, աթոռներին ու պատերին յենւելով, հազիւ հազ գուրս եկայ սենեակից, հիւանդին մի ճար անելու նպատակով: Ես ուզում էի մի անգամից հազար բան անել, վրայ էի ընկնում մանանեխի, կրակի, էսսենցիայի (հոտաւէտ իւղ), պահանջում էի հրաւիրել բոլոր բժիշկներին, Լոնդոնի բոլոր դեղագործներին եւ, ամենից առաջ Վիլեամին էի փնրում. ես կարծում էի, որ այդ վարկեա-

նին դո՛ւր եւ միայն դո՛ւր կարող ես օգնել մեր Էմմային:

Մի քանի բոպէից յետոյ ես նորից մտայ սենեակը եւ լսեցի ինչպէս Ջեսսին աղաղակում էր՝ « Օրիորդը վաղճանւում է, միսս Էմման մեռնում է »:

Ես մօտեցայ մահճակալին եւ տեսայ, որ Էմման մեղրամոմի նման գունատւել է. նորա արիւնագուրկ շրթուները արիւնաշագախ էին եղել. նա պարկած էր բարձի վերայ, լճացած արեան մէջ, որը թափւած էր նաեւ մահճակալի ու գորգի վրայ: Նորա շրթուները բաց ու խուփ էին լինում, վերջին հառաչանքները արեան հետ խառնւում էին: Ես յարձակեցի դէպի նա, պինդ գրկեցի նորան եւ գոռացի « Էմման, Էմման » այնպէս բարձր, որ ինքս իմ ձայնից վախեցայ:

Էմման բացեց աչքերը, փորձեց խօսել եւ, բարձրացնելով ձեռքը, ցոյց տւեց գրասեղանը. յետոյ, հաւաքելով իւր վերջին ուժերը, մօտեցրեց շրթուները իմ ափանջին եւ սլաք ու որոշ արտասանեց քո անունը — օ, Վիլեամ: Դրանից յետոյ նա ընկաւ դէպի յետ եւ ուշքը կորցրեց:

Երկու օր ու գիշեր ես, սիրելի Վիլեամ, խելագարի նման էի. ես բաց էի անում աչքերս

միայն նրա համար, որպէս զի լամ, միայն այն պատճառով, որ համոզւեմ թէ ես թշուառ եմ և միայնակ:

Մի քանի օրից յետոյ, լիշեւով ձեռքի վերջին շարժումը, որով հմման ցոյց էր տալիս գրասեղանը ես մօտեցայ նրան սրբազան սարսուռով և արկղը բաց արի: Այտտեղ աչքիս ընկաւ քո հասցէով կնքւած նամակը:

Վիլեամ, ես այն քեզ եմ ուղարկում, ծածկելով ծրարը անվերջ համբոյրներով:

Ես նախազգում եմ, որ մեր հրեշտակը աւանդել է քեզ այդ թերթում մի սրբազան միտք, որ քո հոգու համար բաւասան պիտի լինի: Ես նախազգում եմ, որ այդ թերթը քեզ քաջութիւն կտայ կեանքի համար, ոյժ կտայ յուսոյ համար և չեմ կարող բաժանել այդ վերջին գանձից: Ես սաստիկ վախենում եմ, որ մի գուցէ, նա կորչի երկարատե ճանապարհորդութեան միջոցին: Թող հրեշտակը նորան իւր հովանաւորութեան տակն առնի և ամբողջութեամբ քեզ հասցնի ծովերի ու ովկեանոսների վրայով:

Վիլեամ, ես գիտեմ, որ իմ նամակով քեզ համար մի այնպիսի սարսափելի տանջանք եմ պատրաստում, որպիսին միայն կարող է տանել

մարդկային սիրտը, բայց չէ որ ես ևս նոյնպէս լալիս եմ և տանջւում և ապրում եմ միայն նրանով, որ սպասում եմ քեզ: Ես կհամարեմ օրերն ու ժամերը, քանի որ գիտեմ, որ դու ինձ մօտ կգաս առաջին փոստային շոգենաւով, որ դուրս կգայ Պանամայից: Իսկ մինչև այն ժամանակ բոլոր հետաքրքիրներին ու բարեկամներին հեռու կպահեմ այն տանից, ուր մեր հմման էր ապրում: Ոչ ոք չի պիտի գիպէի այն գրքերին, ծաղիկներին, նորա պիանային, այն բոլորին, որ նորան էր պատկանում:

Ոչ ոք չպետք է ման գայ այն մայրիների տակ, որտեղ նա հանգչում է իւր հօր հետ: Նա ինձ յաճախ ասում էր, որ կցանկանար իւր ժամանակին պարկել այնտեղ. այնտեղ էլ թագեցի ես նորան ընդ միշտ:

Արի, քո ծեր մօրաքոյր Աննայի հետ միասին լալու մեր թանկագին գերեզմանի վրայ:

Եկ, Վիլեամ, շուտ եկ, ես սպասում եմ քեզ:

Յետոյ լաջորդում են ամենագեղեցիկ և ամենասուրբ արարածներից մէկի վերջին խօսքերը, այնպիսի արարածի, որպիսին միայն ծիծաղել և լացել է երբեւիցէ մեր երկրի վերայ:

Էմմայի վերջին նամակի թիւն է յուլիսի 11,
նորա մահւան նախընթաց օրը:

Էմման Վիլհելմին:

Լոնդոն, յուլիսի 14 18...թ.

Վիլհելմ, ես զգում եմ, որ պիտի մեռնեմ:
Ես այդ մասին չեմ ասել ոչ մօրաքրոջը, ոչ
բժշկին, որովհետեւ գիտեմ՝ բոլորը անօգուտ է:
Մագերայի քաղցր կլիման իմ վերքի վրայ թեթեւ
ծածկոց քցեց, բայց Լոնդոնի մառախուղները
նորից քայքայեցին նորան և նա աւելի սոսկալի
դարձաւ, քան երբ և իցէ: Ես ոյժ չունեմ այլ
ևս ապրելու և ինձ համար մեծ ցաւ է այն
միայն, որ պէտք է մեռնեմ՝ առանց քեզ վեր-
ջին անգամ տեսնելու: Իւրաքանչիւր ժամ, ա-
մեն մի րոպէ դարձնում եմ հայեացքս դէպի
քո պատկերը և նայում եմ այնպիսի ցանկու-
թեամբ, որ, կարծես, դու այժմ է գաս վեր-
ջին անգամ ինձ տեսնելու: Բայց դու չես
գալիս:

Եւ յետոյ ինձ սարսափեցնում է այն միտքը,
որ ես այսպէս յանկարծ պէտք է մեռնեմ: Ես
զգում եմ կրծքիս մէջ բորբոքւող հուրը: Ինձ

թւում է, որ ահա՛ — ահա, րոպէ առ րոպէ այն-
տեղ մի բան պիտի պայթի:

Այդ բոլորը ոչինչ, իմ Վիլհելմ, բոլոր մարդիկն
էլ մեռնում են. մեռնելը գուցէ շատ հեշտ է:

Ես իմ մէջ զգում եմ մի աստուածային ցրն-
ծութիւն, որը ինձ արիութիւն է տալիս, որը
ստիպում է ինձ հպարտանալ նրանով, որ ես
ապրել եմ, որ ես ծանօթացել եմ քեզ հետ,
սիրում էի քեզ և որ դու ինձ սիրում էիր:

Բայց սրբան եսական ենք մենք: Իմ մահը
մօտ է և ես ուրախանում եմ, ինչպէս փոքրիկ
աղջիկ, այն երջանիկ միամտութեամբ, որ դու չես
պատկանի այլ ևս ուրիշ ոչ մի կնոջ, որ դու
միայն իմս էիր և իմս էլ կմնաս մինչև վերջը:

Դու չափազանց սիրում էիր ինձ: Ես թող-
նում եմ քեզ լիշողութիւնների չափազանց հա-
րուստ գանձ, չափազանց շատ կենդանի զգաց-
մունքներ, որպէսզի դու կարողանաս պատկա-
նել ուրիշին: Այդ միտքը արբեցնում է ինձ
ուրախութեամբ: Սիրոս այնպէս ուժգին է խը-
փում, որ կարծես ուզում է ինձ անշնչացնել.
ես ձեռներով բռնում եմ իմ անբաղդ կուրծքը և
խիստ ճնշում եմ նորան ... Իմ, դէպի քո սէրն
ունեցած հաւատը այնքան անդրդուելի է, ինչ-

պէս հաւատաւ առ Աստուած:

Հայր իմ, ես կատարեցի իմ պարտքը: Վաղը ես կայցելեմ քո գերեզմանին, կըբշնչամ քո ականջին, որ քո Էմման պահեց իւր խոսքը, որ նա արժանի է քեզ, որ նա մեռնում է, չը թողնելով աշխարհում ուրիշ գոթազգ արարածներ, որոնք հալւէին աստիճանաբար այնպէս, ինչպէս և նա, բայց որոնք, կարող է պատահել, պիտի անիծէին իրենց ծնողների կեանքը:

Իմ ծնւելու մեղքը քո վերայ չի ընկնում, թանկագին հայր: Դու չգիտէիր, որ հիւանդ ես, երբ ինձ կեանք տւիր:

Տեսնում ես, թանկագին Վիլեամ, ես իրաւունք ունէի հակառակել քո սիրուն և չմասնակցելու քո յոյսերին: Մաղերայի կլիման օգնեց իմ վերքին միայն ձգձգելու, բայց չբժշկեց ինձ: Եթէ դու ամուսնանայիր ինձ հետ, մենք կունենայինք անբաղդ գաւակներ: Յաւիտենական խղճի խալթը պիտի թունաւորէր մեր սէրը, ես չի պիտի կարողանայի մտածել հօրս մասին: Դա մի դժուր կլինէր:

Բայց դու պէտք է ապրես, թանկագին Վիլեամ: Դու պէտք է երգես այս բանի վերայ, այտեղ ներքեւում, այս ճիւղի վերայ, որին

վերջին անգամ կպել է քո Էմմայի դժգոյն, լղար ձեռքը, դու պէտք է այդ մասին ինձ գրաւոր երդում տաս: Դու պէտք է երգես այն առաջին ծաղկով, որ քաղեցիր ինձ համար Բատ պուրակում, երբ առանց խօսքերի խոստովանեցիր քո սէրը: Դու պէտք է երգես այն մագերի «հուսով», որը մի անգամ համբուրեցիր դու սիրուց յափշտակած: Սոքա — լիշատակներն (реликвия) են քո Էմմայի: Երբ կհասնի քո վերջին օրը, հրամայիր թաղել դոցա քեզ հետ: Պահիր այդ բոլորը, մինչև մեր միմեանց երկընթեմ հանդիպելը:

Սիրելի Վիլեամ, դու ոչ միայն պէտք է ապրես, ոչ, դու պէտք է լցնես քո կեանքը արիական և ազնիւ մեծագործութիւններով:

Քո փալլուն միտքը կարող է ամեն տեղ գտնել քեզ համար գործունէութեան ասպարէզ: Գիտութեան մէջ, նոր և վտանգաւոր ճանապարհորդութիւններում, քաղաքականութեան ապարիզում դու կարող ես և պէտք է լինես մեծ, օգտակար և զօրաւոր:

Արա՛ այն բոլոր լաւ բաները, որ ես մենակ, որոնք մենք միասին չկարողացանք անել: Արա՛ և այն ժամանակ ես ինքս կզգամ, որ իզուր

չապրեցի, որովհետեւ իմ լիշատակը միշտ կուղեկ-
ցի քեզ՝ քո պատերազմներում, աշխատանքնե-
րում և հոգսերում: Ես մեռնում եմ այն հպարտ
գիտակցութեամբ, որ քեզ թեւադրեցի բարձր
և ազնիւ զգացմունքներ, որ քեզ մղեցի դէպի
վեհ և օգտակար գործունէութիւն:

Երբ քո միտքը առանձնասենեակի լռութեան
մէջ կ'ընթանայ աշխարհի ծածկած գաղտնիք-
ներում և կ'զգանի մարդկանց համար բարձր
ճշմարտութիւններ, լիշեր, որ քո Էմմայի ըստ-
ւերը քեզ մօտ է, որ նա նայում է քեզ և
զւարճանում է:

Երբ դու կկուլես աղատութեան համար, քա-
ղաքական ձգտումների բոցերի մէջ, երբ քո վե-
րայ ուղղած կլինին ահագին քանակութեամբ,
ցնծութեամբ վառւող աչքեր, միտք բեր, որ
քո Էմմայի ուրւականը հէնց այդտեղ, ամբոխի
մէջն է, որ նա հրճւած ծափահարում է քո
տրիումֆը * և ուրախութիւնից լալիս է:

✓ Եւ եթէ դու կ'մտնես աղքատ խրճիթը և

* Τριუმφ — triumphus. յաղթող հերօսի
հանդիսաւոր գնացք:

Ծանօթ. Լարգ.

կարբէս տանջողի արցունքները, կամ եթէ դու
ամբողջովին կնւիրես քեզ աղքատութեան և
թշւառութեան վշտալի հարցերի մշակմանը,
այն ժամանակ իմացիր, որ ես քեզ տեսնում եմ,
որ ես լսում եմ քեզ, որ ես լալիս եմ և ուրա-
խանում քեզ հետ միասին:

Եւ երբ դու կդիտես բնութեան գեղեցկու-
թիւնը, որով մենք այնքան յաճախ զւարճանում
էինք, կապոյտ փայլը ջինջ երկնքի, լուսնի թախ-
ծալի լոյսը, անտառի խորհրդաւոր լռութիւնը,
առւակի ալիքների ծփանքը կամ ծովի մռնչիւնը,
իմացիր, որ ես քո կողքին եմ, անտեսանելի
և լռիկ, բայց տանջւած ցանկութիւններից ու
բաղդից ...

Նւիրիր ինձ քո լաւ գործերը, քո սուրբ
սկզբունքները, քո սուրբ ոգևորութիւնը, քո
Էմման կ'հպարտանայ դորանով:

Նա սպասում է քեզ, այո՛, նա սպասում է,
որպէս զի սեղմի քեզ յաւիտենական գրկում
իւր սրտի:

Քո Էմման բաժանւում է քեզանից և սպա-
սում է քեզ մի այլ աշխարհում:

Մնաս բարեւ. Եղիշ-Մեծ, եղիր օգտակար և
ոգի ներշնչող տանջողներին տանջանքի մէջ:



Ապրիլի և սիրիլի ինչ, ինչպէս եւս, որ յաւիտեան
պիտի սիրեմ քեզ:

Նամակի վերջում կարելի էր նշմարել հետե-
ւալ տողերը, որ գրւած էին դողդոջիւն ձեռքով:
«Երգւում եմ, որ իմ հմմա, ես պիտի ապ-
րեմ: Երգւում եմ քեզ, ես օգտակար կլինեմ,
եւ կգործեմ: Երգւում եմ այս բանում քո
պիտի անուշով»:

Վիլեամ.

Վեհա, հոկտեմբերի 27.

Էմմայի և Վիլեամի նամակները ստանալուց
յետոյ դեռ երկար ժամանակ ես սպասում էի
աւելի հեռաւոր տեղեկութիւնների իմ անբաղդ
բարեկամի մասին, բայց իզուր:

Տասը տարին արդէն անցել է և ես իրաւուն-
դնեմ հրապարակ հանել այդ ջերմ սիրո-
հարական նամակները երկու ազնիւների ա-
րարածներից, որոնց երբ և իցէ ես ճանա-
չել եմ:

Վճռելով այս եւս հախճարով քանի անգ...



գրեցի Անգլիա-Վիլեամին և
Մենա մօրաբերոջը. բայց իմ նա-
մակներն անպատասխան մնացին:

Վիլեամի նշանակած ժամանակն ան-
ցել է արդեն և դուրս համար ես
իրաւունք ունեմ հրատարակել այն
թերթերը, որ նա ուղարկել էր
ինձ:

Ես հաստատ համոզւած եմ, որ
այդ նամակների ընթերցումը ոչ
ոքի չի վնասի, այլ շատերին կա-
րող նոյն իսկ Օգոստ բերել:

Վ Ե Ր Ձ

1. Описание
 2. Описание
 3. Описание
 4. Описание
 5. Описание
 6. Описание
 7. Описание
 8. Описание
 9. Описание
 10. Описание
 11. Описание
 12. Описание
 13. Описание
 14. Описание
 15. Описание
 16. Описание
 17. Описание
 18. Описание
 19. Описание
 20. Описание
 21. Описание
 22. Описание
 23. Описание
 24. Описание
 25. Описание
 26. Описание
 27. Описание
 28. Описание
 29. Описание
 30. Описание
 31. Описание
 32. Описание
 33. Описание
 34. Описание
 35. Описание
 36. Описание
 37. Описание
 38. Описание
 39. Описание
 40. Описание
 41. Описание
 42. Описание
 43. Описание
 44. Описание
 45. Описание
 46. Описание
 47. Описание
 48. Описание
 49. Описание
 50. Описание
 51. Описание
 52. Описание
 53. Описание
 54. Описание
 55. Описание
 56. Описание
 57. Описание
 58. Описание
 59. Описание
 60. Описание
 61. Описание
 62. Описание
 63. Описание
 64. Описание
 65. Описание
 66. Описание
 67. Описание
 68. Описание
 69. Описание
 70. Описание
 71. Описание
 72. Описание
 73. Описание
 74. Описание
 75. Описание
 76. Описание
 77. Описание
 78. Описание
 79. Описание
 80. Описание
 81. Описание
 82. Описание
 83. Описание
 84. Описание
 85. Описание
 86. Описание
 87. Описание
 88. Описание
 89. Описание
 90. Описание
 91. Описание
 92. Описание
 93. Описание
 94. Описание
 95. Описание
 96. Описание
 97. Описание
 98. Описание
 99. Описание
 100. Описание

h. \$

2751

2

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1881162

